




ՀԶՄԻԱԾԻՆ

1969-Է-Ը

ՌՆԺԸ
ԻԵ ՏԱՐԻ

Յուլիս—Օգոստոս

28

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Է-Ը

1969



ՊԱ-11.760

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—խաղաղությունը Աստուծո կամքն է	3
Հաղորդագրություն	6
Հաղորդագրություն	7
Հաղորդագրություն	8
ՆԱՐԵԿ ՎՐԴ. ՇԱՔԱՐՅԱՆ—Ամենայն Հայոց Հայրապետը Բեռլինի խաղաղության համաշխարհային համագումարում	10
ՆԱՐԵԿ ՎՐԴ. ՇԱՔԱՐՅԱՆ, ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆ—Ժողովուրդների միջև համագործակցության և խաղաղության ամրապնդման համար կայացած ՍՍՀՄ բոլոր կրոնների ներկայացուցիչների համաժողովը Զագորսկում	15
ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ	40
Վեհափառ Հայրապետի ողջույնի գիրը ազգային հերոս Սողոմոն Թեմիսյանի հուշարձանի բացման առթիվ	43
ԻՍԱՀԱԿ Ծ. ՎՐԴ. ՂԱԶԱՐՅԱՆ—Գրախոսական	44
Մաղախա արհեստիկության Օրմանյանի նամակներից	47
Տ. ՄԵՍՐՈՊ ՔԶՆ. ԲՆՆԼԻՅԱՆ—Տ. Ստեփաննոս արհեստիկության Հովակիմյան	49
Հ. Ս. ԱՆԱՍՏԱՆ—Վարդան Այգեկցին որպես համեմատական գաղափարախոս	52
ՋՈՒ. Ա. ԹԱՄԱՆՅԱՆ—Ղերմի սուրբ Խաչ վանքը	59
Ո. Ս. ՆԿԱՆՅԱՆ—Թաղավարեցի Գրիգոր Բն. Դադյանցի հայերեն ձեռագրերի հավաքումը	65
Գ. Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ—Աշխատակես կատիվեցին հառաքի	67
Է. Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ—Միջնադարյան խրատների հարցի շուրջը	76
Մանենագիտություն «Արարատ» ամսագրի	81

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱՇԻՆ

«ԷՋՄԻԱՇԻՆ» ԱՄՄԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 1/VII 1969 թ.: Ստորագրված է տպագրության 25/IX 1969 թ.:
Տպագրական 8 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 471

Մալր Աթոռ և. Էջմիածնի տպարան, 1969 թ.



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՈՒԾՈՒ ԿԱՄՔՆ Է

Հունիս և հուլիս ամիսները եղան խաղաղության պաշտպանության նվիրված աշխատանքների ու համաժողովների ամիսներ, որոնց իր մասնակցությունը բերեց նաև մեր եկեղեցին։

Հունիսի 21—24 օրերին Գերմանական Դեմոկրատական Հանրապետության մայրաքաղաք Բեռլինում տեղի ունեցավ համաշխարհային խաղաղության համագումար և 25—26-ին հանդիսավոր իրադրության մեջ նշվեց համաշխարհային խաղաղության շարժման ստեղծման 20-ամյակը։

Այս համագումարում հայ եկեղեցու պատգամավորությանը բարեհաճել էր գլխավորել Ամենայն Հայոց Հայրապետը և իր ողջույնի խոսքում նշել, որ «Մենք այստեղ ենք գտնվում որովհետև վտանգված է աշխարհի խաղաղությունը։ Միասնական կերպով պետք է պաշտպանենք բոլոր երկրների, բոլոր մարդկանց կյանքը»։

Հանուն խաղաղության պաշտպանության այսքան տարիների սրտագին աշխատանքներից հետո, դեռևս գեղեցիկ ու ցանկալի երազ է մնում աշխարհում կայուն ու երկարատև խաղաղության պաշտպանության հարցը։

Տարբեր երկրներից Բեռլինում հավաքված, բարի կամքի տեր միլիոնավոր մարդկանց հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներ, արտահայտելով երկրագնդի խաղաղասեր ժողովուրդների ամենանվիրական խոհերն ու զգացմունքները, հայացքներն ու իդեալները, միասիրտ ու միախոհ պահանջում էին վերջ տալ աշխարհի մի

շարք երկրներում բռնկված հրեշավոր սպառնալիցությունների խելակորույս մրցավազքին, իրագործել ընդհանուր և լրիվ զինաթափում։

Հանուն խաղաղության մղված պայքարում պետք է տիրական ու վճռական հնչի մանավանդ եկեղեցու ձայնը։ Եկեղեցին խաղաղության նավահանգիստ է, իսկ հոգեվորականությունը՝ իր պարտքի ու կոչումի թելադրանքով՝ խաղաղության մարտիկ։ «Մեր պարտքն է,—ասել է Հայոց Հայրապետը,—աղոթել և գործել մարդկանց հոգիների խաղաղեցման, ժողովուրդների եղբայրության ու աշխարհի խաղաղության համար»։ Խաղաղությունը Աստուծո կամքն է և եկեղեցու մեծագույն առաքելությունը այս աշխարհի վրա։ «Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեցցին»։

Բեռլինի խաղաղության վեհաժողովը մեր ժամանակի կարևոր իրադարձությունն է հանդիսանում, ուր քննության էր դրված արդիականության ամենահրատապ հարցերից մեկը՝ խաղաղության պաշտպանությունը ողջ աշխարհում։

Համագումարը, ինչպես երևում է այս առթիվ հրատարակված հաղորդագրությունից, վճռական ու նոր ճանապարհներ է որոնում աշխարհում կայուն խաղաղության հասնելու համար։

Այսօր աշխարհը անհամդարտ ու տուական տագնապի մեջ պահող տխուր երկվորյակներ կան, ինչպիսիք են նյութապաշտությունը, գաղութակալությունը՝ իր հին ու նոր դրսևորումներով, ազգային և ընկերա-

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

**ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՈՒԾՈՒ ԿԱՄՔՆ Է

Հունիս և հուլիս ամիսները եղան խաղաղության պաշտպանության նվիրված աշխատանքների ու համաժողովների ամիսներ, որոնց իր մասնակցությունը բերեց մեծ մեծ եկեղեցին:

Հունիսի 21—24 օրերին Գերմանական Դեմոկրատական Հանրապետության մայրաքաղաք Բեռլինում տեղի ունեցավ համաշխարհային խաղաղության համագումար և 25—26-ին հանդիսավոր իրադրության մեջ նշվեց համաշխարհային խաղաղության շարժման ստեղծման 20-ամյակը:

Այս համագումարում հայ եկեղեցու պատգամավորությանը բարեհաճել էր գլխավորել Ամենայն Հայոց Հայրապետը և իր ողջույնի խոսքում նշել, որ **«Մենք այստեղ ենք գտնվում որովհետև վտանգված է աշխարհի խաղաղությունը: Միասնական կերպով պետք է պաշտպանենք բոլոր երկրների, բոլոր մարդկանց կյանքը»:**

Հանուն խաղաղության պաշտպանության այսքան տարիների սրտագին աշխատանքներից հետո, դեռևս գեղեցիկ ու ցանկալի երազ է մնում աշխարհում կայուն ու երկարատև խաղաղության պաշտպանության հարցը:

Տարբեր երկրներից Բեռլինում հավաքված, բարի կամքի տեր միլիոնավոր մարդկանց հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներ, արտահայտելով երկրագնդի խաղաղասեր ժողովուրդների ամենանվիրական խոհերն ու զգացմունքները, հայացքներն ու իղձերը, միասիրտ ու միախոհ պահանջում էին վերջ տալ աշխարհի մի

շաղթ երկրներում բռնկված հրեշավոր սպառնալիցությունների խելակորույս մրցավազքին, իրագործել ընդհանուր և լրիվ զինաթափում:

Հանուն խաղաղության մղված պայքարում պետք է տիրական ու վճռական հնչի մանավանդ եկեղեցու ձայնը: Եկեղեցին խաղաղության նավահանգիստ է, իսկ հոգեվորականությունը՝ իր պարտքի ու կոչումի թելադրանքով՝ խաղաղության մարտիկ. **«Մեր պարտքն է,—ասել է Հայոց Հայրապետը,—աղոթել և գործել մարդկանց հոգիների խաղաղեցման, ժողովուրդների եղբայրության ու աշխարհի խաղաղության համար»:**

Խաղաղությունը Աստուծո կամքն է և եկեղեցու մեծագույն առաքելությունը այս աշխարհի վրա: «Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեացին»:

Բեռլինի խաղաղության վեհաժողովը մեր ժամանակի կարևոր իրադարձությունն է հանդիսանում, ուր քննության էր դրված արդիականության ամենահրատապ հարցերից մեկը՝ խաղաղության պաշտպանությունը ողջ աշխարհում:

Համագումարը, ինչպես երևում է այս առթիվ հրատարակված հաղորդագրությունից, վճռական ու նոր ճանապարհներ է որոնում աշխարհում կայուն խաղաղության հասնելու համար:

Այսօր աշխարհը անհանդարտ ու տևական տագնապի մեջ պահող տխուր երեվոյթներ կան, ինչպիսիք են նյութապաշտությունը, գաղութակալությունը՝ իր հին ու նոր դրսևորումներով, ազգային և ընկերա-

յին անարդարությունները, ցեղային խտրականությունը, պատերազմը Վիետնամում և բաղաբալան լարվածությունը՝ Մերձավոր Արևելքում:

«Պատերազմը, — նշել է Իր ելույթում Հայոց Հայրապետը, — բոլոր ոճիրների համագումարն է»:

Հայոց Հայրապետը Բեռլինի խաղաղության միջազգային ամբիոնից մի անգամ ևս խոսել է նաև վերոհիշյալ մտածումների լույսի տակ, Ի դարի առաջին ցեղասպանության՝ հայ ժողովրդի ցեղասպանության մասին, որը անպատիժ մնալով դուռ բացավ հետագա նման ու զարհուրելի այլ ցեղասպանությունների:

Հուլիսի 1—4-ը Ջագորսկում, Մոսկվայի մոտ, ռուսական վանքում, բացվեց նաև ՄՄՀՄ բոլոր եկեղեցիների և կրոնների ներկայացուցիչների համագումարը, աստվածային պատգամների լույսի տակ քննության առնելու ժողովուրդների միջև համագործակցության և աշխարհի խաղաղության ամրապնդման գործում եկեղեցիների և այլ կրոնական կազմակերպությունների մասնակցության հարցը:

Հայոց Հայրապետը սույն վեհաժողովի կազմակերպիչներից մեկն էր, համայն Ռուսիայի Ս. Ալեքսի սրբազան պատրիարքի հետ և բարեհաճել էր նույնպես անձամբ գլխավորել հայ եկեղեցու բազմանդամ պատվիրակությանը:

Հայոց Հայրապետի հաստատ համոզումով այսօր քրիստոնեական եկեղեցիներն ու բոլոր կրոնական կազմակերպությունները նույնպես պատասխանատվություն են կրում և վճռական բաժին ունեն աշխարհի խաղաղության ամրապնդման գործում:

Արդարև, բոլոր կրոնների նվիրական ու բարձրագույն պարտականությունն է՝ հնարավոր միջոցներով պաշտպանել խաղաղության դատը, որ Աստուծո կամքն է ու պատգամը, և ցույց տալ երկյուղի ու անստուգության մեջ տառապող մարդկությանը՝ փրկության, խաղաղության ճանապարհը:

Այս ոգով մխիթարական է արձանագրել, որ Ջագորսկում, խաղաղության համաժողովում, հնչել է Սովետական Միության, Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի, Եվրոպայի, Մերձավոր Արևելքի 44 երկրներից ժամանած 170 պատգամավորների ձայնը, պատգամավորներ, որոնք իրենց բարոյական, մարդասիրական պարտքն են համարել խաղաղության, ճշմարտության, արդարության, մարդկային բանականության, ժողովուրդների վեհիրավության և ազատության պաշտպանության համար

միացնել իրենց ջանքերն ու աղոթքները, պայքարն ու վճռական կամքը:

Խաղաղության պաշտպանության հարցը եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների սրբազան առաքելությունն է, նրանց հավատքի և խղճի բարոյական պարտքը:

Ջագորսկի խաղաղության վեհաժողովի նպատակն էր՝ որոնել մարդկային կյանքի առավել կատարյալ, առավել գեղեցիկ ու արդար ձևերը՝ արմատախիլ անելու համար չարիքը, որպեսզի բոլոր մարդիկ ապրեն խաղաղ ու բարօր՝ Աստուծո բարիքներով՝ գեղեցկացած նույն երկնքի տակ, որպես եղբայր, որպես ընկեր, որպես բարեկամ:

Համագումարի բարձր ամբիոնից հնչել են նաև երկու բարի վկայություններ մեր եկեղեցու և ժողովրդի համար:

Համագումարը մասնավոր կարևորությամբ արձանագրել է՝ 1952 թվականից սկսած, այսինքն՝ նոր շրջանում, խաղաղության պաշտպանության շարժման առաջին իսկ օրերից, Մայր Աթոռ ս. Էջմիածնի ղեկավարությամբ, հայ եկեղեցու գործադրած սրտագին ջանքերը՝ հանուն խաղաղության պաշտպանության, ընդհանրահիշատակ Ս. Տ. Գևորգ Զ-ի օրերից և Ն. Ս. Օծություն Ս. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի ժամանակ:

Մխիթարական էր հաստատել, որ համագումարին մասնակցող ոչ հայ պատգամավորներ ևս իրենց ելույթներում դատապարտում էին 1915 թվականի հայկական ցեղասպանությունը, որը անպատիժ մնալով գաղափարապես և գործնականորեն ճանապարհ է բացել նոր ցեղասպանությունների:

Հաճելի է արձանագրել, որ համագումարում արտասանված բոլոր ելույթներում իշխում էր եղբայրական անկեղծ ոգին, մտածումի ու կամքի ազատությունը: Բոլոր պատգամավորները օրակարգի հարցերին մոտեցել են որպես հավատավոր հոգիներ, որպես խաղաղության ջերմ կողմնակիցներ, իրավ հայրենասերներ և ժողովուրդների եղբայրության ու եկեղեցիների համագործակցության տրիբուններ:

Համագումարը նշել է միաժամանակ այն միջոցներն ու հիմնական պարտականությունները, որոնցով հնարավոր կլինի կանխել նոր պատերազմի սպառնալիքն ու վտանգը:

«Մեր բոլորիս նպատակը սուրբ է, հավաքվելով այստեղ միասին աղոթելու և միասին որոնելու համար այն բոլոր ճանապարհները, այն բոլոր միջոցառումները, որոնք պետք է օգնեն մարդկանց, ժողովուրդներին և պետություններին, որպեսզի տևապես, ամուրձ և անխորտակելի մնա

խաղաղությունը աշխարհում և եղբայրությունը բոլոր ազգերի միջև՝ առանց որևէ խտրականության»,— հայտարարել է Հայոց Հայրապետը հուլիսի 1-ին՝ վեհաժողովում կարդացած Իր ողջույնի խոսքի մեջ:

Պատերազմը ոճիր է Աստուծո հետ, քաղաքակրթության դեմ, մարդկության վսեմ ու նվիրական իդեալների դեմ:

Խաղաղությունը կյանք է, ստեղծագործ աշխատանք, կառուցում, աղոթք ու երազ:

Խաղաղությունը մարդկության պայծառ ապագան է: Դրա համար մարդկությունը կարող է և պետք է ապրի առանց պատերազմների: Այսօր աշխարհում կան հզոր ուժեր, պատերազմ նյութող սև ուժերից ավելի մեծ, որոնք կարող են սանձահարել, զսպել պատերազմի հրձիգներին, վճռականորեն փակել նոր արհավիրքների և ողբերգությանն ճանապարհները: Բավական չէ միայն աղոթել խաղաղության համար:

Խաղաղությունը պետք է նվաճել համատեղ, կազմակերպված աշխատանքով ու պայքարով. «բոլորն յափշտակեսցեն զնա»:


Խաղաղության պաշտպանության համար մղված պայքարում Բելլիճի և Ջագորսկի համաժողովներում ընդունված որոշումներն ու բանաձևերը և պայքարի միջոցները, վստահ ենք, թե վճռական դեր կկատարեն, նոր ու ազդեցիկ ազդակներ կհանդիսանան ապագա համատեղ գործունեության և համագործակցության բարի կամքի տեր միլիոնավոր մարդկանց համար՝ ի պաշտպանություն աշխարհի խաղաղության սրբազան դատի:

Դժվար ու փշալից է խաղաղության ճանապարհը, բայց ոչ աննվաճելի և անկարելի:

Համոզված ենք, որ խաղաղությունը կը հաղթի պատերազմին:

Խաղաղությունը Աստուծո կամքն է:





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա.-ը սույն թվի հունիսի 21—28-ին մասնակցեց Խաղաղության համաշխարհային համագումարին, Գերմանական Դեմոկրատական Հանրապետության մայրաքաղաք Բեռլինում:

Համագումարին մասնակցող 102 երկրներից եկած հոգևորականների հանձնաժողովում Հայոց Հայրապետը հանդես եկավ Իր խոսքով՝ ի պաշտպանություն աշխարհի խաղաղության դատին, ոգեկոչելով՝ հիշատակը երկու միլիոն հայ քրիստոնյաների, որոնք Արևմտյան Հայաստանում 1915 թվին զոհը եղան մեր դարի առաջին ցեղասպանության:

Վեհափառ Հայրապետին ողբեկցում էր Գեղարդա վանքի վանահայր հոգեշնորհ տ. Նարեկ վարդապետ Ծաքարյանը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ

9 հուլիս 1969 թ.,
Ա. Էջմիածին





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի հրավերով հուլիսի 7—12-ը Մայր Աթոռիս հյուր եղան արաքական երկրներից բարձրաստիճան կրոնապետներ ու հասարակական գործիչներ, որոնք մասնակցել էին հուլիսի 1—4-ը Ջազոբսկում կայացած ՍՍՀՄ քրիստոնեական եկեղեցիների և մահմեդական, հրեական ու բուդդայական կրոնական կազմակերպությունների համագումարին, որպես հյուրեր:

Մայր Աթոռիս հյուրերն էին.

Ալժիրից՝ կրոնից նախարար և պատվիրակության ղեկավար, Նորին Գերազանցություն Լարբի Սաադունին, մուսուլմանների գերագույն հոգևոր պետ Շեյխ Օթելլին, կրոնից նախարարության բարձրաստիճան պաշտոնյաներ՝ տիարք Բու Աբդելեյ Մահդին և Աբդուլ Մեջիդը:

Անտիոքից՝ օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը, հանձինս Տիրի և Սիդոնի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն Պավել Խուրիի, Հավրանի և Մոնտիարաբի (Սիրիա) միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն Բաաիլիոս Սամախայի և հոգեշնորհ Ռոմանոս վարդապետ Ժահարի (Տրիպոլի):

Լիբանանից՝ իսլամ գերագույն օրենսդիր խորհրդի անդամ և պատվիրակության ղեկավար, մեծահարգ տիար Մուսթաֆա Մանսուրը, իսլամ գերագույն օրենսդիր խորհրդի անդամ տիար Ուաֆիկ Հյ-Կասսարը և արաքական «Ալ-Շաաք» թերթի գլխավոր խմբագիր տիար Ամին Դուդանը:

Սիրիայից՝ իսլամ գերագույն կրոնապետ Շեյխ Ահմեդ Քաֆթարուն իր շքավանքով:

Հյուրերին ողնկցում էին Միջին Ասիայի մահմեդականների կրոնական գերագույն վարչության անդամներ պրն. պրն. Ամին Ահմեդշինը, Յուսուֆ Շաքիրովը և Ուամանջան Ռահիմջանովը:

Բարձրաստիճան հյուրերը այցելեցին ս. Էջմիածնի Մայր տաճարը, ս. Հռիփսիմեի, ս. Գալանեի վանքերը, Ջվարթնոցի ավերակները, Գառնի, Գեղարդ, Սևան, ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը, Հայաստանի ժողովրդական տնտեսության ցուցահանդեսը, դիտեցին Մեծ եղեռնի

հուշարձանը և ներկա եղան Վեհարանի դահլիճում իրենց պատվին կազմակերպված հայկական հոգևոր և ժողովրդական երաժշտության համերգին:

Նորին Սրբությունը հուլիսի 9-ին, ի պատիվ հյուրերի, սվեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա եղան նաև հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ մեծահարգ տիար Կ. Դավաթյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները և էջմիածնի միաբանները:

Հինգշաբթի, հուլիսի 10-ի առավոտյան, բարձրաստիճան հյուրերը, Նորին Սրբություն Վազգեն Ա Հայրապետի գլխավորությամբ, բարեկամական այցելություն սվեցին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ, Նորին Գերագանցություն Հովհաննես Բաղդասարյանին: Փոխ-նախագահը ջերմորեն ողջունեց հյուրերին և հաջողություն մաղթեց կրոնական կազմակերպություններին, աշխարհի խաղաղության և ժողովուրդների բարեկամության համար նրանց տարած շնորհակալ աշխատանքին: Ծնորհակալության ջերմ խոսքերով հանդես եկան Նորին Գերաշնորհություն միտրոպոլիտ Պավել Խուրին և Ալժիրի կրոնից մինիստր պրն. Լարբի Սաադունին:

Հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից, ուրբաթ, հուլիսի 11-ին, Անտիոքի պատվիրակությունը մեկնեց Օդեսա—Կիև, իսկ շաբաթ, հուլիսի 12-ի երեկոյան, մյուս պատվիրակությունները մեկնեցին Տաշքենդ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ

16 հուլիս 1969 թ.,

Ս. Էջմիածին





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲԵՌԼԻՆԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Հունիսի 21—24-ը Գերմանական Դեմոկրատական Հանրապետության մայրաքաղաք Բեռլինում տեղի ունեցավ համաշխարհային Խաղաղության համագումարը, իսկ հունիսի 25-ին և 26-ին նշվեց համաշխարհային խաղաղության շարժման ստեղծման 20-ամյա հոբելյանը:

Խաղաղության համագումարին մասնակցելու հրավեր էր ստացել նաև Նորին Ս. Օծություն **Տ. Տ. Վազգեն Ա. կաթողիկոսը:**

Հունիսի 18-ին, չորեքշաբթի առավոտյան, Վեհափառ Հայրապետին ողջերթ մաղթելու համար Երևանի օդանավակայանն էին եկել Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոններությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները: Հայոց Հայրապետին բարի ճանապարհ են մաղթում նաև Հայկական ՍՍՀ Միևիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանն ու տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Վեհափառ Հայրապետին դեպի Բեռլին ուղևորության ժամանակ ողեկցում էր ս. Գեղարդյա վանքի վանահայր Նարեկ վրդ. Ծաքարյանը:

Երեք և կես ժամ հետո Վեհափառ Հայրապետը Մոսկվայում է: Նրան դիմավորում են Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ տ. Պարզև եպս. Գևորգյանը, թեմական խորհրդի անդամները և ՍՍՀՄ Միևիստրների սովետին առընթեր կրոնական

գործերի խորհրդի աշխատակից Ա. Ֆ. Բուկարինը:

Հունիսի 19-ին Մոսկվայի Ծերեմետևոյի օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհում են տ. Պարզև եպիսկոպոսը և Ա. Ֆ. Բուկարինը:

Վեհափառ Հայրապետը Բեռլին է հասնում երկու և կես ժամվա թռիչքից հետո: ԳԴՀ-ի մայրաքաղաքում հայոց եկեղեցու գերագույն պետին առանձին կարևորությանը դիմավորում են ԳԴՀ-ի Խաղաղության պաշտպանության կոմիտեի քարտուղար պրն. Ցենկերը և այլ անդամներ ու թղթակիցներ: Ողջույնի և բարիգալստյան ջերմ խոսքերից հետո, Վեհափառ Հայրապետը օդանավակայանի հանգստի սենյակում բարեհաճում է պատասխանել թղթակիցների հարցերին:

Բեռլինում Ամենայն Հայոց Հայրապետը հյուրընկալվում է մայրաքաղաքի շքեղ հյուրանոց «Բեռոլինա»-ի հարկաբաժիններից մեկում:

Բեռլինը այս օրերին տոնական տեսք ուներ: Բոլոր գլխավոր պողոտաների եզրերին և նշանավոր հյուրանոցների ճակատներին ծածանվում էին դրոշակներ, որոնց վրա աչքի էր ընկնում խաղաղության աղավնին:

Հունիսի 21-ին, շաբաթ առավոտյան ժամը 9.30-ին, «Ծաղրոտֆորում» կոչված մեծ դահլիճում իր աշխատանքն է սկսում Խա-



Խաղաղության համաշխարհային համագումարը հեղինակ

դադարող համաշխարհային համագումարը, որին ներկա են լինում 56 միջազգային և 520 ազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ ու գործիչներ, 101 երկրներից: Պատգամավորների ընդհանուր թիվը կազմում էր 1100 հոգի: Բացի համագումարի իսկական մասնակիցներից, ներկա էին նաև բազմաթիվ հյուրեր և թղթակիցներ:

հային համագումարը աշխատում է հինգ հանձնաժողովներում:

Վեհափառ Հայրապետը ներկա է լինում երրորդ՝ Մերձավոր Արևելքի հանձնաժողովին:

Հունիսի 23-ին իրենց եզրափակիչ նիստերում հանձնաժողովները պատրաստել էին իրենց հաշվետվությունները՝ ներկայացնելու հաջորդ օրվա լիագումար նիստին:



Բեռլինի խաղաղության համաշխարհային համագումարում հայ և ռուս եկեղեցիների պատվիրակությունները

Նիստը երկարատև ծափողջույնների տակ բացվում է Հնդկաստանի պատվիրակության ղեկավարի կողմից: Ելույթները թարգմանվում էին տարբեր լեզուներով. ռուսերեն, գերմաներեն, անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն:

Բացման նիստում առաջինն ընթերցվում է ԳԴՀ-ի նախագահ Վալտեր Ուլբրիխտի ուղերձը, ապա պաշտոնական մյուս ուղերձները՝ Սովետական Միության ղեկավարներ Լեոնիդ Բրեժնևի և Ալեքսեյ Կոսիգինի, Վիետնամի Ռեզաֆոխական կառավարության, արաբական երկրների, Հնդկաստանի, Գվինեայի և մյուս երկրների վարչապետների:

Հունիսի 21-ի օրվա երկրորդ կեսից մինչև 23-ի գիշերը խաղաղության համաշխար-

հուն օրվա երկրորդ կեսին, բացի վերոհիշյալ հինգ հանձնաժողովներից, կազմվում է նաև հատուկ ենթահանձնաժողով, որը բաղկացած էր տարբեր երկրներից եկած, համագումարին մասնակցող շուրջ 120 հոգևորականներից և կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներից՝ քրիստոնյաներ, մահմեդականներ, բուդդայականներ, մոլսիսականներ, հինդուսներ և այլ կրոնի ներկայացուցիչներ: Այս հանձնաժողովում Վեհափառ Հայրապետը ելույթ է ունենում և աւսում է.

Սիրելի եղբայրներ.

Մենք բոլորս հավաքվել ենք այստեղ՝ խաղաղության այս ժողովին՝ հանուն Աստուծո, որ Տերն է խաղաղության՝ Փրկիչը մեր:

Մենք այստեղ ենք գտնվում, որովհետև վտանգված է աշխարհի խաղաղությունը: Միասնական կերպով պետք է պաշտպանենք բոլոր երկրների, բոլոր մարդկանց կյանքը:

Եթե իրոք մենք մեզ ճանաչում ենք որպես Աստուծո նորդիներ, ապա ուրեմն խաղաղության եղբայրներ ենք, խաղաղության սպասավորներ: Մեր պարտքը պետք է լինի աղոթել և գործել մարդկանց հոգիների խաղաղեցման, ժողովուրդների եղբայրացության և մարդկության խաղաղության համար: Ահա թե ինչու Մենք Մեզ գտնում ենք երջանիկ՝ մասնակցելով այս համագումարին, որտեղ համախմբվել են բոլոր ազգությունների, բոլոր աշխարհամասերի պատասխանատու ներկայացուցիչներ, բարի կամքի տեր մարդիկ:

Մարդկանց և ժողովուրդների միջև խաղաղություն հաստատելու և այն ամրապնդելու համար պետք է արմատախիլ անել քաղաքական, ընկերային և տնտեսական այն դրդապատճառները, որոնք ծնունդ են տալիս թշվառությունների, շահագործման, անարդարությունների, ատելության և, նույնիսկ, արյունահեղ պատերազմների:

Պետք է կարենալ հստակորեն և քաջությամբ դիտել երևույթները՝ իմանալու համար, որ դժբախտությունների ներկա ձևերն են հանդիսանում գաղութակալությունը, ռապիդը, Մերձավոր Արևելքի ծանրակշիռ տագնապը և, մանավանդ, Վիետնամի զարհուրելի պատերազմը: Պատերազմների ընթացքում միշտ էլ հնարավոր են դառնում բոլոր տեսակի անարդարությունները, երեվակալելի բոլոր ոճիրները: Պատերազմը բոլոր ոճիրների համագումարն է: Այսպես է, որ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, 1915 թվականին, Արևմտյան Հայաստանում կայսերական Թուրքիայի կառավարության հրամանով տեղահան եղան ու բնաջնջվեցին շուրջ երկու միլիոն հայեր: Դա մեր դարաշրջանի առաջին ցեղասպանությունն էր: Ձեզ հայտնի է, որ համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքում տեղի ունեցան առավել ողբերգական իրադարձություններ: Մենք կամենում ենք, որ նման ոճիրներ այլևս երբեք չկրկնվեն երկրի վրա:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու անունից ի սրտե ողջունում եմ Ձեզ բոլորիդ, որ բարին Աստված լինի մեզ օգնական, որպեսզի կատարվի Իր տերունական կամքը, խաղաղություն լինի երկրի վրա և բարի կամեցողություն՝ մարդկանց միջև:

Հունիսի 24-ին, երեքշաբթի, տեղի է ունենում համագումարի եզրափակիչ նիստը:

Այստեղ կարդացվում են համագումարի հինգ հանձնաժողովների զեկուցագրերն ու եզրակացությունները, որոնք պատգամավորների կողմից ընդունվում են ծափող-ջուլններով:

Խաղաղության լսարանի այս հսկա դահլիճում մեծ խանդավառություն է ստեղծվում, երբ նախագահը կարդում և քվեարկության է դնում Խաղաղության համաշխարհային համագումարի կոչը՝ ուղղված աշխարհի ժողովուրդներին և պետություններին, եկեղեցիներին և կրոնական հաստատություններին, գիտնականներին և արվեստագետներին ու բոլոր բարի կամքի տեր մարդկանց:

Հունիսի 25-ին և 26-ին տեղի է ունենում համաշխարհային խաղաղության շարժման 20-ամյա հրեշտակական նստաշրջանը:

Համաշխարհային խաղաղության շարժումը ծնունդ է առել մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ միջազգային հորիզոնում սկսվել էր ուրվագծվել պատերազմների վրտանգը, ատոմային զենքի սարսափը: Պատահական չէր, որ 1949 թվականի Ստոկհոլմի պատմական կոչի շուրջ անմիջապես համախմբվեցին աշխարհի բոլոր խաղաղասեր ուժերն ու կազմակերպությունները, պետություններն ու անհատները: Հայաստանյայց առաքելական եկեղեցին ևս ողջունեց խաղաղության շարժման այդ հիմնադրումը: Այսօր խաղաղության պայքարի մարդիկ երախտագիտության հիշում են շարժման հիմնադիր, ֆրանսիացի հայտնի գիտնական ու հասարակական գործիչ, հանգուցյալ **Ֆ. Ժյոիո Կյուրիի** անունը: Համագումարի այդ հրեշտակական նիստում իրենց գեղեցիկ ու բովանդակալից ճառերով հանդես են եկել մեծ գրող Ն. Տիխոնովը (ՍՄՀՄ), նշանավոր հասարակական գործիչ ֆրանսուհի Դաքսել Պյունը, խաղաղության շարժման հիմնադրի թողը՝ Է. Կյուրին, և ուրիշներ: Այդ նիստի վերջում միաձայնությամբ ընդունվել է հայտարարություն-կոչ՝ ուղղված պետություններին և ժողովուրդներին՝ վստահ խաղաղության պահպանման և ամրապնդման ամբողջ աշխարհում:

Հունիսի 26-ի Խաղաղության համաշխարհային համագումարի հրեշտակական և վերջին նիստում տեղի է ունենում նաև նախագահության վերընտրություններ, որով և համագումարը իր աշխատանքները համարում է ավարտված: 6

Հունիսի 26-ին, երեկոյան ժամը 19-ին, Բեռլինում՝ խաղաղության համագումարի բոլոր պատգամավորների թվում նաև Վեհափառ Հայրապետը հատուկ հրավերով ներկա է գտնվում մայրաքաղաքի «Մուսկվա» ճաշարանում կազմակերպված ընդու-

նելությանը: Այդ հրավերը ուղարկվել էր ԳԴՀ-ի պետական կրոնական քարտուղարության կողմից: Ընդունելությանը ներկա էին ավելի քան 110 հրավիրյալներ:

Հունիսի 24-ին Վեհափառ Հայրապետը հրավիրվում է ԳԴՀ-ի Մինիստրների սովետի կազմակերպած ընդունելությանը, որը տեղի է ունենում Կառավարական մեծ և շքեղ շենքում:


ԳԴՀ-ի թերթերը, ինչպիսիք են «Նոր Գերմանիա», «Նոր Ժամանակ», հաճախ առիթ ունեցան իրենց էջերում անդրադառնալու Վեհափառ Հայրապետի անձին և զետեղեցին Նրա նկարները:

Ավարտված է Վեհափառ Հայրապետի՝ համաշխարհային Խաղաղության պաշտպանության համագումարին մասնակցելու կարելիոր առաքելությունը:

Հունիսի 28-ին Նա հրաժեշտ է տալիս հյուրընկալ Բեռլինին, ինչպես նաև Իրեն բարի ճանապարհ մաղթելու համար օդանավակայան եկած ԳԴՀ-ի Խաղաղության պաշտպանության հարգարժան ներկայացուցիչներին և Բեռլին—Մոսկվա օդանավով, մոտ երկուսուկես ժամվա թռիչքից հետո, Վեհափառ Հայրապետը ժամանում է Մոսկվա և դիմավորվում է Ռուսաստանի ու Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ տ. Պարզևեպս. Գևորգյանի, թեմական խորհրդի անդամների, ինչպես նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի աշխատակից Ա. Բուկարինի կողմից:

ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԾԱՔԱՐՅԱՆ





**ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ
ԿԱՅԱՑԱԾ ՍՍՀՄ ԲՈԼՈՐ ԿՐՈՆՆԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԶԱԳՈՐՍԿՈՒՄ**

Դեռևս 1968 թվականի դեկտեմբեր ամսին Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Սուրբ Օծություն **Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսը** Մոսկվայի և համայն Ռուսաստանի պատրիարք Նորին Սրբություն **Տ. Ալեքսից** հրավեր էր ստացել մասնակցելու 1968 թ. դեկտեմբերի 21-ին **Զագորսկի** ուսական մայրավանքում կայանալիք այն նախնական խորհրդակցական ժողովին, որի նպատակն էր եկեղեցական մի համագումարի կազմակերպումն ու հրավիրումը՝ աստվածային պատգամների լույսի տակ քննության առնելու համար ժողովուրդների միջև համագործակցության և աշխարհում խաղաղության ամրապնդման գործում եկեղեցիների և այլ կրոնական կազմակերպությունների մասնակցության հարցը։ Նախապատրաստական այդ ժողովը, որին մասնակցում էին Սովետական Միության զանազան եկեղեցիների և այլ կրոնական համայնքների պետերը, միաձայն որոշում ընդունեց վերոհիշյալ համագումարն անցկացնել **Զագորսկի** մայրավանքում 1969 թ. հուլիսի մեկից չորսը։

Համաձայն այդ որոշման, սույն թվի հուլիսի մեկին, հանդիսավոր իրադրության մեջ **Զագորսկում** բացվեց ՍՍՀՄ բոլոր կրոնների

ներկայացուցիչների համաժողովը՝ ժողովուրդների միջև համագործակցության և աշխարհում խաղաղության ամրապնդման նշանաբանով։

Ի թիվս Սովետական Միության և արտասահմանից ժամանած բազմաթիվ եկեղեցական և ոչ քրիստոնյա կրոնական կազմակերպությունների պատվիրակությունների, Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցին ևս իր գործում մասնակցությունը բերեց սույն համաժողովին 9 հոգուց բաղկացած մի պատգամավորության, որին գլխավորում էր Ամենայն Հայոց Հայրապետ **Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսը**։

Հայ եկեղեցու պատվիրակության կազմում էին **տ. Գնել եպիսկոպոս Ճերեճյանը՝** Բեյրութից, վրահայոց թեմի առաջնորդ **տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, տ. Գյուտ ծ. վարդապետ Նազաշյանը՝** Փարիզից, Վիեննայի Հայոց հոգևոր հովիվ **տ. Մեսրոպ ծ. վարդապետ Գրիգորյանը, ս. Գեղարդ վանքի վանահայր տ. Նարեկ վարդապետ Ծաքարյանը, Արարատյան թեմի թեմական խորհրդի ատենապետ պրոֆ. Սուրեն Արևշատյանը, Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանը և Մայր Աթոռի միջ-**

եկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար և հոգևոր ճեմարանի դասախոս **Պարգև Շահբազյանը**։

Հունիսի 80-ին հայ եկեղեցու պատվիրակությունը համագումարի բացման նախօրյակին ժամանում է ս. Սերգեյի անունը կրող Զագորսկի պատմական մայրավանքը և արժանանում բացառիկ ջերմ ընդունելության։ Ազգիս Վեհափառ Հայրապետին ու Նրա շքախմբի անդամներին պաշտոնապես դի-

ղեցական ճարտարապետության հրաշալիքու կոթողների մի ինքնատիպ ու ներդաշնակ ամբողջություն, այլև որպես հավատքի հնագույն կենտրոն և հոգեհարազատ միջավայր պրավոսլավ դավանանքի բոլոր հավատացյալների համար։ Սուրբ Սերգեյի անունը կրող այս հիմնալուրջ վանքը հայտնի է եղել նաև քրիստոնյա եկեղեցիների միջև մերձեցման ու խաղաղասիրական նպատակներով գումարված իր մի շարք կրոնական և միջե-



Զագորսկի խաղաղության համագումարի պատվո նախագահությունը

մավորում են ու բարի գալուստ մաղթում Զագորսկի հոգևոր ճեմարանի վերատեսուչ տ. Ֆիլարետ եպիսկոպոսը, վանքի վանահայր տ. Պղանտոն վարդապետը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և միաբանության այլ անդամներ։ Այնուհետև Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է միաբանական թաղամաս, ուր Նրա տրամադրության տակ է դրվում մի շքեղ հյուրանոց-կացարան՝ մնալու այնտեղ համագումարի չորս օրերի ընթացքում։

Ռուս պրավոսլավ եկեղեցու այս նշանավոր վանքերի համալիրը, որը գտնվում է մայրավանքի հնավանդ պարիսպներից ներս, հայտնի է ոչ միայն որպես ռուս եկե-

ղեկցական պատմական համաժողովներով։ Այս հնագույն վանքի կամարների տակ է, որ գումարվեց ՍՍՀՄ տարբեր կրոնների և դավանությունների հայտնի համաժողովը 1952 թվականին։

Վանքի մթնոլորտը հոգեպարար է ու ներշնչող։ Զագորսկ քաղաքից ու հեռավոր վայրերից հավատացյալների մի հոծ բազմություն է հավաքվել վանքի պարիսպներից ներս՝ ողջունելու հյուրերին։ Ամեն կողմ տիրում է բացառիկ աշխուժություն ու եռուզեռ։ Մոսկվայից հետգհետե ժամանում են պատգամավորները։ Մեծագույն կազմակերպվածությամբ կատարվում են պատվիրակների և հյուրերի ընդունման ու տեղավորման գոր-

ծողությունները: Այս հաջորդաբար պատվիրակությունները քաղաքավարական այց են տալիս Նորին Սրբազնություն Տ. Ալեքսի ծերունազարդ պատրիարքին:

Հ Ա Ր Ց Ա Զ Ր Ո Ւ Յ Ց

Նույն օրը Ամենայն Հայոց Հայրապետի և մամուլի նորությունների գործակալության թղթակցի միջև տեղի է ունենում առաջիկա համաժողովին վերաբերող հետևյալ հարցազրույցը:

գիտակցությունը մեր մեջ, որպեսզի առավել արդյունավետ դարձնենք մեր սրբազան պաշարը ծառայելու Աստծուն և մարդկանց:

Հարց—Ըստ Ձեր կարծիքի ո՞րն է կրոնական շրջանակների դերը ժողովուրդների միջև համագործակցությունը և խաղաղությունը ամրապնդելու Ձեր երկրում և համաշխարհային չափանիշով:

Վեհափառ Հայրապետ—Խաղաղության գործը ոչ թե որոշ եկեղեցիների, այլ աշխարհի բոլոր եկեղեցիների ու կրոնների սրբազան առաքելությունն է: Եվ որպեսզի



Հայոց Հայրապետը Մուֆթի Ջուայթդին Բաբախանովի և Նիկողիմ միտրոպոլիտի հետ Ջազոբակում


Հարց—Ինչպիսի՞ խոհերով եք ներկայացել այս համաժողովին:


Վեհափառ Հայրապետ—Որպես Հայաստանյայց առաքելական եկեղեցու գլուխ այս համաժողովին Մեր մասնակցությունն ենք բերում այս հաստատ համոզումով, որ եկեղեցիները նույնպես պատասխանատվություն և կարևոր ջաժին ունեն աշխարհի խաղաղության պահպանման գործում: Բոլոր հոգեվոր սպասավորների կրոնական պարտականությունն է պաշտպանել խաղաղության դատը, որ մեզ համար նշանակում է պաշտպանել Քրիստոսի Ավետարանը: Ջազոբակում պետք է առավել ամրապնդենք այս

արդյունավետ լինի աշխատանքը, բոլոր եկեղեցիներն ու կրոնները պետք է ձեռք-ձեռքի տան, միասնաբար աշխատեն նույն ծրագրով, նույն գերագույն նպատակով, անկախ այլ կարգի տեսակետների տարբերություններից:

Հարց—Ինչպիսի՞ հեռանկարներ ունեն կրոնական կազմակերպությունները խաղաղության պաշտպանության գործում:

Վեհափառ Հայրապետ—Մեր կարծիքով եկեղեցիները և բոլոր կրոնական կազմակերպությունները հնարավորություն ունեն մի քանի ճանապարհներով գործելու հանուն խաղաղության:





Զաօրանի խառնուրդում համագումարի պատվիրակների խմբաձևերը

ա) Կենդանի և համարձակ խոսքերով և քարոզներով եկեղեցու բեմերից՝ ուղղված հավատացյալ բացմություններին:

բ) Նույնպիսի խոսքով՝ ուղղիցից և հեռուստացույցից:

գ) Հրատարակություններով՝ կրոնական և ոչ կրոնական մամուլում:

դ) Լավ մտածված, բարի և ազդեցիկ խոսքով՝ ուղղված պետական իշխանություններին և հատարակական կազմակերպություններին:

Ուշ երեկոյան Զագորսկ ժամանած բոլոր պատվիրակությունների անդամները Հոգևոր ճեմարանի ընդարձակ դահլիճում հրավիրվում են ներկա լինելու ուսու պրավոսլավ եկեղեցու պետ Ս. Ալեքսի պատրիարքի եպիսկոպոսական օծման առթիվ նկարահանված կինոժապավենի ցուցադրմանը:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԲԱՅՈՒՄ

Հուլիսի 1-ին, առավոտյան ուղիղ ժամը 11-ին, ս. Սեբգեյի վանքի հսկա զանգակատան աշտարակի կամարների տակ բացվում է ՍՍՀՄ բոլոր կրոնների ներկայացուցիչների համագումարը՝ ժողովուրդների միջև համագործակցության և համայն աշխարհում խաղաղության ամրապնդման համար:

Առաջին լիազումար հիստ: Համագումարի նախագահության սեղանի շուրջ տեղ են գրավում ՍՍՀՄ տարբեր կրոնական կազմակերպությունների հոգևոր պետերը: Նախագահությունում է նաև Ամենայն Հայոց Հայրապետը: Համագումարի առաջին հիստին նախագահում է նրա կազմակերպիչը՝ Նորին Սրբություն **Ս. Ալեքսի պատրիարքը**:

Համաժողովին ներկա են հարյուր յոթանասունհինգ պատգամավորներ, որոնք ներկայացնում են Սովետական Միության եկեղեցիները և այլ կրոնական կազմակերպություններն ու համայնքները (Տե՛ս «Հաղորդագրություն», էջ 7):

Բացի վերոհիշյալ եկեղեցիների և այլ կրոնական կազմակերպությունների պատվիրակություններից, համագումարի աշխատանքներին մասնակցում էին նաև՝ Ասիայի, Աֆրիկայի, Հյուսիսային և Լատինական Ամերիկայի ու Եվրոպայի 44 երկրներից ժամանած դիտորդներ և հյուրեր:

Համագումարը բաց է անում Մոսկվայի և համայն Ռուսիո սրբազան **պատրիարք Ս. Ալեքսի**ի, իր հետևյալ բովանդակայից և կոտ ճառով:

Պատկանելի համագումարի հարգարժան հյուրեր,

Սրտագին ողջունում եմ Ձեզ և ի դեմս Ձեզ՝ աշխարհի տարբեր կրոնների բազմաթիվ հետևորդներին ու բարի կամքի տեր

մարդկանց, որոնք իրենց բարոյական պարտքն են համարում խաղաղության, ճշմարտության ու բանականության պաշտպանությունը և որոնք ձգտում են փոխադարձ համագործակցության՝ արդիականության էական հարցերի լուծման ճանապարհին:

Ծնորհակալություն եմ հայտնում Ձեզ, որ **Դուք**, ժողովուրդների միջև համագործակցության և խաղաղության ամրապնդման ոգով տոգորված, եկել եք Սովետական Միության բոլոր կրոնների ներկայացուցիչների մեր այս համագումարին, որպեսզի Ձեր ուժերի ներածի չափով Ձեր ավանդը մուծեք համագումարի առջև ծառացած խնդիրների մեջ և դրանով իսկ նպաստեք միջազգային խաղաղությանը, ժողովուրդների փոխադարձ օգնության ու նրանց բարեկամական կապերի ամրապնդմանը, մարդկանց կյանքի առավել կատարյալ ձևերի ստեղծման ուղու վրա նրանց առաջընթացին:

Խաղաղության և եղբայրության ծարավը ի բեն հատուկ է եղել մարդկանց: Եվ մեր կրոնական պարտքը, մեր մարդկային գիտակցությունը մեզ մղում են ջերմացնելու այդ բեմծին զգացմունքները և այն արգելքների դեմ պայքարելու ձգտումը, որոնք կանգնած են ժողովուրդների ամենօրյա կյանքում այդ զգացմունքների իրականացման ճանապարհին: Պայքարել այն ամենի դեմ, ինչ մեր օրերին միջազգային լարվածության աղբյուր է, ինչ ստեղծում է շատ բարդ իրադրություն աշխարհում:

Վիետնամի ողբերգությունը, Մերձավոր Արևելքի պատերազմը, լարվածությունը Եվրոպայում, Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի բազմաթիվ երկրներում մարդկանց տառապանքները, — ահա այն ամենը, ինչ ստիպեց մեզ թողնել մեր տներն ու ամենօրյա աշխատանքը և գալ հավաքվել այստեղ՝ ս. Սեբգեյի Երրորդության վանքում:

Ի պաշտպանություն խաղաղության ծավալված շարժումը մեր օրերին ընդունել է իսկապես համաշխարհային չափանիշներ և բազմաթիվ երկրներում ստացել է համաժողովրդական գործի բնույթ: Մենք բոլորս էլ բավականաչափ ջանք ենք թափել խաղաղության պաշտպանության ազնիվ ասպարեզում և ձեռք ենք բերել զգալի հաջողություններ, սակայն ժամանակակից միջազգային դրությունը մեզնից պահանջում է նոր ավանդ, նոր ճիգեր մարդկության կյանքի խաղաղ զարգացման ճանապարհին կանգնած խնդիրների լուծման գործում: Ամենայն որոշակիությամբ մենք հայտարարում ենք, որ ստեղծագործական խաղաղ աշխատանքով զբաղված սովետական ժողովուրդը թույլ չի

տա, որ իր նվաճումները նորից ոչնչանան, սպառնալիքի առաջ գտնվեն: Մեր հիշողության մեջ դեռևս թաքմ են վերջին պատերազմի սարսափները, մեր սրտերը չեն ազատվել և երբեք էլ չեն ազատվի այն վերքերից, որ մեզ հասցրել է մեր մերձավորների, մեր հայրենակիցների կորուստը, այն քսան միլիոն մարդկանց կորուստը, որոնց պաշարը ֆաշիստական Գերմանիայի դեմ մոտեցրեց ոչ միայն մեր ժողովուրդների, այլև հանուր մարդկության հաղթանակը ֆաշիզմի՝ ատելության, մարդատյացության և չարիքի այդ մարմնացման նկատմամբ: Մեր հայրենիքի բոլոր հավատացյալները, ամբողջ սովետական ժողովրդի հետ մեկտեղ, այժմ իրենց ուժերը նվիրաբերում են խաղաղության պաշտպանության և իրենց մեծ հայրենիքի բարգավաճման գործին: Պատերազմ հրահրողների թշնամությանն ու ատելությանը նրանք հակադրում են մարդկային բանականության և ժողովուրդների եղբայրական սիրտ մասին սուրբ Հոգու կողմից սրբագործված իրենց անասան հավատքը:

Սա արդեն մեր երկրում բոլոր կրոնների ներկայացուցիչների երկրորդ համագումարն է, որ նվիրված է ժողովուրդների միջև համագործակցությանն ու խաղաղությանը: Այս համագումարի նախաձեռնմանը մեզ մղել է մեր համոզվածությունը այն քանում, որ բոլոր խաղաղասեր ուժերի, այդ թվում և կրոնների հետևորդների կամքի ու գործողությունների միասնությունը միայն կարող է լինել երկրի վրա կայուն խաղաղության հաստատման իրական միջոց: Մենք հույս ենք հայտնում, որ մեր համագումարը՝ հանուն խաղաղության պայքարի Սովետական Միության հավատացյալ քաղաքացիների այս ներկայացուցչական համաժողովը, կուժեղացնի մեր մեծ հայրենիքի եկեղեցիների և կրոնական համայնքների՝ ի պաշտպանություն խաղաղության բերած ավանդի արդյունավետությունը, նրա ձայնը կլսեն մեր հայրենիքի սահմաններից դուրս ապրող խաղաղության ջատագովները, և նա կօգնի խաղաղության կողմնակիցների ջանքերի միասնությանը, որտեղ էլ որ նրանք գտնվեն ինչպես ինքն: Մենք կարծում ենք, որ խաղաղության բարոյական պահանջը և նրա նկատմամբ բարի կամքը, որ հատուկ են բազմաթիվ խաղաղարար մարդկանց, որոնց մեր Տեր Հիսուս Քրիստոսը անվանում է «Որդիք Աստուծոյ», հաստատում են մեր գործի արդարացիությունը:

Մենք այստեղ բնարկելու ենք միջազգային դրության լարվածության դրոպատաճառ և համաշխարհային նոր պատերազմի սպառնալիք հանդիսացող մի շարք կարևոր

խնդիրներ և ապա մշակելու ենք մեր առաջարկությունները: Ես ցանկանում եմ հույս հայտնել, որ մեր աշխատանքը կընթանա միասնական մտածողության ոգով և կտա իր բարի պտուղները, որոնք օգտակար ավանդ կհանդիսանան միջազգային համագործակցության ընդլայնման և խաղաղության պաշտպանության համամարդկային գործում:

Ցանկանում եմ Ձեզ, սիրելի բարեկամներ և եղբայրներ, հաջողություն Ձեր առաջիկա խաղաղարար աշխատանքներում և հայցում եմ Աստուծո օրհնությունը մեր աշխատանքների և Ձեր բոլորի վրա: Ամեն:

Տ. Ալեքսի պատրիարքի բացման ճառից հետո հայտարարվում է համագումարի օրակարգը և ընտրվում ու հաստատվում է մանդատային և խմբագրական հանձնաժողովների կազմը: Ապա խոսքը տրվում է ՍՍՀՄ միևնույնի սովետիկ առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Վ. Ա. Կուրյուչեղովին՝ ընկերացելու ՍՍՀՄ Միևնույնի սովետի նախագահ Նորին Գերագանցություն Ա. Ն. Կոսիգինի՝ համագումարին ուղղված հետևյալ ողջույնի ուղերձը.

Ջագորսկում գումարված կրոնական գործիչների համագումարի մասնակիցներին.

Ողջունում եմ ՍՍՀՄ կրոնական գործիչների համագումարի մասնակիցներին և արտասահմանյան հյուրերին, որոնք հավաքվել են Ջագորսկում համընդհանուր խաղաղության և ժողովուրդների միջև փոխընթերցման ամրապնդման ազնիվ գործում իրենց ավանդը մտցնելու նպատակով: Սովետական կառավարությունը անշեղորեն և հետևողական կերպով վարում է ժողովուրդների միջև բարեկամության և խաղաղության քաղաքականություն, անխոնջ կերպով ձգտում է կանխել նոր համաշխարհային պատերազմի սպառնալիքը և բարձր գնահատում այդ նպատակներին հասնելու ամեն մի ջանք, այդ թվում և կրոնական կազմակերպությունների ջանքերը: Խաղաղության գաղափարները մոտ են մարդկանց սրտին՝ անկախ նրանց քաղաքական հայացքներից, ցեղային և ազգային պատկանելիությունից ու դավանանքից: Անհրաժեշտ է ամեն ինչ անել, որպեսզի միջազգային հարցերի լուծման միջոցների զինանոցից դուրս մղվեն պատերազմները:

Համագումարի մասնակիցներին ցանկանում եմ հաջող աշխատանքի բարոություն խաղաղության գործի:

ՍՍՀՄ Միևնույնի սովետի մեծարգո նախագահի ուղերձը համագումարի մասնակիցների կողմից ընդունվում է սրտագին ծափուկներով:

Այնուհետև սկսվում են ելույթները: Խա

դադրության համաժողովի առաջին և գլխավոր գեկուցողն է Լենինգրադի և Նովոռոդի առաջնորդ Տ. Նիկողոսի միտրոպոլիտը։ «Մեր ժողովը,—ասում է իր ճառի սկզբում հռետորը—որին ներկա են բոլոր եկեղեցիների և այլ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները, գումարվել է մարդկության համար տագնապալից այս օրերին։ Այսօր մենք բոլորս օրեցօր սրվող միջազգային կացության վկաներն ենք»։ Ապա ելույթ ունեցողը մեկ առ մեկ հիշատակում է այն վայրերի անունները, ուր ամեն օր միլիոնավոր մարդիկ, խաղաղության կարոտն իրենց սրտում, ենթարկվում են անասելի չարիքների ու տառապանքների՝ դատապարտելով ամեն տեսակի հակամարդկային արարք, որ խորթ է ամեն մի կրոնական ուսմունքի։ Նա առանձին կարևորությամբ հիշում է ռուս, հայ, վրաց և մյուս բույր եկեղեցիների՝ հօգուտ խաղաղության բերած նպաստը, ի մասնավորի շեշտելով այդ ուղղությամբ հայ եկեղեցու գործադրած ջանքերը, «ինչ վերաբերում է Հայաստանյայց առաքելական եկեղեցուն,—ասում է հռետորը,—բոլորին հայտնի են նրա ղեկավարների՝ Ամենայն Հայոց կաթողիկոս հանգուցյալ Գևորգ Զ-ի և այսօրվա Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողի-

կոս Նորին Սուրբ Օծություն Վազգեն Ա-ի խաղաղարար ջանքերը»։ Միտրոպոլիտ սրբազանը իր ճառում հույս է հայտնում, որ սույն համագումարը ի վիճակի կլինի լուծելու իր առջև դրված կենսական հարցերը ի պաշտպանություն խաղաղության, և համագումարի մասնակիցների մարդասիրական նպատակները կդառնան բոլոր կրոնների հետևորդների ընդհանուր նպատակը, մարդիկ, որոնք, որպես Աստուծո ռդիներ, իրենց սրտում ունեն պատասխանատվության մեծ զգացում և կոչված են լինելու խաղաղության սուրբ գործի եռանդուն մարտիկներ ու կանգնելու նրա պաշտպանների առաջին շարքում։ «Ծմաբարության ու խաղաղասիրության Աստվածը, կյանքի Աստվածը, մահը հաղթող, սիրո և ողորմածության Աստվածը,—ասում է սրբազանը իր ելույթի վերջում,—թող օրհնի իր փառքի համար ձեռնարկած մեր այս սրբազան գործը՝ հօգուտ իր ամենասիրեցյալ մարդկության»։ Ապա, նույն օրը ժամը 15-ին գումարվում է համաժողովի երկրորդ լիագումար նիստը։ Նիստին նախագահում է Միջին Ասիայի և Ղազախստանի մահմեդական համայնքի պետ Մուֆթի Զուայթին Բաքախանովը։ Առաջինը ելույթ է ունենում Նորին Սուրբ Օծություն Ամենայն Հայոց Հայրապետը.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ
ԶԱԳՈՐՍԿԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ

(1969 թ. հուլիսի 1-ին)

Հարգարժան եղբայրներ և բարեկամներ,

Երկու լույս գաղափարներ առաջնորդած են մեզ բոլորս և համախմբած այստեղ, պատմական այս սրբավայրի՝ Զագորսկի կամարների ներքև։

Այդ երկու գաղափարներն են՝ Աստված և խաղաղություն։

Աստուծո և խաղաղության գաղափարները ոչ միայն հավերժական են և համամարդկային, և հավասարապես պաշտելի աշխարհի բոլոր կրոնների կողմից, այլ նաև անբաժան ու անբաժանելի մեկը մյուսից։ Աստուծո գոյության և նախախնամության նկատմամբ մեր հավատքը՝ տիեզերական ներդաշնակության և մարդկային կյանքի խաղաղ զարգացման մի տնտեսություն է ենթադրում անհրաժեշտորեն։ Քրիստոնեությունը և բոլոր կրոնները, խաղաղարար առաքելության լուսապսակով են ներկայանում մեզ։ Իսկ խաղաղության գաղափարի գերագույն երաշխիքը, մենք դավանում ենք զԱստված. արարիչը երկնի և երկրի, նախախնամող և արդար դատավորը մարդկային աշխարհի։

Հետևաբար մեր բոլորիս նպատակը սուրբ է, հավաքվելու այստեղ, միասին աղոթելու և միասին որոնելու համար այն բոլոր ճանապարհները, այն

բոլոր միջոցառումները, որոնք պետք է օգնեն մարդկանց, ժողովուրդներին և պետություններին, որպեսզի տևապես ամուր և անխորտակելի մնա խաղաղությունը աշխարհում և եղբայրությունը բոլոր ազգերի միջև, առանց որևէ խտրականության:

Միայն թե, սիրելի եղբայրներ, զգո՛ն և համարձակ պետք է լինենք ու չբավարարվենք միայն ընդհանուր խոսքերով, և զգացական հայտարարություններով: Զբավարարվենք միայն պատերազմը դատապարտելով և խաղաղությունը փառաբանելով, այլ աշխատենք գտնել արմատները չարիքին, հիմնական դրդապատճառները և ուժերը—երբեմն թաքուն—որոնք պատերազմ են ծնում, և որոնք պատերազմով են սնվում, երբեմն «խաղաղության» կարգախոսը իրենց շրթներին:

Հարկ է լրջությամբ և անաչառությամբ թափանցել իրերի և երևույթների խորքը, հարկ է վերլուծության ենթարկել արդի մարդկային աշխարհի կառուցվածքը՝ ընկերային, տնտեսական և գաղափարական տեսակետից, հարկ է ճշտորոշել պետությունների միջև գոյություն ունեցող լարվածության պատճառները և նպատակները, հասկանալու համար թե ինչո՞ւ երկրի վրա խաղաղությունը միշտ վտանգված է մնում, թե ո՞վքեր շահ ունեն ազգերի և պետությունների միջև հակամարտությունների և թշնամական զգացումների որոմը սերմանելու, թե ո՞վքեր շահ և նպատակ ունեն պատերազմներ հրահրելու ուր և երբ որ այդ իրենց ձեռնառու և հնարավոր է լինում:

Դիտեցեք ձեր շուրջը, ձեր մոտև ու հեռում, դիտեցեք բաց աչքերով մակերեսային երևույթներից այն կողմ, պատռեցեք վարագույրը շփոթեցուցիչ խոսքերի և քողարկված գործելակերպերի և պիտի տեսնեք, թե տիեզերական չարիքի արմատները գտնվում են՝ ընկերային հակասությունների և անարդարությունների, դրամի միջազգային տիրակալության և քաղաքական իշխանամոլության մեջ, որոնցից են բխում գաղութարարություն, փոքր ազգերի ազատագրական շարժումների ճնշում, ցեղային խտրականություն և վերջապես նույնիսկ արյունահեղ պատերազմներ: Պատմության ընթացքին, քանիքանի անգամներ բազում ժողովուրդներ զոհ են գնացել այս չարիքներից առաջ եկած պատերազմների ժամանակ: Այն եկեղեցին և այն ժողովուրդը, զոր մենք կներկայացնենք, այդ նույն չարիքների զոհը հանդիսացան առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին, 1915-ին, երբ իրենց վրա գործադրվեց մեր դարի առաջին ցեղասպանությունը, Օսմանյան Կայսերապետության կողմից և նահատակվեցին մոտ երկու միլիոն հայ քրիստոնյաներ:

Մենք կխորհինք, թե այս պատկառելի համագումարը իր հանձնախմբերի աշխատանքներով, պիտի կարողանա ավելի լույս բերել այն բոլոր կացությունների և այն բոլոր հարցերի վրա, որոնք ծանրորեն սպառնում են մեր օրերի մարդկության խաղաղ առաջընթացին և ժողովուրդների եղբայրացումին:

Հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու, Մենք ողջունում ենք զՁեզ բոլորդ և մաղթում, որ այս համագումարի աշխատանքները հաջողությամբ պսակվեն:

Ամենակարողն Աստուծո սուրբ և արդար հոգին, թող ներշնչի մեզ բոլորս և օգնական լինի մեզ, որպեսզի կարող լինենք մեր սրբազան պարտքը կատարելու իբրև մարդիկ և իբրև հոգևոր սպասավորներ, որոնք գիտակցությունը ունեն իրենց կոչման և իրենց պատասխանատվության:

«Ինքն Տէր խաղաղութեան՝ տացէ ձեզ խաղաղութիւն յամենայն ժամ, յամենայն իրս: Տէր ընդ ամենեսին ընդ ձեզ» (Բ. Թեա. Գ. 16). ամեն:

Վեհափառ Հայրապետի ճառը համագումարի պատգամավորների և հյուրերի կողմից ընդունվում է ջերմ ծափերով:

Այնուհետև իրենց ողջույնի խոսքերով հանդես են գալիս համաժողովի արտասահմանյան հյուրերից՝ Հորդանանի Գերագույն դատավոր Ծելխ Աբդուլլահ Ղուշան, Անտիոքի պրավոսլավ եկեղեցու ներկայացուցիչ միտրոպոլիտ Սամահին, Սիրիայի մահմեդական համայնքի գլխավոր մուֆթի Ծելխ Ահմեդ Քաֆթարուն, Հռոմի Պապի լիազոր ներկայացուցիչ պարոն Ժան Դ'Առնոն, որը կարդաց Վատիկանից համագումարին ուղղված ողջույնի ուղերձը, Ցեյլոնի բուդդայական համայնքի պետ Մեդագոդա Սումպատիսսա Տխերոն, Նիգերիայից պատտր Ադեջանմորին, Մարոկկոյի «Ալ-Միսաբ» թերթի խմբագիր Աբդուլլահ Ղանուն, ՍՍՀՄ-ում Բուդդայականների կենտրոնական հոգեվոր վարչության պետ պատգամավոր Բանդիդ Խամբոն, Լամա Գամբո և Ժամլ Բալու Դորթին, Լիբանանի իսլամական բարձրագույն օրենսդրական խորհրդի անդամ, դոկտոր Ուաֆիզ Էլ Ղասսարը, Գանայի՝ Ակրայի ինստիտուտի արվեստի ֆակուլտետի ատենադիր կրոնական գործերի տնօրեն, պրոֆ. Խրիստիան Բաեդան և ուրիշներ:

Համագումարի երրորդ լիազումար նիստը տեղի ունեցավ նույն օրը՝ հուլիսի մեկի երեկոյան: Այս նիստին նախագահում էր Ռիգայի հոռմեական կաթոլիկ միտրոպոլիտության առաքելական վարիչ, Մեծ Մակրիինի եպիսկոպոս **Տ. Հուլիոս Վալվորդը:**

Նիստի մասնակիցները նախ լսեցին մանդատային հանձնաժողովի զեկուցումը, ապա ունկնդրեցին ողջույնի խոսքերով ու ճանաչումով հանդես եկած հետևյալ հռետորներին. ռումեն պրավոսլավ եկեղեցու կողմից՝ Առնտիոլյուսի միտրոպոլիտ Նիկոլային, Հնդկաստանում Մոհաբորի ընկերության գլխավոր քարտուղար Զինարատանա Մահաշտավիրային, ՄԱԿ-ի միջեկեղեցական կենտրոնի տնօրեն, դոկտոր Կարլ Սողին՝ Նյու-Յորքից, բուլղար եկեղեցու ներկայացուցիչ միտրոպոլիտ Մաքսիմին, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ներկայացուցիչ Կարտամին, որը կարդաց Խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Բլեյկի ուղերձը, Հունգարիայի հոռմեական-կաթոլիկ եկեղեցու Էգերի արքեպիսկոպոս Պավել Բրեզնոցին, Վրաց պրավոսլավ եկեղեցու պետ Տ. Տփրեմ Բ կաթոլիկոսին, ինչպես նաև Սոմալիից, ԳԴՀ-ից, Սենեգալից, Զեխուլովակիայից, Լեհաստանից և այլ երկրներից եկած հյուրերին:

Ինչպես նախորդ նիստերին, այնպես էլ այս նիստին հռետորներն իրենց ելույթներում գլխավորապես շոշափում էին մարդ-

կության ճակատագրին և աշխարհի վտանգված խաղաղությանը վերաբերող հարցեր: Այդ առթիվ բոլոր ելույթ ունեցողներն էլ իրենց անհանգստությունն էին հայտնում և նշում խաղաղության պաշտպանության գործում աշխարհի բոլոր եկեղեցիների և կրոնական համայնքների հիմնական պարտականություններն ու այն միջոցները, որոնցով հնարավոր կլինեք կանխել նոր պատերազմի վտանգը աշխարհի այս կամ այն անկյունում:

Նիստի վերջում համագումարը միաձայնությամբ հավանություն հայտնեց ՍՍՀՄ Միևհատրների սովետի նախագահ Ա. Ն. Կոսիգինի ուղերձի պատասխան-ճամակին, որն ընթերցվեց լսարանի առաջ և պատգամավորների կողմից արժանացավ ջերմ ծափահարությունների:

Ուշ երեկոյան հյուրերը ներկա եղան «Ռուս պրավոսլավ եկեղեցին այսօր» կինո-ժապավենի ցուցադրմանը:

Հուլիսի 2-ին և 3-ին համագումարն իր աշխատանքները շարունակեց աշխատանքային հինգ հանձնախմբերում, որտեղ առանձին-առանձին քննարկվեցին մեր օրերի մարդկությանը հուզող և աշխարհի խաղաղության ամրապնդման համար կենսական հետևյալ հարցերը.

Առաջին հանձնախմբում՝ «Վիետնամի և հարավ-արևելյան Ասիայի հարցը» (գլխավոր զեկուցող՝ համամիութենական Ավետարանական քրիստոնյա-մկրտչականների խորհրդի գլխավոր քարտուղար Ա. Վ. Կարև):

Երկրորդ հանձնախմբում՝ «Եվրոպայի անվտանգության հարցը» (գլխավոր զեկուցող՝ Վիլնյուսի հոռմեական կաթոլիկ եկեղեցու թեմի վարիչ Զեյլովա Կրիվայտիս):

Երրորդ հանձնախմբում՝ «Մերձավոր Արևելքի տագնապը» (գլխավոր զեկուցող՝ Միջին Ասիայի և Ղազախստանի մահմեդականների հոգևոր վարչության նախագահ, մուֆթի Քիստոթյին Բաբախանով):

Չորրորդ հանձնախմբում՝ «Գաղութակալություն, նոր գաղութակալություն, ռասիզմ և ապարտեիդ» (գլխավոր զեկուցող՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցու Արարատյան թեմի թեմական խորհրդի առնեապետ, պրոֆ. Սուրեն Արևշատյան):

Հինգերորդ հանձնախմբում՝ «Տարբեր կրոնների հավաքական ջանքերի հիմքերը, պրակտիկական և հեռանկարները՝ պաշտպանելու համար համագործակցությունն ու խաղաղությունը ժողովուրդների միջև» (գլխավոր զեկուցող՝ Կիևի և Գալիցիայի առաջնորդ և ռուս պրավոսլավ եկեղեցու ս. Սիմոնի անդամ Տ. Ֆիլարետ միտրոպոլիտ):

Չորրորդ հանձնախմբում ունկնդիրները

լարված հետաքրքրությամբ հետևեցին հանձնախմբի գլխավոր զեկուցող, հայ եկեղեցու պատվիրակության անդամ պրոֆեսոր Սուրեն Արևշատյանի հետևյալ ճառին.

«Թույլ տվեք ողջունել ձեզ Ամենայն Հայոց կաթողիկոս Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Առաքինի և Հայաստանյայց առաքելական եկեղեցու Գերագույն հոգևոր խորհրդի անունից: Եղբայրական ողջոյն ձեզ աստվածաշնչական ալեհեր Արարատից, ա. Էջմիածնից և համայն հավատացյալ հայ ժողովրդից:

Մեր հնագույն ժողովուրդը, որ բազում դարեր հեծել է օտարերկրյա բռնակալների լծի տակ, ենթարկվել բազմաթիվ տառապանքների ու ցեղասպանության խժժույթուններին, խոր համակրանքով ու կարեկցանքով է վերաբերվում այն բոլոր ժողովուրդների հանդեպ, որոնք պայքարում են հանուն իրենց ազատության, հանուն իրենց մարդկային արժանապատվության, հանուն բարի ու վեհ գաղափարների հաղթանակի, հանուն արդարության:

Այն հարցերը, որոնք քննարկվելու են մեր հանձնաժողովում, ունեն չափազանց կարեւոր նշանակություն:

Վերջին քսան-քսանհինգ տարիների ընթացքում մեր հողագնդի երեք աշխարհամասերի վրա տեղի ունեցան արմատական վերափոխումներ հարյուր միլիոնավոր մարդկանց ճակատագրում:

Գաղութային ստրկության շղթաների մեջ կաշկանդված ժողովուրդներ արթնացան ի խնդիր նոր կյանքի, որի համար և նրանք պայքարում են այսօր անձնագոհ կերպով:

Քրիստոնեական եկեղեցին և մյուս կրոնական կազմակերպությունները ժամանակակից իրավիճակում պետք է ունենան իրենց պարզ, որոշակի և վճռական կեցվածքը այս չափազանց այժմեական հարցերի լուծման ու կարգավորման գործում, որովհետև եկեղեցին և կրոնական կազմակերպությունները այդ հարցերից անմասն ու անտարբեր մնալու որևէ բարոյական իրավունք չունեն:

«Քրիստոսի ա. եկեղեցին նույնպես պետք է ունենա վճռական կեցվածք,—ասել է Ամենայն Հայոց կաթողիկոս Ն. Սրբություն Վազգեն Առաքինը 1965 թվի հունվար ամսին Ադիս-Աբեբայում Իր խոսած քարոզի մեջ,—պետք է ունենա իր ըսելիքը, անշփոթ խոսքը, պետք է հանդես գա իր ոգեկան, բարոյական բովանդակությամբ և իր գործելու բոլոր հնարավորություններով, որպեսզի սուրբ զգացումներով լուսավորե մարդկային խիղճը և օգնե բոլորին, մանավանդ պետությանց ղեկավարներուն ի խըն-

դիր խաղաղության ճանապարհները գըտնելու և ամրապնդելու»:

Ի՞նչ տեսանկյունից պետք է մոտենան եկեղեցին և այլ կրոնական կազմակերպությունները «Գաղութակալություն և նոր-գաղութակալություն, ռասիզմ և ապարտեիդ» թեման քննարկելիս: Մենք կարծում ենք, որ այստեղ գոյություն ունեն չորս կարևոր կետեր.

ա. Ընկերային.

բ. Տնտեսական.

գ. Քաղաքական.

դ. Մշակութային և բարոյական:

ա. Ընկերային ապակետի հիմնական տարրերից մեկն է հասարակության բոլոր խավերի համար իրավահավասարության ձեռք բերումը և տեղացի ազգաբնակչության նկատմամբ անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Գաղութակալության և նոր-գաղութակալության պայմաններում անհրաժեշտ է միլիոնավոր մարդկանց կախվածությունը մի խումբ գաղութարարներից, առաջնորդում են դեպի զանգվածային աղբատություն, և ամբողջ հարստությունը կենտրոնացնում է մեկ քեռում, իսկ մյուսում՝ զարհուրելի աղքատությունը:

Մեր համակրանքն ու զգացումները իրենց ազգային անկախության կ իրենց ընկերային ու նյութական վիճակի արմատական բարելավման համար մարտնչող ժողովուրդների կողմն են: «Այրիների և որբերի» կարիքները հոգալու պահանջը պետք է տեղի տա բազմամիլիոն մարդկանց ճակատագրով մտահոգվելու պահանջին, մարդիկ, որոնք այսօր կարիքն ունեն իրենց կյանքի պայմանների բարելավմանը:

Մենք պաշտպանում ենք 1968 թ. հունիսին Պրագայի համագումարում ընդունված որոշումներն այն մասին, թե «պետք է քաջալերել քրիստոնյաներին (բոլոր հավատացյալներին), որպեսզի մասնակցեն նոր հասարակարգի կառուցման համար մղվող պայքարին, հասարակարգ, ուր ընկերային արդարությունն ու խաղաղությունը օգնեն մարդկային անհատի համակողմանի զարգացմանը»:

բ. Ժողով պետությունների և ժողովուրդների տնտեսական ազատությունը ամբողջական չի լինի առանց նրանց քաղաքական անկախությանը: Գաղութակալությունը շատ երկրներում մտցրեց սպառողական մի տրնտեսաձև, առանց սակայն արտադրողական տնտեսաձև կազմակերպելու: Դրանից սուղ է զախս մի խոր հակասություն, քանի որ կա սպառում, բայց չկա արտադրություն, և դա դժվարացնում է այդ երկրների զարգացման ուղիները:

Ժողովուրդների կյանքում տնտեսական գործոնի մասին արտահայտվելիս, կաթոլիկ եկեղեցու պետ Պողոս Զ պապն ասել է. «Ցավալի է, որ ժամանակակից հասարակությանն ընդ պայմաններում հաստատված է այնպիսի մի սխառն, երբ շահույթը դառնում է տնտեսական առաջընթացի գլխավոր առաջնությունը, իսկ արտադրության արդյունքների վրա մասնավոր սեփականությունը՝ բացարձակորեն անսահմանափակ մի իրավունք՝ առանց որևէ ընկերային համապատասխան պարտավորության: Այս անհարձակ ազատությունը առաջընթացում է դեպի դիկտատուրա, որից է ծնվում է դրամի միջազգային իմպերիալիզմը»:

գ. Քաղաքական անկախության և ազգային ինքնությունության նվաճումը հանդիսանում է լույս առաջին քայլը գաղութակալության և նրա աղետալի հետևանքների վերացման ճանապարհին: Գաղութային իշխանությունները մի դժվարին, անտանելիորեն ծանր «ժառանգություն» են թողնում երիտասարդ ազգային պետություններին: Իրենց քաղաքական անկախությունը նվաճած ժողովուրդների առջև հետևյալ հարցն է ծառանում. ինչպե՞ս անել՝ ամենաարագ կերպով զարգացնելու համար իրենց տրված տեսությունն ու մշակույթը, բարձրացնելու իրենց կենսամակարդակը և կանգնելու աշխարհի առաջավոր պետությունների կողքին, որպես նրանց հավասարի:

Եկեղեցին պետք է իր կարևոր նպաստը բերի ճնշումների և ամեն տեսակ անարդարությունների դեմ մղվող պայքարին: Այս կապակցությամբ կրկին ուզում եմ մեջ բերել հայ եկեղեցու պետ Նորին Սրբություն Վազգեն Առաջինի խոսքերը՝ արտասանված 1967 թ. հուլիս ամսին Ժնևում.

«Ընկերային արդարություն և օգնություն բոլոր շահագործվածներուն և ճնշվածներուն, օժանդակություն բոլոր տկարներուն, արդարություն և ազատություն բոլոր ազգություններուն, եղբայրություն ժողովուրդներուն և խաղաղության պահպանում ամբողջ աշխարհի մեջ, ահա՛ հրաժայական խնդիրներ, որ կհուզեն մեր ժամանակներու մարդկությունը: Ահա՛ խնդիրներ, որոնք պետք է ձուգեն նաև զմեզ, իբրև եկեղեցիներու ղեկավարներ, եթե իրապես կկամենանք հեռու մնալ աշխարհեն և կյանքեն»:

Յուրաքանչյուր ազգի իրավունքն է լինել անկախ և ինքնուրույն: Այդ պայքարում եկեղեցին և բոլոր կրոնական կազմակերպությունները իրենց բոլոր միջոցներով պետք է օգնություն ցուցաբերեն ճնշված ազգերին, որովհետև ոչ մեկ հակաառություն չկա խաղաղության համար մղվող պայքարի և քաղաքական ազատության պայքարի միջև:

դ. Գաղութակալության և ընդ-գաղութակալության լծի տակ ճնշված ժողովուրդների ազատագրության գործում, ընկերային, տնտեսական և քաղաքական գործոնների շարքին, հսկայական նշանակություն ունեցող ոչ պակաս կարևոր գործոն է նաև կրթությունը, ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնագիտական (տեխնիկական, արհեստագործական, գյուղատնտեսական, բժշկական և այլն):

Գաղութարարների բազմադարյան տիրապետության հետևանքով երեք աշխարհամասերի՝ Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի ժողովուրդները մնացին ծայրահեղորեն հետամնաց վիճակում ինչպես տնտեսության, այնպես էլ կրթության և մշակույթի բնագավառում:

Երիտասարդ պետությունների համար առաջնահերթ ու անհետաձգելի խնդիրներից մեկն էլ իրենց ազգային մասնագետների ստեղծումն է: Այս ճանապարհի վրա մեծագույն խոչընդոտները համատարած անգրագիտությունն ու հետամնացությունն են, որոնք հանդիսանում են գաղութային անցյալի ծանր ժառանգությունը:

Քրիստոնեական եկեղեցու և մյուս կրոնական կազմակերպությունների սրբազան պարտքն է կազմակերպված ձևով նյութական օգնություն ցուցաբերել՝ դպրոցներ բացելու, անգրագիտության վերացման օջախներ ստեղծելու, գրեական պիտույքներ, գործիքներ և անհրաժեշտ նյութեր ձեռք բերելու, տեխնիկական, արհեստագործական, գյուղատնտեսական, բժշկական և այլ մասնագիտությունների զարգացման համար՝ ըստ հնարավորին նաև ապահովելով այդ ժողովուրդներին համապատասխան մասնագետներով:

Փոքր ժողովուրդների դեմ մղված պայքարում գործադրվում են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են ուսուցումը և ապարտեիդը:

Ռասիզմի և ապարտեիդի քաղաքականությանը ենթակա ժողովուրդների կրած դառնությունն ու տառապանքները առանձնապես հասկանալի են հայ ժողովրդին: Հայերը 20-րդ դարում առաջինները եղան, որոնք ճանաչեցին պատմության մեջ անմախք մեղաց գազանային ու զանգվածային ոճիրները:

54 տարի առաջ, 1915 թ. ապրիլին սուլթանական Թուրքիայի կառավարողների շուրջիստական քաղաքականության հետևանքով շուրջ երկու միլիոն հայեր ենթարկվեցին կոտորածի ու բնաջնջման: Հայ ժո-

դովրդի զարհուրելի եղեռնը մախակարապետը հանդիսացավ ցեղասպանության դաժան քաղաքականության, որ ծառանգեցին և ավելի լայն չափերով գործարքեցին ֆաշիստները Եվրոպայի ժողովուրդների նդկատմամբ:

1939 թ. օգոստոսի 22-ին Ադուֆ Հիտլերը, իր մի ճառում դիմելով 3-րդ ռայխի զինվորական ղեկավարներին, ասաց. «Մեր ուժը պետք է կայանա մեր արագության ու դաժանության մեջ: Ես հրամայեցի էսեսական հատուկ միավորներին մեկնել լեհական ճակատ և անխիղճ կերպով սպանել տղամարդկանց, կանանց և երեխաներին: Այսօր այլևս ո՛վ է խոսում հայերի կոտորածների մասին»:

Պարզ է, որ սուլթանական մարդասպանների անպատիժ մնալը քաջալերեց Հիտլերին և գերմանացի ռասիստներին:

Աշխարհն այսօր վկա է մարդաստյացության, գաղութակալական, ռասիստական և շովինիստական քաղաքականության բազմապիսի արտահայտություններին:

Ահա արդեն տարիներից ի վեր հոսում է Վիետնամում ժողովրդի արյունը, բազմամյա պատերազմը անասելի չարչարանքներ է պատճառում նրա խաղաղ բնակչությանը. պատերազմի բոցերում զոհվեցին հարյուր հազարավոր անմեղ մարդիկ: Հայ ժողովրդի ողբերգությունը չպետք է կրկնվի Վիետնամում: Համաշխարհային հասարակական կարծիքը պետք է օգտագործի իր ողջ հեղինակությունը, իր ողջ ազդեցությունը, որպեսզի վերջ գտնեն պատերազմական գործողությունները Վիետնամում և հնարավորություն տրվի այդ ծվատված երկրի ժողովրդին՝ ինքն իսկ տնօրինելու իր ճակատագիրը:

Հայ եկեղեցին իր գործունեության մեջ ապավինում է բարու և արդարության ուժերին, այն բարձր բարոյական սկզբունքների հաղթանակին, որ պատգամեց է սովորեցրեց մեզ մեր Փրկիչը իր երկրային կյանքի ընթացքում. խաղաղություն գործել, ծառայել մարդկային անհատի ազատագրության գործին՝ անկախ նրա ազգային, ցեղային, կրոնական և ընկերային պատկանելիությունից: Այսպիսին է էությունը քրիստոնեական ուսմունքի, այսպիսին է պատգամը և կամքը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի: Ժողովուրդները, ինչպես և առանձին մարդիկ, հավասար են Աստուծո առջև:

Ուրեմն քերեք մեր լուսման՝ մոտեցնելու համար Աստուծո թագավորության գալուստը երկրի վրա, միացնեք մեր ուժերը՝ հասնելու համար այդ սուրբ մպատակին:

Ռասիզմին և ապարտեիդին մե՞նք հակադրում ենք բարեկամությունը, եղբայրու-

թյունը և ժողովուրդների համագործակցությունը: Ամսոռանալի է 1968 թ. ՄԱԿ-ում Հայաստանյայց առաքելական եկեղեցու Պետի՝ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաքինի արտասանած գեղեցիկ ճառը.

«...Հետևաբար պետությունների պատասխանատու ղեկավարները թող միշտ ու ամեն տեղ որոնեն խաղաղության ճամփաները՝ համբերությամբ և լավատեսությամբ, թող ջանան զիրար հասկնալ փոխադարձ զիջումներով, թող չթուլատրեն ատելության սերմանում մարդոց և ժողովուրդներու միջեւ: Թող բոլոր ազգերը և պետությունները գնահատեն զիրար իբրև եղբայրներ և օգնեն իրարու այս աշխարհի վրա, որ իր բազում բարիքներով բոլորին կպատկանի հավասարապես, այս արևին տակ, որ բոլորը կլուսավորե հավասարապես, միևնույն Աստուծո օրհնության ներքև, որ բոլորին կը բաշխվի հավասարապես»:

Որպեսզի մեր համագումարի ձայնը չլինի «ձայն բարբառոյ յանապատի», և որպեսզի մեր ազնիվ ցանկությունները ամրապնդվեն ոչ միայն հավատքով, այլև գործով, մեր պատվիրակությունը համագումարի քննարկմանն է ներկայացնում հետևյալ առաջարկությունները.

Միացնելով իր ձայնը աշխարհի առաջավոր ժողովուրդների ձայնին՝ մեր համագումարը առաջին հերթին դատապարտում է գաղութակալությունը, դատապարտում է ռասիզմը, դատապարտում է ապարտեիդը:

Երկրորդ՝ օգտակար և անհրաժեշտ ենք գտնում կազմել և ընդունել մի փաստաթուղթ, որի մեջ հստակորեն արտահայտվեն մեր տեսակետները այստեղ քննարկված բոլոր հարցերի վերաբերյալ:

Երրորդ՝ օգտակար ենք համարում մի ուղերձ ուղարկել Միավորված ազգերի կազմակերպությանը՝ պահանջելով մինչև վերջ գործադրել գաղութակալության վերացման մասին իր մշակած բանաձևը:

Այո, եկեղեցին իր խոսքն ունի ասելու ժամանակակից մարդկությանը:

Կատարենք ուրեմն մեր ազնիվ պարտքը»:

Հուլիսի 2-ին և 3-ին, հանձնախմբի աշխատանքային երկու օրերում էլ, խմբի հոգևորներից շատերը իրենց ելույթներում կանգ էին առնում ցեղասպանության ու ապարտեիդի հարցերի վրա և նշում, թե ինչպես պետք է պայքարել դրանց դեմ: Այդ տեսակետից հատկանշական էր մասնավորապես Ռուստովի առաջնորդ Տ. Իոան միտրոպոլիտի ելույթը. «Ցեղապաշտությունը, ցեղային խտրականությունը, — ասաց միտրոպոլիտը, — դժբախտաբար, ոչ միայն ստա-

տիկ, այլև դիմամիկ երևույթ է: Այն թողնում է սուկալի հետևանքներ»: Հոնտորը մատնանշեց, որ առաջին ցեղասպանությունը, որ Երիտասարդ թուրքերը անխղճորեն գործադրեցին հայ ժողովրդի հանդեպ 1915 թվականին, երբ գազանաբար խողխողվեցին շուրջ 2 միլիոն հայեր, գաղափարապես ծնունդ տվեց մի նոր, իր չափանիշով ավելի մեծ չարիքի՝ գերմանական ֆաշիզմին, որի զոհը դարձավ մի քանի տասնյակ միլիոն մարդ: Չարի սերմը աճում, բազմապատկվում և տալիս է իր պտուղները: Ահա թե ինչու մենք պետք է շատ ուշադիր լինենք զարգացող կամ այժմ ծննդի մեջ եղող ման չար երևույթների հանդեպ, որպեսզի պայքարենք դրանց դեմ և մարդկության միջից արմատախիլ անենք դրանք:

Հինգերորդ համաձայնագրովում մեծ հետաքրքրությամբ լսվեց նաև Վրաստանի թեմի առաջնորդ տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանի հետևյալ ճառը.

«Սրբազան եղբայրներ, պատվարժան հյուրեր,

Աստուծո ողորմությամբ, սուրբ Հոգու ներշնչումով և մեր Փրկչի լույս Ավետարանի գաղափարներով ոգեշնչված՝ հավաքվել ենք այս սրբազան վայրում:

Տարբեր կրոնների ու դավանանքների, ինչպես նաև տարբեր հասարակական կառույցվածք ունեցող երկրների հոգևոր ներկայացուցիչներին քննությանն ու արդարացի լուծմանն են ներկայացված մարդկության մակատագիրը որոշող ու ապագա խաղաղ կյանքը ապահովող մի շարք առաջնահերթ և անհետաձգելի խնդիրներ:

Այս երևույթը ինքնին վերցրած վկայությունն է այն մեծ վստահության, թե մեր հոգեվոր առաջնորդության վստահված հավատացյալ ժողովուրդները ինչպիսի սրբազան գործ են վստահել մեզ, և թե ինչպիսի պատասխանատվության զգացումով պետք է որ մենք համագործակցենք աշխարհի խաղաղության գործում:

Քրիստոնեական եկեղեցիների և տարբեր կրոնների դավանող ժողովուրդների պատմությունը շատ հարուստ է փաստերով, երբ հոգևոր հայրեր ի մի են հավաքվել ճշտելու համար զանազան տարակարծություններ կամ պայքարելու համար եկեղեցու ուղղափառությունը եղծող բազմապիսի երևույթների դեմ: Այդ համագումարներում և ժողովներում շատ կարևոր որոշումներ են ընդունվել աստվածաբանական կամ կենցաղային զանազան խնդիրների վերաբերյալ:

Սուրբ Հոգու ներշնչմամբ եղած այդ որոշումների շնորհիվ ամրապնդվել է եկեղեցին, ու դրանով էլ մարդիկ ու ժողովուրդներ ապրել են խաղաղ ու երջանիկ: Սա մի գեղեցիկ

ու պատմական ապացույց է, թե որքան դրական բան կարելի է անել, երբ պատասխանատու անձինք բարյացակամության և համագործակցության ոգով են կատարում իրենց աշխատանքը:

Մեր նպատակը այստեղ գրեթե չի առնչվում աստվածաբանական, դավանական ու կրոնական խնդիրների հետ: Մենք այս անգամ հավաքվել ենք այստեղ հետապնդելու համար միայն մի նպատակ՝ միավորել ու համագործակցության ոգին ամրապնդել բոլոր տեսակի կրոնական հաստատությունների հոգևորական աշխատողների մեջ, շեշտում ենք, առանց կրոնի ու դավանանքի խտրության, միասնական այդ ամբողջ ուժը պետք է ծառայեցնել աշխարհի խաղաղության ու ժողովուրդների բարեկամության գործին:

«Չիք խտիր, ոչ հրէի, և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի և ոչ իգի, զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս» (Գաղ. Գ 23):

Այս իմաստով, սույն պատկանելի ժողովրդ ժողովուրդների և կրոնների պատմության մեջ, գուցե առաջինն է և ամենաներկայացուցչականը. դրանով իսկ խոսքը, որ մենք կանենք սույն բարձր ամբիոնից, կլինի աստվածահաճո ու սուրբ Հոգուց ներշնչված: Կլինի լսելի ոչ միայն մեր ժողովուրդներից, որոնց մենք ներկայացնում ենք, այլև աշխարհի բոլոր առաջադեմ մարդկանց կողմից: Մեր խոսքը միաժամանակ պատկանում է կազդի բոլոր նրանց, ովքեր կոչված են իրենց պաշտոնի բերումով աշխարհի ու ժողովուրդների բախտը որոշելու, մարդկանց, որոնք ինչ-ինչ հաշիվներով այնքան էլ շահագրգռված չեն աշխարհի խաղաղությամբ ու ժողովուրդների բարեկամությամբ:

Մենք այստեղ պետք է մեր ձայնը և կամքը միացնենք աշխարհի բարի կամքի տեր մարդկանց գործին, խաղաղության համաշխարհային խորհրդի կատարած աշխատանքներին, որպեսզի չարագործ ձեռքեր երբեք չկարողանան խորտակել մարդկության երջանիկ ապագան, որպեսզի կուտակված աշխարհակործան զենքերը՝ ժողովուրդների սիրտ ու բարեկամության ջերմությունից ձուլվելով, դառնան խոփ, գերանդի, տրակտոր, հեռախոսի և էլեկտրական լույս բաշխող սյուն, որպեսզի մարդիկ ապրեն երջանիկ ու բնության բարիքներից օգտվեն առատորեն:

Ահա թե ինչու ենք հավաքվել այստեղ, և ինչ են ապաստման մեզանից մեր ժողովուրդները: Կարդարացնենք նրանց սպասելիքները, կկատարենք նրանց ցանկությունը, միաժամանակ կատարած կլինենք Աստուծո կամքը:

Ահա թե ինչու բոլոր ժամանակներից ավելի մեր օրերին այնքան կենսականորեն անհրաժեշտ է բոլոր հոգևոր կենտրոնների ու նրանց գործիչների համագործակցությունը, որի համար միշտ աղոթող ենք:

«Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տեր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա ի մեզ»:

Նույն հանձնաժողովում, ի պաշտպանություն խաղաղության և ժողովուրդների եղբայրության, հանդես եկավ հայ եկեղեցու պատվիրակության անդամ Պարզև Ծահրազյանը իր հետևյալ խոսքով:

«Հարգելի քրիստոնյա եղբայրներ,

Այս պատկառելի հանձնաժողովում, որպես Հայաստանյայց առաքելական եկեղեցու պատվիրակության անդամ, պատվիրակություն, որին գլխավորում է հայ եկեղեցու պետ Նորին Սուրբ Օծություն Ս. Տ. Վազգեն Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսը, կը ցանկանայի խոսք առնել՝ արտահայտելու համար իմ մտքերը:

Աստվածահաճո և մարդասիրական մի վեհ գործ հավաքել է մեզ այստեղ: Դա ողջ երկրագնդի վրա խաղաղության պաշտպանության գործը է՛լ ավելի կազմակերպելու և է՛լ ավելի արդյունավետ դարձնելու ձրգտումն ու նպատակն է:

Դեռ թարմ է բոլորիս հիշողության մեջ վերջերս հեղինակի խաղաղության համաշխարհային համագումարում ընդունված խաղաղության պաշտպանության կոչը՝ ուղղված կրոնական, քաղաքական և հասարակական տարբեր տեսակետների, համոզմունքների տեր միլիոնավոր մարդկանց, գիտնականներին, աշխարհի բոլոր ծնողներին, աշխատավորությանն ու ուսանողությանը՝ միակամ և միասիրտ փնտրելու նոր ուղիներ աշխարհում մնալուն խաղաղության գոյալիճակը և ժողովուրդների միջև համագործակցության ոգին ամրապնդելու և խորացնելու համար:

Ու այսօր պատահական չէ, որ ռուսական այս սուրբ և հինավուրց վանքի կամարների տակ հավաքվել ենք Արևելքի և Արևմուտքի քրիստոնյա եկեղեցիների և այլ կրոնների ներկայացուցիչները՝ մեր աշխատանքը և աղոթքները ևս միացնելու այն սրբազան ձեռնարկներին, որոնց նպատակն է վերջնական ու երկարատև խաղաղության հաստատումը երկրի վրա և հաշտությունն ու համագործակցությունը եկեղեցիների և կրոնների միջև:

Սակայն ես կարծում եմ շատ քիչ է միայն խաղաղություն ցանկալը, նույնիսկ աղոթելը խաղաղության համար: Ըստ Ավետարանի, խաղաղության պաշտպանությունն ու պաշարը խաղաղության համար ամուր կամքի տեր, հավատք ու տեսիլք ունեցող մարդ-

կանց գործն է: Խաղաղությունը Աստուծո պատգամն է և կամքը: Ավետարանում խաղաղության համար պաշարողները, խաղաղություն անողները Աստուծո որդիներ են կոչվում: Քրիստոնեական մեր հավատքը հիմնված է խաղաղության պատգամի վրա:

Մեր հայ եկեղեցին ու ժողովուրդը, որոնք դարեր շարունակ զուրկ են մնացել խաղաղության բարիքներից, այնուամենայնիվ ամեն օր աղոթում են աշխարհի և մարդկության խաղաղության համար:

Այսօր, ավելի քան երբևէ, երբ մոլեգնում է պատերազմը՝ Վիետնամում, և իմպերիալիստները Աստուծո բարիքներով գեղեցկացած այս աշխարհը փորձում են դժոխքի վերածել, բոլորիս համար հանապազօրյա հացի և արևի չափ անհրաժեշտ է խաղաղությունը: Ատոմային և ջրածնային պատերազմի սպառնալիքներով հղի այս օրերին ի՞նչ կարող են անել եկեղեցիները և այլ կրոնական դավանությունները: Քրիստոսի եկեղեցին ո՛չ թեոսանոթ ունի և ո՛չ ատոմական զենք: Մեր աշխատանքի հիմնական նպատակը, ուրեմն, պիտի լինի պատերազմի հրձիգների խիղճը ցնցել, նրանց մեջ զարթեցնել մեռած աստվածային ոգին: Ու այդ կարող ենք անել միատեղ ու միասնական աշխատանքով: Յուրաքանչյուր մեր երկրում պետք է համախմբենք խաղաղության դրոշի տակ բոլոր ազնիվ մարդկանց, անխընձ մերկացնենք պատերազմի հրձիգներին ու վերջնականապես փակենք պատերազմ առաջացնող բոլոր ուղիները:

Երկրորդ կարևոր քայլը աշխարհի բոլոր ժողովուրդների միջև զգոնության բարձրացումն է, որպեսզի նրանք երբեք չօժանդակեն պատերազմ ծնող ձեռնարկներին և, վճռական պահին, որպես նույն երկնավոր Հոր զավակներ, զենքերը ցած դնեն, հակառակ դեպքում նույնիսկ այդ զենքերը դարձնեն պատերազմ դարբնող մույթ ուժերի դեմ:

Մենք հավատում ենք, որ եթե ժողովուրդների և կրոնական կազմակերպությունների մեջ արմատաճախ Աստուծո հայրության և բոլոր մարդկանց եղբայրության գաղափարականը, ոչ ոք իր եղբոր դեմ սուր չի վերցնի, ընդհակառակը, սրերն ու թնդանոթները կվերածվեն խոփերի ու մանգաղների, և մարդիկ կսպարեն խաղաղ ու երջանիկ՝ վայելելով այն բոլոր բարիքները, որ Աստված շնորհել է երկրագնդի բոլոր ժողովուրդներին, առանց ցեղի, գույնի, սեռի, հասակի և քաղաքական ու կրոնական համոզմունքների տարբերության:

Մենք վստահ ենք, որ խաղաղությունը կհաղթի պատերազմին, ինչպես լույսը՝ խավարին, սերը՝ ատելությանը, կյանքը՝ մահին:

Այս զգացումներով ողջունում են մեր հանձնաժողովի աշխատանքը և հանուն հայ եկեղեցու պատվիրակության հայտնում են, որ հայ եկեղեցին միշտ կմիացնի իր ջանքերն ու աղոթքները այս համագումարի բոլոր պատգամավորների, եկեղեցիների ջանքերին՝ պայքարելու համար պատերազմի դեմ՝ Վիետնամում, Մերձավոր Արևելքում ու բոլոր այլ վայրերում՝ հանուն Աստուծո փառքի և մարդկության բարօրությանը:

Երկրորդ հանձնաժողովում անգլերեն լեզվով գեղեցիկ ու տպավորիչ ելույթ ունեցավ նույնպես Վիեննայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեարոպ Ծ. վրդ. Գրիգորյանը:

Համագումարի հինգ հանձնաժողովներում էլ օրակարգի վրա դրված հարցերի շուրջ, տեղի ունեցան աշխույժ բանավեճեր, արդյունավետ մտքերի փոխանակություն, և քննարկվող հարցերի վերաբերյալ ընդունվեցին համապատասխան փաստաթղթեր՝ ներկայացնելու հաջորդ օրվա եզրափակիչ լիագումար նիստին ի հաստատություն:

Այսպիսով, Ջագորսկի խաղաղության համաժողովի հինգ հանձնաժողովները հուլիսի 3-ի երեկոյան ավարտեցին իրենց աշխատանքը:

Ա Յ Ց Ե Լ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Հուլիսի 2-ին Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Ռումինիայի պրավոպալ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ Տ. Նիկոլայ միտրոպոլիտի և ս. Սիմոնի անդամ տ. Անտիմ եպիսկոպոսի հետ: Նույն օրը Վեհափառ Հայրապետին այցելեցին համագումարին հյուրաբար հրավիրված Միացյալ ազգերի կազմակերպությանը կից եկեղեցական կենտրոնի ներկայացուցիչ հայր դոկտ. Կարլ Սուոլը՝ Նյու-Յորքից, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ներկայացուցիչ հայր Ռոբին Ստրոնկը՝ Ժնևից, Վատիկանի «Խաղաղություն և արդարություն» հանձնաժողովի ներկայացուցիչ Կրն. Ժան Դ'Առոն, ինչպես նաև Անտիոքի եկեղեցու միտրոպոլիտներ Տ. Պավել Խուրին, Վասիլը ու Ռոման վարդապետը:

Վեհափառ Հայրապետի և քաղաքավարական այցով Նրա մոտ եկող հյուրերի միջև տեղի ունեցավ ջերմ և բարեկամական գրույց:

Վեհափառ Հայրապետի հրավերով դոկտ. Կարլ Սուոլը համագումարից հետո եկավ ս. Էջմիածին և հյուրը եղավ Նորին Սրբության: Մեծարգո հյուրը դիտեց Մայր Աթոռի շրջակայքի տեսարժան վայրերը և այցելեց Գեղարդա վանք:

Հուլիսի 3-ի երեկոյան տ. Գնել և տ. Կո-

միտաս եպիսկոպոսների ընկերակցությամբ Վեհափառ Հայրապետը իր հերթին քաղաքավարական այց տվեց համայն Վրաց պատրիարք և կաթողիկոս Տ. Եփրեմ Բ-ին:

Նույն օրը, երեկոյան ժամը 10-ին, համագումարի բոլոր պատգամավորներն ու արտասահմանյան հյուրերը Ջագորսկի հոգևոր ճեմարանի ընդարձակ դահլիճում մեծ համույթով դիտեցին 1962 թ. պատրաստված «Ս. Մյուռոնի օրհնությունը ս. Էջմիածնում» կինոժապավենը:

Հուլիսի 4-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 9-ին, Ջագորսկի զանգակատան մեծ շենքի կամարների տակ խաղաղության համաժողովը հավաքվեց իր հերթական լիագումար նիստին:

Չորրորդ նիստ: Նախագահում է Լատվիայի ավետարանական-լուծարական եկեղեցու արքեպիսկոպոս տ. Յանիս Մատուլիսը: Օրակարգում կա երկու հարց. ա) Աշխատանքային հանձնաժողովների նախագահության կողմից ներկայացված զեկուցումների քննարկում, բ) համաժողովի ընդհանուր փաստաթղթերի նախնական ընթերցում:

Օրակարգում դրված հարցերի շուրջ ելույթներով հանդես են գալիս ՍՄԶՄ խաղաղության ընդհանուր ֆոնդի քարտուղարության անունից ժողովին հյուրաբար ներկա գտնվող Գ. Տիխոնովիչը և ուրիշներ: Ապա դարձյալ ողջույնի խոսքերով ելույթ են ունենում պատտոր Ռիչարդ Անդրիամանջատուն (Մադագասկար), պրոֆ. Սումեր Չանդրին (Հնդկաստան-Ինդոն), Նեպալի բողոքական համայնքի հայտնի հասարակական գործիչ Ամիրդան: Անդան, համաքրիստոնեական խաղաղության համաժողովի քարտուղարության ներկայացուցիչ դոկտ. Օնդրան (Պրագա), ԱՄՆ-ի ներկայացուցիչ դոկտ. Հարոլդ Ռոուին և ուրիշներ:

Նիստի վերջում համաժողովը լսարանի առաջ կարդաց երեւելի մարդկանց և եկեղեցիների ղեկավարների համագումարին հասցեագրած հեռագրերն ու շնորհավորանքները. ընթերցվեցին Կիպրոսի կառավարության և եկեղեցու պետ տ. Մակարիոս արքեպիսկոպոսի, Վատիկանից՝ կարդինալ Մ. Ռուալայի, Գ.Է-ի, Ժապոնիայի, Լիբիայի, Պարսկաստանի, Ինդոնեզիայի, Լեհաստանի, Գ.ՖՀ-ի, Չեխոսլովակիայի և շատ այլ երկրների կրոնական ու հասարակական մեծ գործիչների հեռագրերը:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՓԱԿՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 5-ին, համաժողովը հավաքվում է իր վերջին եզրափակիչ լիագումար նիստին: Սույն նիստը գու-

մարվում է Ամենայն Հայոց Հայրապետի քարձր նախագահության տակ:

Օրակարգի հարցերն են. ա) Համաժողովի փաստաթղթերի հաստատում. բ) Համաժողովի փակում:

Այս նիստում ևս ներկայացված փաստաթղթերի շուրջ պատգամավորների և արտասահմանյան հյուրերի միջև ծավալվում է մտքերի լայն փոխանակություն: Բոլոր հոգևորների ելույթների մեջ իշխում էր ազատ կամքն ու եղբայրական անկեղծ ոգին: Բոլորն էլ քննարկվող հարցերին մոտենում էին որպես հավատացյալ մարդ, որպես խաղաղության ջերմ կողմնակից, որպես ժողովուրդների եղբայրության ու համագործակցության ջատագույն:

Հուլիսի 2-ին և 3-ին, բացի համագումարի հինգ հանձնաժողովների աշխատանքներից, համաժողովի շրջանակներում ընդհանուր կարգով տեղի ունեցավ նաև երեք, այսպես կոչված, պանելային բանավեճեր: Բացատրության կարգով նշենք, որ այսպիսի բանավեճերը համագումարի ընդհանուր աշխատանքներին զուգընթաց օժանդակ մի ձև են, որոնք հնարավորություն են տալիս մասնակիցներին առավել խորանալու այս կամ այն խնդրի մեջ, խնդիրներ, որոնք դրվում են օրակարգից դուրս՝ նոր վերնագրերով:

Համագումարի աշխատանքային հինգ հանձնախմբերի կազմած հայտարարությունների նախագծերը ամեն մի աշխատանքային խմբի ղեկավարի կողմից մեկ առ մեկ

համաժողովին ներկայացվելուց հետո միաձայն քվեարկությամբ ընդունվեցին և դարձան պատմական փաստաթուղթ:

Առաջին աշխատանքային հանձնախմբի անունից նախագիծ-փաստաթուղթը կարդաց խմբի քարտուղար և Լիտվայի հոռմեական կաթոլիկ եկեղեցու պատգամավոր տ. Բրոլիազ քահանան, երկրորդ հանձնաժողովի անունից՝ քարտուղար տ. Պալել քահանան (ոռու պրավոսլավ եկեղեցի), երրորդ խմբի անունից՝ քարտուղար Ս. Պ. Ֆադյուխինը, չորրորդ խմբի անունից՝ այդ խմբի քարտուղար, Լենինգրադի մզկիթի իմամ Ֆաջեր-ռահման Սատտարովը, իսկ վերջին՝ հինգերորդ խմբի հայտարարությունը կարդաց Լենինգրադի հոգևոր ճեմարանի պրոֆեսոր տ. Վարոնով ավագ քահանան:

Յուրաքանչյուր հայտարարության մեջ պարզ և մեկին երևում էին բոլոր կրոնների սկզբունքներից բխած աստվածային արդար ու բարի պահանջներ: Բոլոր փաստաթղթերում էլ կոչ էր արված աշխարհի բոլոր բարի կամքի տեր մարդկանց, հավատացյալ կամ ոչ, պայքարել վստահ խաղաղության, արդարության և ճշմարտության:

Համագումարի եզրափակիչ նիստում ընդունվեցին նաև երկու կարևոր փաստաթղթեր. առաջինը համագումարի հետևյալ կոչն էր՝ ուղղված համայն աշխարհի հավատացյալներին և բարի կամքի տեր մարդկանց ժողովուրդների միջև համագործակցության ու խաղաղության համար:

**ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԿՐՈՆՆԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹՅՆԵՐԻ ԿՈԶԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՅՆ
ԱՇԽԱՐՀԻ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ ԵՎ ԲԱՐԻ ԿԱՄՔԻ ՏԵՐ
ԲՈԼՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

Սիրելի բարեկամներ, եղբայրներ և քույրեր, բարի կամքի տեր մարդիկ, **Մենք՝ Սովետական Միության բոլոր կրոնների ներկայացուցիչներս**, մեր արտասահմանյան հրավիրյալների հետ միասին, հավաքվել ենք Զագորսկի սուրբ Երրորդության վանքում՝ քննարկելու միջազգային քաղաքական դրությունը, որ ինչպես մեզ, այնպես էլ բարի կամքի տեր բոլոր մարդկանց մտահոգություն է պատճառում, և որոնելու ուղիներ ու միջոցներ՝ երկրագնդի բոլոր ժողովուրդների միջև համագործակցության և խաղաղության գործին մեր ծառայությունը բերելու համար:

Մենք՝ քրիստոնյաներ և բուդդայականներ, մահմեդականներ և հրեաներ, մեր վրա դրված պարտքի զգացումից մղված՝ եկել ենք այստեղ, որպես ջերմեռանդ հավատացյալներ մեր դավանած կրոնների, որոնք մեզնից պահանջում են հետևել խաղաղության և արդարության ճանապարհին, հանդես գալ

մարդկանց կյանքում արդարության և սիրո պակասի ամեն տեսակ դրսևորումների դեմ, պաշտպանել ժողովուրդների խաղաղ կյանքը և օգնել նրանց՝ զարգացնելու իրենց փոխադարձ հարաբերությունները հօգուտ մարդկային ընդհանուր առաջընթացի:

Այս կապակցությամբ մեր ուշադրությունը բևեռեցինք այն մտահոգիչ և վտանգավոր կացության վրա, որը տիպական է այսօրվա մեր աշխարհի համար:

Մենք համոզված ենք, որ բոլոր կրոնների ներկայացուցիչների ձայնը ամենից առաջ պետք է ուղղված լինի վիետնամական ժողովրդի չղադարող ողբերգությանը: Մենք պահանջում ենք վերջ տալ Միացյալ Նահանգների ու նրանց դաշնակիցների ագրեսիային Վիետնամում: Մենք համերաշխ ենք Վիետնամի հերոսական ժողովրդի և Հարավային Վիետնամի հանրապետության ժամանակավոր հեղափոխական կառավարության հետ: Մենք ողջունում ենք հարավային Վիետնամի հանրապետության ժամանակավոր հեղափոխական կառավարության կողմից Փարիզյան բանակցություններում առաջարկված ճիշտ և արդար ծրագիրը և կոչ ենք անում Միացյալ Նահանգների կառավարությանը դրական վերաբերմունք ցույց տալ այդ առաջարկություններին ու այդ ձևով հեշտացնել խաղաղության հաստատումը Վիետնամում:

Մենք համոզված ենք, որ կայուն խաղաղության ստեղծումը Եվրոպայում հրատապ և կարևոր խնդիր է: Մենք գտնում ենք, որ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության ճանաչումը այն երկրների կողմից, որոնք դեռևս չեն առել այդ քայլը, Գերմանիայի Ֆեդերալ Հանրապետության հրաժարումը Եվրոպայում ետպատերազմյան սահմանների վերանայումից, նրա հրաժարումը երկրի՝ ռազմականացումից ու միջուկային զենք ձեռք բերելու նկրտումներից, ինչպես և ֆաշիզմի վերածնունդին ընթացք չտալը, դիկտատուրական վարչաձևերի վերացումը Հունաստանում, Իսպանիայում և Պորտուգալիայում,—այս բոլորը կարևոր երաշխիք կհանդիսանալին խաղաղության կայունացմանը: Մենք հավանություն ենք տալիս համաեվրոպական մի համաժողով գումարելու առաջարկությանը՝ ուսումնասիրելու համար մեր ցամաքամասի ապահովությանն ու եվրոպական երկրների խաղաղ համագործակցությանը վերաբերող հարցերը, և գտնում ենք, որ մնան մի առաջարկություն մեծապես կնպաստի առաջիկայում Եվրոպայում և ամբողջ աշխարհում խաղաղության կայունացմանը: Եվրոպայի ժողովուրդները ցանկանում ենք ապահովված տեսնել իրենց ցամաքամասի ապագան ոչ թե իրար հակադրված քաղաքական ու ռազմական խմբավորումների և սպառնալիքությունների ավելացման մեջ, այլ համաեվրոպական համագործակցության մեջ:

Մենք մեր մտահոգությունն ենք արտահայտում Մերձավոր Արևելքի սրբազան հողի վրա առաջացած տագնապի կապակցությամբ, տագնապ, որի գլխավոր պատճառը իսրայելյան ագրեսիան է, և որի հետևանքով արաբական բազմաթիվ երկրների հողամասեր բռնագրավվեցին: Մենք պաշտպանում ենք արդարացի պայքարը արաբական ժողովուրդների, որոնք մարտնչում են ազգային անկախության և իրենց պետությունների ինքնուրույնության համար: Պահանջում ենք, որ Մերձավոր Արևելքում վերահաստատվի խաղաղությունը:

Մենք բարի կամքի տեր բոլոր մարդկանց ուշադրությունը հրավիրում ենք այն փաստի վրա, որ իմպերիալիստական ուժերը դեռևս շարունակում են գաղութակալության և նոր-գաղութակալության, ռասիզմի և ապարտեյդի իրենց քաղաքականությունը, ճնշում ու շահագործում են Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրներին:

տիմական Ամերիկայի ժողովուրդներին՝ այդ երկրների բնական հարստությունները սեփականացնելու, հարստացնելու և իրենց տիրապետությունը պահպանելու համար: Այդ ուժերը ամեն կերպ փորձում են ճնշել ժողովուրդների ազգային ազատագրական պայքարը և կասեցնել նոր զարգացող երկրների ընկերային ու տնտեսական առաջընթացը:

Մենք չենք կարող անտեսել զինաթափման և, առաջին հերթին, միջուկային զինաթափման հարցը, որը մեր ժամանակի կարևորագույն հարցերից մեկն է: Կոչ ենք անում այն երկրների կառավարություններին, որոնք դեռևս չեն ստորագրել միջուկային զենքը չտարածելու վերաբերյալ պայմանագիրը, միանալ այդ պայմանագրին: Հրավիրում ենք բոլոր պետություններին միասնաբար որոնել զինաթափման ուղիները և քայլ ա քայլ հետևել դրանց:

Մենք պաշտպանում ենք Մոսկվայում կայացած կոմունիստական և բանվորական կուսակցությունների միջազգային համագումարի կողմից ի խնդիր խաղաղության պաշտպանության բանաձևված կոչի մեջ հավատացյալներին ուղղված դիմումը, մեր հավանությունն ենք հայտնում այդ դիմումի մեջ արտահայտված իրապաշտ առաջարկություններին և պատրաստ ենք մեր մասնակցությունը բերելու մեր երկրագնդի վրա խաղաղության սրբազան գործի պաշտպանության համար մղվող ընդհանուր պայքարին:

Մենք կոչ ենք անում աշխարհի բոլոր հավատացյալներին, բարի կամքի տեր բոլոր մարդկանց՝ առավել մեծ մասնակցություն ունենալ կայուն ու արդարացի խաղաղության, ինչպես և ժողովուրդների միջև համագործակցության համար մղվող սրբազան պայքարին:

Մենք գիտենք, որ դավաճանքների տարբերությունները, ինչպես նաև բարի կամքի տեր բազմաթիվ մարդկանց անկրոնությունը մեզ չեն կարող արգելել միասնաբար տրամադրելու մեր ուժերը մարդկային հասարակությանը ծառայելու օգտին, այդ լինի տեղական, ազգային թե միջազգային մակարդակով:

Միևեկ բարեկամներ ու եղբայրներ, սրտագին կոչ ենք ուղղում ձեզ պայքարելու կայուն և արդարացի խաղաղության համար և խաղաղ մայատակներով ծավալվող մեր գործունեությանը մոտեցնելու խաղաղության և տիեզերական բարօրության գալուստը երկրի վրա:

Մենք մեր սրտերը տալով այս մեծ գործին՝ մեր ձեռքերը մեկնում ենք ձեզ հավաքական գործակցության համար:

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳԱՂՈՒԹԱԿԱԼՈՒԹՅԱՆ, ՆՈՐ-ԳԱՂՈՒԹԱԿԱԼՈՒԹՅԱՆ, ՌԱՍԻՉՄԻ
ԵՎ ԱՊԱՐՏԵՒԴԻ ՄԱՍԻՆ

Մենք՝ ՍՍՀՄ բոլոր կրոնների և քրիստոնեության համաժողովի մասնակիցներս, հիմնվելով այն անառարկելի ճշմարտության վրա, թե բոլորանդակ մարդկությունը սերված է միևնույն արյունից և, հետևաբար, բոլոր մարդիկ արյունակից եղբայրներ են միմյանց, վճռականապես դատապարտում ենք ամեն մի խտրականություն մարդկանց մաշկի գույնի, նրանց ցեղի և ընկերային ծագման պատճառով և հաշտարարում, որ մարդկանց անհավասարության կեղծ սկզբունքի վրա հիմնված ժողովուրդների ամեն տեսակի ճնշում հակառակ է Աստուծո օրենքին և արդարությանը:

Երկրագնդի բոլոր մարդիկ, անկախ իրենց ազգությունից, ցեղային պատկանելիությունից, հասարակական կյանքում իրենց ունեցած դիրքից, քաղաքական հայացքներից և կրոնական համոզմունքներից, պետք է միաճան՝ գործում կերպով պաշտպանելու համար մարդկային անհատն ու նրա իրավունքները:

Մենք միահամուռ կերպով պաշտպանում ենք նոր զարգացող երկրների ժողովուրդներին՝ իմպերիալիզմի, քաղաքական ու տնտեսական ճնշման, գաղութակալության և նոր-գաղութակալության դեմ իրենց մղած պայքարում:

Մենք պաշտպանում ենք այդ երկրների ամբողջական ազատությունն ու անկախությունը:

Բացարձակապես դատապարտում ենք ռասիզմի և ապարտեիդի քաղաքականությունը, որտեղ էլ որ երևան գա այդ չարիքը:

Մենք հայտարարում ենք, որ մարդու կողմից մարդու դեմ գործադրվող ամեն ճնշում և մի ժողովրդի կողմից մի այլ ժողովրդի ստրկացման ամեն մի փորձ, նրա կամքի, խղճի և կյանքի դեմ կատարվող ամեն բռնություն մեղք է Աստուծո առաջ ու նախատինք այն ժողովուրդների համար, որոնց կառավարությունները գործադրում են դրանք:

Մենք ջերմորեն պաշտպանում ենք նոր զարգացող երկրների ժողովուրդների տենչանքը իրենց պետությունների քաղաքական անկախության նկատմամբ, պաշտպանում ենք տնտեսության, կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում հաջողության հասնելու նրանց ազնիվ ցանկությունը:

Արդարությունն ու խաղաղությունը պետք է հաղթանակեն երկրի վրա:

Համագումարը ընդունում է նաև հետևյալ պաշտոնական հաղորդագրությունը.

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1969 թ. հուլիսի 1—4-ը Ջագորսկ քաղաքում տեղի ունեցավ ՍՍՀՄ բոլոր կրոնների ներկայացուցիչների համաժողով վասն խաղաղության և ժողովուրդների միջև համագործակցության:

Սովետական Միության եկեղեցիների և բոլոր կրոնական համայնքների ներկայացուցիչները, ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդման նկատմամբ իրենց զգացած կրոնական պատասխանատվությունից մղված և գիտակցելով շարունակաբար սրվող միջազգային դրության հետևանքով աճող վտանգի սպառնալիքը, Մոսկվայի և համայն Ռուսաստանի պատրիարք Տ. Ալեքսիի նախաձեռնությամբ հավաքվեցին ս. Սերգեյի Երրորդության վանքում, որպեսզի համակողմանիորեն քննարկեն աշխարհի ժամանակակից իրադրության հիմնական հարցերը և նախագծեն այն միջոցառումները, որոնց իրագործումը հավատացյալների կողմից կկարողանան իրապես նպաստել ժողովուրդների միջև խաղաղության և բարեկամության ամրապնդմանը:

Համաժողովի աշխատանքներին մասնակցեցին Սովետական Միության տարբեր ազգություններին պատկանող 175 պատգամավորներ, որոնց այս նպատակով Ջագորսկ էին ուղարկել հետևյալ եկեղեցիներն ու կրոնական համայնքները. Յոթներորդ օրվա աղվենտիսների համայնքը, Հայաստանյայց

Առաքելական եկեղեցին, Ավետարանական քրիստոնյա-մկրտչականների Համամիութենական Խորհուրդը, Լիտվայի Հին-ծիսականների Բարձրագույն Խորհուրդը, Վրացական Ուղղափառ Եկեղեցին, Սիբիրի և Սովետական Միության եվրոպական մասի մահմեդականների Հոգևոր Վարչությունը, Ղազախստանի և Միջին Ասիայի մահմեդականների Հոգևոր Վարչությունը, Անդերկովկասի մահմեդականների Հոգևոր Վարչությունը, Հյուսիսային Կովկասի մահմեդականների Հոգևոր Վարչությունը, Լատվիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցին, Էստոնիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցին, Լիտվայի Ավետարանական-Լութերական Եկեղեցին, Հրեական կրոնական համայնքները, Էստոնիայի Մեթոդիստական Եկեղեցին, Մոսկվայի Պոմորյան համաձայնության քրիստոնյա հին-ծիսականների համայնքը, Մոսկվայի Պատրիարքությունը, Մոսկվայի Այլակերպության հին-ծիսականների համայնքը, Ուկրաինայի Անդրկարպատյան մարզի Ռեֆորմատ Եկեղեցին, Լիտվայի Ավետարանական Ռեֆորմատ Եկեղեցին, Լատվիայի Հռոմեական-Կաթոլիկ Եկեղեցին, Լիտվայի Հռոմեական-Կաթոլիկ Եկեղեցին, Ռիգայի Գրեքնշիկյան հին-ծիսական համայնքը, Մոսկվայի և համայն Ռուսաստանի հին-ծիսական արքեպիսկոպոսությունը, Մոսկվայի և համայն Ռուսաստանի վաղնջական-ուղղափառ քրիստոնյաների մովոդիբկովյան հին-ծիսական արքեպիսկոպոսությունը և ՍՍՀՄ Բուդդայականների Կենտրոնական Հոգևոր Վարչությունը:

Համաժողովի պատվիրակների մեջ կային բազմաթիվ ականավոր կրոնական գործիչներ՝ եկեղեցիների և հոգևոր վարչությունների ղեկավարներ, հասարակական հեղինակություն վայելող ճանաչված դեմքեր, ճշմարտորաստվածաբաններ և հոգևոր առաջնորդներ: Համաժողովին, որպես հյուր, մասնակցում էին Ասիայի, Աֆրիկայի, Հյուսիսային և Լատինական Ամերիկայի ու Եվրոպայի 44 երկրների աչքի ընկնող կրոնական գործիչներ:

Համաժողովը բացվեց Մոսկվայի և համայն Ռուսաստանի պատրիարք Նորին Սրբություն Տ. Ալեքսիի բացման ճառով: Համաժողովին ողջույնի ուղերձ էր հղել ՍՍՀՄ Միևնաստների սովետի նախագահ Ա. Ն. Կոսիգինը, որը համաժողովի մասնակիցներին հաջողություն էր մաղթում իրենց խաղաղարար աշխատանքներում: Այս ուղերձը մեծ ոգևորությամբ ընդունվեց համաժողովի մասնակիցների կողմից, որոնք Կոսիգինին ուղղված իրենց պատասխան-ուղերձի մեջ սրտագին շնորհակալություն հայտնեցին նրան:

Համաժողովի աշխատանքի առաջին օրը ռուս պրավոսլավ եկեղեցու սուրբ Սինդի անդամ, Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ Նիկողիմը ընթերցեց հիմնական զեկուցումը համաժողովի գլխավոր թեմայի շուրջ:

Համաժողովում ողջույնի խոսքերով հանդես եկան արտասահմանյան բազմաթիվ հայտնի կրոնական գործիչներ և եկեղեցիների ու միջազգային կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նրանց ելույթներում խոր անհամաձայնություն էր զգացվում աշխարհի ճակատագրի համար: Ելույթ ունեցողներից շատերը իրապաշտ վերլուծության ենթարկեցին հողագնդի այն շրջանների բարդ ու երբեմն ողբերգական դրությունը, որտեղից նրանք եկել էին, և խոսեցին այն արմատական ուղիների ու միջոցառումների մասին, որոնցով հնարավոր կլիներ փոխել այդ դրությունը դեպի լավը:

Հուլիսի 2-ին և 8-ին համաժողովի մասնակիցները իրենց աշխատանքները շարունակեցին հինգ աշխատանքային համձնախմբերում: Դրանցից առաջինը, որտեղ կարդացվեց ավետարանական քրիստոնյա-մկրտչականների համամիութենական խորհրդի գլխավոր քարտուղար Ա. Վ. Կարևի զեկուցու-

մը, քննության առավ Վիետնամի և Հարավ-Արևելյան Ասիայի խնդիրները: Երկրորդ հանձնախումբը, որտեղ զեկուցեց Վիլնյուսի հոռմեական-կաթոլիկ թեմի առաջնորդ գերաշնորհ Չեպովաս Կրիվայտիսը, քննարկեց Եվրոպայի ամվտանգության հարցերը: Երրորդ հանձնախումբը, որտեղ զեկուցումով հանդես եկավ Ղազախստանի և Միջին Ասիայի մահմեդականների Հոգևոր Վարչության նախագահ Մուֆթի Ջուայթին Բաբախանովը, քննարկեց Մերձավոր Արևելքի տագնապը: Չորրորդ հանձնախումբը, որտեղ զեկուցում կարդաց Հայաստանյայց առաքելական եկեղեցու ներկայացուցիչ, Արարատյան թեմի թեմական խորհրդի ատենապետ պրոֆ. Ս. Կ. Արևշատյանը, քննարկեց գաղութակալության և մոր-գաղութակալության, ռասիզմի և ապարտեիդի դեմ մղվող պայքարի խնդիրները: Հինգերորդ հանձնախումբը, որտեղ զեկուցումով հանդես եկավ ռուս պրավոսլավ եկեղեցու ս. Սինդոդի անդամ, Ուկրաինայի Էկզարխ, Կիևի և Գալիցիայի միտրոպոլիտ Ֆիլարետը, քննարկեց տարբեր կրոնների համատեղ ջանքերի հիմքերը, պրակտիկան և հեռանկարները ի պաշտպանություն խաղաղության և ժողովուրդների միջև համագործակցության:

Աշխատանքային հանձնախմբերի մասնակիցները՝ համաժողովի պատգամավորներն ու հյուրերը, մեծ եռանդով քննարկեցին իրենց առաջ դրված հարցերը:

Վիետնամի ժողովրդի մղած հերոսական պայքարը համաժողովի արուսահամանյան և սովետական մասնակիցների կողմից արժանացավ միահամուռ հավանության:

Համաժողովի շրջանակներում անցկացվեցին երեք պանելային (ընդհանուր) բանավեճեր՝ նվիրված հետևյալ թեմաների քննարկմանը. «Խաղաղ գոյակցությունը և աշխարհի հեղափոխական վերափոխումը», «Միջուկային զինաթափումը, մոր զարգացող երկրների հարցերը՝ կապված ժողովուրդների միջև խաղաղության և արդարության հաստատման հարցի հետ» և «Անհատը մեր ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կացությամբներում»: Այս բանավեճերում բովանդակալից զեկուցումներով հանդես եկավ Ասիայի, Աֆրիկայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի ու Եվրոպայի երկրների հայտնի կրոնական և հասարակական գործիչներ:

Համաժողովի ողջ աշխատանքը անցավ նրա մասնակիցների միջև հաստատված իսկական եղբայրական հարաբերությունների մթնոլորտում, կարծիքների ազատ և անկեղծ փոխանակման պայմաններում: Համոզված լինելով, որ ամեն մի հավատացյալ մարդ անհրաժեշտորեն պետք է արձագանքի արդիականության կենսական հարցերին, քանի որ բոլոր կրոնների հոգևոր հիմքերը պարտավորեցնում են նրանց թե՛ ազգային և թե՛ միջազգային չափանիշներով գործնականապես աջակցել խաղաղության գործին, համաժողովի մասնակիցները ընդունեցին դիմում, ուղղված աշխարհի բոլոր հավատացյալ և բարի կամքի տեր մարդկանց, կոչ անելով ուժեղացնել իրենց ավանդյալ բոլոր ժողովուրդների միջև՝ արդար և կայուն խաղաղության ու համագործակցության հաստատման համար մղվող սրբազան պայքարում: Դիմումի մեջ խոսվում է համաժողովի մասնակիցների կողմից Մոսկվայի կոմունիստական և բանվորական կուսակցությունների միջազգային խորհրդակցությունում ի պաշտպանություն խաղաղության ընդունված կոչին աջակցելու և հավատացյալ ու ոչ հավատացյալ մարդկանց հետ միասնաբար, կողք-կողքի իրենց ուժերը ի նպաստ մարդկային հասարակությանը նվիրաբերելու անհրաժեշտության մասին:

Համաժողովի մասնակիցները ընդունեցին նաև հայտարարություններ աշխատանքային հինգ համձնախմբերում քննարկված հարցերի վերաբերյալ: Ելնելով իրենց կրոնական սկզբունքներից՝ համաժողովի մասնակիցները այդ հայտարարություններում շարադրեցին իրենց վերաբերմունքը ամբողջ աշխարհի խաղաղության համար առավել վտանգավոր ժամանակակից հարցերի շուրջ, ինչպես նաև տարբեր կրոնների հետևորդների համատեղ պայքարի կրոնական հիմքերը ի պաշտպանություն խաղաղության:

Հուլիսի 4-ին համաժողովի վերջին լիազումար նիստում եզրափակիչ ճառով հանդես եկավ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Առաջինը:

Հուլիսի 5-ին Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիս ընդունելություն տվեց ի պատիվ համաժողովի մասնակիցների:

Հուլիսի 6-ին համաժողովի մասնակիցների համար ընդունելություն կազմակերպեց նաև ՍՍՀՄ Միմիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհուրդը:

Համաժողովի մասնակիցները հույս են հայտնում, որ ՍՍՀՄ տարբեր կրոնների և արտասահմանյան ներկայացուցիչների Զագորսկի հանդիպումը կուժեղացնի կրոնների հետևորդների խաղաղարարական գործունեությունը, կնպաստի նրանց առավել մերձեցմանը միասնաբար պայքարելու համար հանուն խաղաղության, կնպաստի ժողովուրդների միջև խաղաղության պաշտպանության ու ամրապնդման նպատակին ուղղված նրանց և բոլոր բարի կամքի տեր մարդկանց ջանքերի միավորմանը:

Համաժողովի մասնակիցները միահամուռ կերպով արտահայտվեցին Զագորսկում տեղի ունեցած հանդիպման նման այլ հանդիպումներ կազմակերպելու օգտավետության մասին և հույս հայտնեցին, որ հետագայում ևս հնարավոր կլինի անցկացնել նման հանդիպումներ:

Համաժողովի մասնակիցները երախտապարտ են ռուս պրավոսլավ եկեղեցուն և նրա առաջնորդ՝ Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիսին այն մեծ ավանդի համար, որ նրանք դրեցին սույն համաժողովի նախապատրաստման և անցկացման գործում, այն սրտաբացության և սիրալիրության համար, որով շրջապատվեցին այլ եկեղեցիների և տարբեր կրոնների կրոնական համայնքների ներկայացուցիչները ռուսական ուղղափառության այս հոգևոր կենտրոնում:

Համաժողովի մասնակիցները հավատացած են Ամենաբարձրյալի օրհնության շնորհիվ հաջողությամբ պսակված այս հանդիպմանը և ժողովուրդների միջև համագործակցության ու խաղաղության համար մղվող պայքարի այն սուրբ գործին, որին նրանք նվիրում են իրենց ուժերը:

Երկու փաստաթղթերն էլ ժողովի հավանությանն արժանացան և հաստատվեցին բուն ծախսհարություններով:

Ապա համաժողովը լսում է Նորին Սրբություն Ս. Ալեքսի պատրիարքի՝ ներկաներին ուղղված դիմումի խոսքը, որն ընթերցվում է տ. Նիկողոսի միտրոպոլիտի կողմից: Սրբազան պատրիարքը իր դիմումի մեջ օրհնում է հավատացյալների և բոլոր կրոնների սպա-

սավորների՝ հօգուտ մարդկության ծավալած ջանքերը և, ապավինելով Աստուծո ռդորմածությանը, հայցում է հարձրյալից, որ խաղաղության սուրբ գործին նվիրաբերված ոչ մի ուժ երբեք աննկատ չթողնվի:

Նիստի վերջում դահլիճը լարված ուշադրությամբ լսում է նիստի նախագահ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի փակման հետևյալ ճառը.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՓԱԿՄԱՆ ԾԱՌԸ
ԶԱԳՈՐՄԱԿԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ

(1969 թ. հուլիսի 4-ին)

Սիրեցյալ եղբայրներ և բարեկամներ,
Աստուծո ռդորմությամբ և օգնականությամբ մեր համագումարը իր աշխատանքները ավարտեց:

Մեր ժամանակաշրջանի խաղաղության տարեգրությանց մեջ, կկարծենք թե իր պատմական տեղը պիտի ունենա այս համագումարը և նոր ազդակ պիտի հանդիսանա ապագա գործունեության զարգացման և միջեկեղեցական համագործակցության, միշտ ի պաշտպանություն աշխարհի խաղաղության սրբազան դատին:

Սովետ Միության մեջ գործող քրիստոնեական եկեղեցիները և կրոնական կազմակերպությունները՝ մուսուլմանական, հրեական և բուդդայական, կամեցան այս համագումարը կազմակերպել, մանավանդ որ այս տարի լրացավ խաղաղության միջազգային շարժման քսան տարին, որ սկիզբ առավ, ինչպես գիտեք, 1949-ին, Ստոկհոլմի պատմական կոչով: Սովետ Միության կրոնական կազմակերպությունները, առաջին իսկ օրեն արձագանքեցին այդ կոչին և քսան տարիներ շարունակ իրենց բոլոր ուժերով հանդես եկան խոսքով և կենդանի գործով, ի նպաստ խաղաղության, ի նպաստ ժողովուրդներու բարեկամության, ի նպաստ զինաթափման, ի նպաստ պետություններու խաղաղ գոյակցության:

Մենք երջանիկ ենք, որ ահա 20 տարի մնան աստվածահաճո աշխատանքից հետո, հավաքվեցինք այս սուրբ վայրը, մի անգամ ևս, սիրով ու հավատքով, վերանորոգելու մեր ուխտը, մեր խաղաղության ուխտը:

Այս հանդիսավոր պահուն, պարտք կհամարենք Ձեր բոլորի անունով, մեր ջերմագին շնորհակալությունը հայտնելու ռուս պրավոսլավ մեծ եկեղեցվո պետ Նորին Սրբություն Ալեքսի Սրբազան Պատրիարքին, որ, ինչպես ուրիշ անգամներ, նախաձեռնողը եղավ սույն համագումարին և մեզ բոլորս հրավիրեց իր տունը, այստեղ, Ջագորսկի պատմական վանքի կամարներուն տակ, հրաշագործ սուրբ Սերգեյի շնորհներուն ներքև, ուր վայելեցինք սքանչելի հյուրասիրություն մը, լիառատ հոգևոր սնունդով և ճոխ բարիքներով: Մենք երբեք պիտի չմոռնանք այս օրերը, երբեք պիտի չմոռնանք Ջագորսկի այս ներշնչող մթնոլորտը, երբեք պիտի չմոռնանք Ալեքսի Պատրիարքի, մեր շատ սիրեցյալ ավագ եղբոր պաշտառ դեմքը և մաքուր հոգին:

Մեր շնորհակալությունը պարտինք հայտնելու նաև ռուս պրավոսլավ եկեղեցվո բարձրաստիճան ներկայացուցիչներուն և Ջագորսկի վանքի հոգեվոր և վարչական ղեկավարության, համագումարի բոլոր կազմակերպիչներուն, որոնք գլխավորությամբ Ն. սրբազնություն Նիկողիմ միտրոպոլիտի, այնքան արդյունավետ դարձուցին համագումարի աշխատանքները և այնքան հաճելի ու հոգեպարար մեր այստեղ անցուցած օրերը:

Այս համագումարը կազմակերպողներու և նախագահության անունով Մեր գոհունակությունն ու շնորհակալությունը կհայտնենք քույր եկեղեցիներու և կրոնական կազմակերպությանց ներկայացուցիչներուն և բոլոր հյուրերուն, որոնք արտասահմանեն եկան մասնակցելու մեր աշխատանքներուն և աղոթելու մեզի հետ միատեղ:

Թող Աստված օրհնե մեր հոգևոր միությունը և քաղցրությամբ ընդունի մեր աղոթքները:

Հանուն համագումարին, պարտք կզգանք նաև մեր երախտագիտությունը հայտնելու Սովետ Միության պետական բարձր իշխանություններում և կրոնից գործերու խորհուրդի նախագահ Ն. Գերազանցություն Տիար Կուրոյեդովին և իր ժրաջան գործակիցներուն, բոլոր այն դյուրություններուն և սիրալիր վերաբերմունքին համար, որ ընծայվեցան մեզի բոլորիս առատորեն ու անկեղծ սիրով:

Այս ցույց կուտա անգամ մը ևս թե մեր մեծ երկրի՝ Սովետ Միության կառավարությունը ինչքան բարձր կզնահատե աշխարհի խաղաղության գործը և այն նպատակը գոր կրնան բերել եկեղեցիները և կրոնները այդ գործի իրականացման ճամբուն:

Մենք իբրև Աստուծո ծառաներ, իբրև Քրիստոսի Ավետարանը քարոզողներ, երջանիկ ենք ու մխիթարված որ մեր կառավարությունը կհանդիսանա հզորագույն ամրոցը աշխարհի խաղաղության: «Երանի խաղաղարարաց...»:

Եվ արդ, բաժնվելե առաջ այս ժողովեն, կհրավիրենք Ձեզ, սիրեցյալ եղբայրներ, պահ մը կանգ առնել և ներամփոփվիլ, խոկալ մեր կատարած աշխատանքին վրա, և անգամ մը ևս անդրադառնալ մեր բոլորիս և բոլոր հոգևորականներուս պատասխանատվության՝ աշխարհի խաղաղության և ժողովուրդներու եղբայրակցության նկատմամբ:

Աշխարհը և մարդկությունը համայն, ահավոր պատերազմի մը վտանգին առաջ կգտնվին: Հնարավոր է որ վերստին զոհվին, տասնյակ և զուցե հարյուր միլիոնավոր մարդիկ: Մենք չենք քննել այն հարցը թե, ո՞ր մարդիկ, ո՞ր ժողովուրդները պիտի զոհ երթան, թե ո՞ր երկիրները պիտի բնաջնջվին: Այդ միևնույն է մեզի համար, որովհետև բոլորն ալ մեր նմաններն են ու մեր եղբայրները:

Արդ, ջերմ եռանդով աղոթենք և Աստուծո ողորմությունը հայցենք, որ պեսզի պահպանվի խաղաղ համակեցությունը աշխարհի վրա, բոլոր ժողովուրդներու միջև: Զբավարարվինք սակայն միայն աղոթքով: Աստված պետք է տեսնե որ մենք արժանի ենք իր ողորմության: Մեր կենդանի գործով արդարացնենք զմեզ Աստուծո դատաստանին առջև: Զգանք և գիտակցինք թե մենք, եկեղեցիներու և կրոնական հաստատություններու ղեկավարներս, պատասխանատվության բաժին ունինք այսօրվան ստեղծված այս վտանգավոր կացության առջև, հետևաբար նույն չափով զոհն պարտականությունը ունինք մեր կենդանի գործով միջամտելու, կանգնեցնելու համար պատերազմի մեքենան և վերացնելու համար բոլոր այն պատճառները, որոնք պատերազմներ կծնանին, որոնք անարդարություններ կստեղծեն, որոնք ժողովուրդներու միջև թշնամության ևատելության որոճը կցանեն:

Մեր համագումարի հանձնաժողովներու աշխատանքները հստակ կերպով ցույց տվին մեզի մեր օրերու իրականությունները, վտանգներու աղբյուրները և խաղաղության ճանապարհները:

Մենք բոլորս, անկախ քաղաքական և ընկերային մտածելակերպերե, և անոնցմե վեր, պետք է հանդես գանք իբրև խաղաղության առաքյալներ, ամենայն համարձակությամբ: Մենք ոչ մեկ պետության քաղաքական և ընկերային կառուցվածքի, և ոչ մեկ գաղափարաբանության նկատմամբ հստակ դիրքավորում չենք ուզեր ունենալ, սակայն կպահանջենք բոլոր պետություններեն և գաղափարախոսներեն որպեսզի որպես գերագույն կանոն և սրբու-

թյուն հարգեն խաղաղության սկզբունքը, հարգեն մարդոց և ժողովուրդներու կյանքը ամեն բանե վեր:

Մեր Աստվածը, խաղաղության Աստված է, հետևաբար մենք՝ Աստուծո որդիներս, խաղաղության որդիներն ենք, խաղաղության ծառաներն ենք այսօր և միշտ, խոսքով և կենդանի գործով:

Կփակենք այս պատմական ժողովը հայցելով բոլորիդ սուրբ Հոգվո շնորհները և Աստուծո սերն ու խաղաղությունը. ամեն:

Այնուհետև Հայոց Հայրապետը համագումարը հայտարարում է փակված և համաժողովի բոլոր մասնակիցներին հրավիրում է, որ յուրաքանչյուրն իր լեզվով, լուռ ու ներամիտք, արտասանի Տերունական աղոթքը:

Նույն օրը, ուշ երեկոյան, համաժողովի նիստերի դահլիճում, ի պատիվ համագումարի մասնակիցների, կազմակերպվում է հոգևոր երաժշտության ճոխ համերգ, որ կատարում է Մոսկվայի ս. Աստվածածին եկեղեցու երկսեռ երգչախումբը:

Վեհափառ Հայրապետը, մեծապես մխիթարված իր այս արբազան և աստվածահաճո առաքելությամբ, հուլիսի 4-ի երեկոյան վերադառնում է Մոսկվա՝ «Լենինգրադսկայա» հյուրանոցի իր հարկաբաժինը:

Հուլիսի 5-ին Նորին Սրբություն Տ. Ալեքսի Պատրիարքի հրավերով համագումարի բոլոր պատգամավորների և հյուրերի պատվին Մոսկվայի «Ռոսսիա» հյուրանոցի ընդարձակ ճաշարանում կազմակերպվում է ճոխ ընդունելություն:

Հուլիսի 6-ին նույնպիսի մի ընդունելություն է կազմակերպում նաև ՍՍՀՄ Միևիստրդների սովետին առընթեր կրոնական գործերի խորհուրդը «Սովետսկայա» հյուրանոցի մեծ ճաշարանում: Երկու ընդունելություններին էլ իր բարձր մասնակցությունն է բերում Վեհափառ Հայրապետը իր շքախըմբով:

ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐ ԱԹՈՐ


Հուլիսի 7-ի առավոտյան Ամենայն Հայոց կաթողիկոսը հրաժեշտ է տալիս Մոսկվային և իրեն ողջերթ մաղթելու համար Վնուկովոյի օդանավակայան եկած ՍՍՀՄ կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պ. Մակարցևին, տ. Պարզև եպիսկոպոսին և թեմական խորհրդի անդամներին:

Մոսկվա—Երևան մոտ երեքնկես ժամվա օդանավային թռիչքից հետո, ժամը 13-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբի բոլոր անդամներով ժամանում է Երևան: Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորում են լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսի գլխավորությամբ Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը: Հայոց Հայրապետի ժամանումը ողջունում է հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Այսպիսով՝ հանձին Վեհափառ Հայրապետի Հայաստանյայց առաքելական եկեղեցին մի անգամ ևս կատարում է իր սուրբ պարտքը հանուն աշխարհի խաղաղության, ժողովուրդների եղբայրության, համամարդկային սիրո վսեմ գաղափարի հաղթանակի:

Թող Տերը օրհնի իր աշխարհին թողած խաղաղության և ի մարդիկ հաճության սուրբ գործը, այդ գործի անխնջ մշակներին և բոլոր բարի կամքի տեր մարդկանց:

ՆԱՐԵԿ ՎՐԴ. ԾԱՔԱՐՅԱՆ
ՊԱՐԳԵՎ ԾԱՀԱԶՅԱՆ





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Հուլիսի 6-ին, կիրակի.—Բարեկենդան վարդավառի պահոց.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Նշան քահանա Բելլերյանը:

Սուրբ պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետն ու սփյուռքահայ բազում հյուրեր:

* *

Հուլիսի 7-ին, երկուշաբթի.—Ուխտավորաբար Մայր Աթոռ ս. Էջմիածին ժամանեց Ռումինիայի առաջնորդական փոխանորդ և Մայր Աթոռի միաբան տ. Զարեհ արեղա Պարոնյանը, որը Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, ընդունվեց Վեհափառ Հայրապետի կողմից:

* *

Հուլիսի 13-ին, կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Ռումինիայի առաջնորդական փոխանորդ տ. Զարեհ արեղա Պարոնյանը և քարոզեց՝ «Ցնծայ այսօր փառօք» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *

Հուլիսի 14-ին, երկուշաբթի.—Ցիշատակ մեռելոց.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Զարեհ արեղա Պարոնյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան հանդիսավոր արարողություն ի հիշատակ համայն ննջեցիկոց:

* *

Հուլիսի 19-ին, շաբաթ.—Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, վարդապետական մասնավոր գավազանի իշխանություն շնորհվեց տ. Զարեհ արեղա Պարոնյանին, ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի:

* *

Հուլիսի 20-ին, կիրակի.—Մայր տաճարում պատարագ մատուցեց տ. Հակոբ քահանա Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *

Հուլիսի 21-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր Աթոռ այցելեցին ՄԱԿ-ին առընթեր եկեղեցական կենտրոնի ներկայացուցիչ ղովտ. Կարլ Սաուլը և հարավ-աֆրիկացի պատուիր հայր Ֆերկիդոնը:

Պատվարժան հյուրերին Վեհափառ Հայրապետը սիրով ընդունեց Վեհարանում և զրույց ունեցավ նրանց հետ, միջեկեղեցական մի շարք հարցերի շուրջ:

Հուլիսի 22-ին, երեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը մեկնեց Կիսլովոդսկ՝ մի ամսով հանգստանալու «Կրասնի կամեն» առողջարանում՝ ընկերակցությամբ Վրաստանի հայոց առաջնորդ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանի:

Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին Մայր Աթոռի միաբանությունը և պաշտոնեուկները:

Հուլիսի 27-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

Ս. պատարագին ներկա էին ուխտավորարար մայր հայրենիք ժամանած սփյուռքահայ բազում հյուրեր:

Հուլիսի 28-ին, երկուշաբթի.—Այսօր Ռումինիա՝ իր պաշտոնատեղին մեկնեց տ. Զարեհ վրդ. Պարոնյանը, որը ուխտավորարար գտնվում էր Մայր տաճարում և հայրենիքում:

Օգոստոսի 3-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա էին բազում սփյուռքահայ ուխտավորներ և մշակերտներ:

Նույն օրը, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Երևանի ս. Սարգիս եկեղեցում քահանա ձեռնադրվեց ուրարա-կիր և հոգևոր ճեմարանի նախկին սան Ռադմիկ Հարությունյանը՝ վերանվանվելով տեղի Եղիշե՝ ձեռամբ Արարատյան թեմի հայրապետական փոխանորդ տ. Վահան եպս. Տեր-յանի:

Տ. Եղիշե քհն. Հարությունյանը ծնվել է 1939 թ. սեպտեմբերի 1-ին Լենինականում: Նախնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում և 1958—59 ուսումնական տարում ընդունվել է ս. էջմիածնի հոգևոր ճեմարան, որտեղ սովորել է մինչև 1965 թվականը: Նորընթան իր քառասունըր Մայր Աթոռում անցկացնելուց հետո, կապաշտոնավարի Վրաստանի հայոց թեմում:

Օգոստոսի 10-ին, կիրակի.—Բարեկենդան ս. Աստուածածնի.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը և քարոզեց «Այսօր ժողովեալ սրբոց Հայրապետաց» բնաբանով:

Օգոստոսի 15-ին, ուրբաթ.—Այսօր Կիսլովոդսկից Մայր Աթոռ վերադարձավ Վեհափառ Հայրապետը՝ ընկերակցությամբ տ. Կոմիտաս եպիսկոպոսի: Վեհափառ Հայրապետին օղանավակայանում դիմավորեցին Մայր Աթոռի միաբանությունն ու վանքի պաշտոնեուկները:

Օգոստոսի 17-ին, կիրակի.—Վերափոխումն ս. Աստուածածնի.

Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Վրաստանի թեմի հայոց առաջնորդ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը քարոզեց «Աստուածածին անարատ Մայր Տեառն» բնաբանով:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսավորությամբ կատարվեց «Օրհնութիւն խաղողոյ»:

Օգոստոսի 18-ին, երկուշաբթի.—Յիշատակ մենելոց.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ համայն ննջեցելոց:

Օգոստոսի 21-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռ ուխտի եկան մի խումբ սփյուռքահայ ուսուցիչներ, որոնք ժամանել էին մայր հայրենիք: Մայր տաճարում իրենց ուխտն ու աղոթքը անելուց հետո, հյուրերն ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից, Վեհաբանում: Հայոց Հայրապետը ողջունեց հայ ուսուցիչների ներկայությունը և հաճելի զրույց ունեցավ նրանց հետ՝ սփյուռքի կրթական ու մշակութային կյանքի վերաբերյալ:

Օգոստոսի 24-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Հովհաննես քհն. Մարությանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։


Օգոստոսի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ ժամանեցին՝ Անթիլիասի մայրավանքի Դրան եպիսկոպոս տ. Գարեգին Սարգսյանը և Ազգային կենտրոնական վարչության անդամ պրն. Ոսկերեքյան Արզումանյանը՝ անձամբ հանձնելու համար Ամենայն Հայոց Հայրապետին Տ. Խորեն Ա կաթողիկոսի օգոստոս 26 թվադրոշմով նամակը։

Օգոստոսի 25-ին, երկուշաբթի.—Այսօր ԱՄՆ-ից Մայր Աթոռ ժամանեց բարերար պրն. Տատուր Տատուրյանը՝ Մայր Աթոռի ապագա շինարարական գործերով տեսակցելու համար Վեհափառ Հայրապետի հետ։

Օգոստոսի 31-ին, կիրակի.—Տօն Գիւտ Գոտույ ս. Աստուածածնի.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Հակոբ քհն. Հակոբյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։





**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԳԻՐԸ
ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԵՐՅԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ
ԲԱՑՄԱՆ ԱՌԹՎ**

ԳԵՐԱԸՆՈՐԸ

**Տ. ԵՂԻԾԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ,
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԱՅՈՑ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ**

Լոս-Անժելոս

Հանեցեք Մեր անունով ողջունել բացումը ազգային հերոս Սողոմոն Թեհլերյանի հուշարձանին, այսօր կիրակի 31 օգոստոսին:

Սողոմոն Թեհլերյան, անուն մը նվիրական համայն հայության համար անխտիր որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Անուն մը խորհրդանշիչ քաջության, արդարության և ազատության ոգիի: Անուն մը՝ հայոց առավել պայծառ ապագան շեփորող: Անուն մը՝ բոլոր հայերուն հրավեր կարդացող որ մնան հավատարիմ հայրենի հողին, մեկ սիրտ մեկ հոգի, հավետ անբաժան իբրև զավակները մեր անմահ ազգին:

Վերածնած Մայր Հայաստանեն, Արարատեն և Սարդարաբադեն և սուրբ Էջմիածնեն օրհնություն և փառք Թեհլերյանի սուրբ հիշատակին:

Վ Ա Ջ Գ Ե Ն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

30 օգոստոս 1969 թ.,

Մայր Աթոռ ա. Էջմիածին



ԻՍԱՀԱԿ Ծ. ՎՐԴ. ՂԱԶԱՐՅԱՆ

Գ Ր Ա Խ Ո Ս Ա Կ Ա Ն

ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՈՑ

ԳԻՐԲ ԵՐԿՐՈՐԿ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
1968

Գիրքը որ կու գա մեզի 317 էջերու վրա, տարակուս իսկ չկա, մնա պիտի իբրև պատմական վկայություն մը մեր՝ մասնավորաբար ախյուրքի հայ եկեղեցական դժբախտ ու բարեբախտ երևույթները բարացուցող:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի Գերագույն հոգեվոր խորհուրդը որքան գեղեցիկ, նույնքան արտառույզ գաղափարն է ունեցեր հրատարակելու **Վազգեն Ա. Հայրապետ Հայոցի երկրորդ հատորը**: Այս երկու ածականները ունայնորեն չէ որ մեր գրիչին ու մտածումին ներքև կիյնա: Գեղեցիկ՝ զի այդ էջերուն մեջ միշտ ընթերցողին աչքին ու մըտքին դիմացը կկանգնի՝ հայ եկեղեցին ու ազգը մարմնավորող լուսաթույր անձը, Լուսավորչի գահը ծառանգած՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն կաթողիկոսը և Ծայրագույն Պատրիարքը Ամենայն Հայոց. արտառույ՝ զի սև ու ճերմակին են ընդելուզված Վեհափառ Հայրապետի անձին որքան հեզությունն ու ազնվագարն հոգին, նույնքան տառապող մեծ անձնավորությունը ի տես մեր եկեղեցիին անհիմաստ բայց ալետանջության մատնող ցավագին կացության:

Գիրքին մեջ երևցող 17 քառանյապետական կոնդակներու, 19 հայրապետական քարոզներու, 39 ճառերու ու Եպիսկոպոսապետի մը վայել ողջույնի սիրո խոսքերուն,

ու 7-ը նամակներու մեջեն կերևի ամբողջությամբ հայ ախյուրքի բարեբախտ ու ողբերգական լինելու չափ՝ դժբախտ երևույթներու պատկերը:

Առիթը:

Նորին Սուրբ Օծության ծննդյան 60-ամյակն է ու գահակալության 14-րդ տարեդարձը:

Սա 14 տարիներու հարուստ ծաղկումին կերևի իրագործումներն ու նվաճումները՝ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի, տպարանին բացման ու եկեղեցիներու նորոգման: Ազգային-եկեղեցական դեմքերու ու հաստատությանց տարեդարձները, ծննդյան ու զատական քարոզները, ընդհանուր քրիստոնեական եկեղեցվո նվիրապետական Աթոռներու գահակալներուն, եկեղեցական ու մշակութային կազմակերպությանց ուղղյալ միտքն ու ոգին շարժապատկերի մը նման կանցնին մեր մտքին ու սրտին աչքերուն դիմաց:

Սրտագին պարտականություն մըն է զոր կկատարենք, որդիական խորին ակնածությամբ ու ջերմագին սիրով, երբ համեստ փորձ մը կընենք այսպես ներկայացնելու մեր ամերիկահայ պատվական ժողովուրդին ու մտավորականության, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին միտքը, սիրտը ու գործը 14 տարիներու երկայնքին հասակ առնող:

Երբ մեր աչքերուն դիմաց տողանցեցին գիրքին բոլոր էջերը, մենք եկանք այն եզրակացության, որուն հասած էր վաղուց ի վեր նույնիմեք ամենուս սիրելի ու թանկագին Վազգեն Առաջին քառանյապետը՝

երբ Իր ընտրության ու օծման հաջորդող առաջին իսկ պահում Ան Իր շրթները բացավ ու արտասանեց բառ առ բառ, «Իմ միակ վարչագիտությունն՝ անկեղծությունն է եղած»։ Ոչ միայն գոհար բառ, այլ նաև ու մանավանդ, պայծառ **նկարագիր**։ Եթե Վեհին քառորդին չափ ալ անկեղծությունը բույն դրած լիներ ա՛յլ պատասխանատու հայ միտքերու ու սրտերու մեջ, կհավատանք թե մեր ազգին ու եկեղեցիին խնայվեին պիտի այն բոլոր ողբերգությունները, որոնց թաթին տակ ինկանք ու կտառապինք հն ի հն սա 14 տարիներու ընթացքին։

Ամեն հայ պարտավոր է, բայց մանավանդ մտավորական ու պատասխանատու ղեկավար մը, իր ազգային խղճմտանքեն ներշնչյալ մը, հրամայական է որ ման բերե ոչ այնքան իր հպանցիկ նպատակը **Վազգեն Ա Հայրապետ Հայոց** գիրքին էջերուն այլ որքան ու ավելի իր լուրջ տրամաբանության աչքերը սկետելու է՝ որպեսզի գտնեն հոն, **Իրավը**։

Վեհափառ Հայրապետը պատմության իջնող այս գիրքին մեջ կերևի ոչ միայն իբրեւ շինարար Հայրապետ մը, այլ իբրև, և մանավանդ, **անկեղծ** միտք ու ջերմ սիրտ ունեցող Քահանայապետ մը։

Ահա նմուշ մը Իր այդ անկեղծ սրտեն ու մաքուր հայտի խղճմտանքեն. «Օտար ափերի վրա կենդանի պահեցեք Մեսրոպյան տառերի փառքը...»։ Եվ կամ՝ «Մենք զՄեզ զգացինք անապատի մը մեջ, Մեր սիրտը վիշտով լեցվեցավ։ Սիրտ ու միության Մեր կոչը կուղղենք նախ Անթիլիասի ներկա Աթոռակալին, Զարեհ սիրեցյալ եղբորը Մեր, որմե տարիներ առաջ համբուրիվ բաժնվեցանք Մեր մեկնումի տխուր օրը, ուրախ օր մը վերստին ողջագործվելու քաղցր հույսով»։ Եվ կամ՝ «Մեր նահատակները մեռան ապրելու հույսով և հայ հայրենիքի վերածնունդի տեսիլքով»։ Ուրիշ մը՝ «Հայկական Բարեգործական ընդհանուր միությունը ծառայության և զոհաբերության ուխտ մըն է, որ ահա վեց տասնամյակներն ի վեր կը գործեն հայ ժողովուրդի ծոցին մեջ ամեն տեղ»։ Ուրիշ մը՝ «Համայն հայ հավատացյալ ժողովուրդը, առանց խաղության, հարազատ ժողովուրդն է Մայր Աթոռ ս. Էջմիածնի, երեկ և այսօր, միշտ և հավիտյան անկախ և վեր ամեն քաղաքական, ընկերային կամ այլ կարգի նկատումներն»։ Ասկե ավելի անկեղծ արտահայտություն ու իրավ հաստատում կարելի չէ սպասել։ Եվ հետևաբար խոնարհելու է ամեն մեկ հայ, Քահանայապետի հետևյալ հորդորին. «Հրավեր և հորդոր կկարդանք բոլորին որ

հեռու կենան Մայր Աթոռին և անոր սուրբ գործին քաղաքական բնույթ վերագրել, փորձելով արդարացնել որոշ քաղաքական դիրքավորում սուրբ Էջմիածնի հանդեպ»։




ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՈՅ

ԳԻՐԶ ԵՐԿՐՈՐԴ

ԿՈՆԴԱՆԵՐ, ՔԱՐՈՋԵՐ,
ՃԱՌԵՐ, ԵԼՈՒՅՐԵՐ

Մայր Աթոռ ս. Էջմիածին
1968



Ձեռք կրնար հոս կենալ։ Մեր ընթերցողներու խղճի ու իրավ ՀԱՅՈՒ սրտին կքանդակենք Հայրապետի վերոհիշյալ արդար միտքերու շարունակությունը. — «ՄԵՆՔ ԳՈՐԾ ՉՈՒՆԻՆՔ», կպատգամե Վեհափառ Տերը, «և չենք ալ ուզեր ունենալ քաղաքական-ընկերային վարդապետությանց հակամարտությանց մեջ և կկամենանք նաև որ մեր հոգևորականները և արտասահմանի մեր ազգային-եկեղեցական իշխանությունները ՄԱԶԱՉԱՓ ԱՆԳԱՍ չհեռանան իրենց գուտ հոգևոր կոչումեն և նպատակներեն։ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՐՏԱՍԱՀ՝ ՄԱՆԻ ՄԵՋ Է՛, ԵՎ ՊԵՏՔ Է ՄՆԱ ԵԿԵՂԵՑԻ-ԺՈՂՈՎՈՒՐԴ»։ «Ձեր զավակներուն և թոռնիկներուն փոխանցեցեք մեր քրիստոնեական առաքինությունները, մեր հայկական ոգին, մայր հայրենիքի սերը»։ «ԾԱՆԻՐ ԶՔԵՋ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ»։

Վեհափառ Հայրապետին այս վերջին խոսքը չի՝ հիշեցնե՞ր մեզի մեր ոսկեդարու մատենագիրները, որոնք բյուզանդական իմաստասիրությամբ իրենց միտքն ու հոգին ճոխացուցին, ինչպես՝ Մովսես Խորենացին (կամ լավ ևս է ըսել պունեցի պատմահայր քերթողը), Եզնիկն ու Կորյունը, Եղիշեն ու Հովսեփ Պաղնացին ու Հովհան Եկեղեցացին:

Այս պայծառ ոգիով է որ Վեհափառ Հայրապետը ողջագործեցավ Խորեն Առաջին կաթողիկոսին հետ, Գալիլիացիի սուրբ քաղաքին մեջ, Գեթսեմանիի, Գողգոթայի ու Հարության խորհուրդներու Իմաստ շուքին ու շնորհին ներքև ու հայտարարեց՝ «Մենք Մեր եղբայրական պարտքը կհամարենք շնորհավորել Ձերդ Սրբության ընտրությունը և օծումը իբրև կաթողիկոս Տանն Կիլիկիո»։ «Երկու կաթողիկոսներս եղբայրաբար խոսքի նստինք իրարու հետ, և աշխատինք լուծել այն բոլոր հարցերը, որոնք կդրվին մեր առջև ի շինություն և ի հաստատություն մեր եկեղեցիին և ի մխիթարություն հայ ժողովուրդին»։ «ԿիսորՀին՝ Թե ԱՅՍ ՍԻՐՈ ԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ ՈԳԻՆ ԱՅԼԵՎՍ ԶԻ ԲԱԺՆՎԻՐ ՄԵԶՄԵ ԵՎ ԱՅՍ ԿԸՆԿԱՏԵՆՔ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԾՆՈՐՀ ՄԸ ՄԵԶԻ ՀԱՄԱՐ»։ «ԱՅՍԵՆՆ ՈՉ ՎԱԶԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՈՉ ԱԼ ԽՈՐԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՐՑ ԿԱ; ԵԹԵ ԿՈՒԶԵՔ, ՈՉ

ԻՍԿ ԷԶՄԻԱԾՆԻ ԵՎ ԱՆԹԻՒԽԱՍԻ ՀԱՐՑ, ԱՅԼ ՄԵՐ ԱՄԲՈՂԶ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԿԵՆՍԱԿԱՆ ԾԱՆԵՐՈՒՆ ՀԱՐՑ»:


«Մեկ բանի համար ԱՆԿԵՂԾՈՐԵՆ ԿԸՑԱՎԻՆՔ որ հաշտությունը հնարավոր չեղավ երջանկահիշատակ ԶԱՐԵՀ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ օրով: Առանձնապես Մեզի համար խոր վիշտ է այս, ափսոս...: Կիսնդրենք որ Ձեր վերադարձին սրբազան պարտք նկատեք «Հոգեց» կարդալ Մեր կողմե անոր հողակույտին վրա»:


Վազգեն Ա. Հայրապետ Հայոց երկրորդ գիրքի այս հրատարակության բոլոր էջերը նման են համրիչի մը, որուն աղամանդ քարերն են Վեհիկ մտքեն ու սրտեն փրթած բառերը և որոնց մեջեն, կանցնի հայ ժողովուրդի ԱՆԿԵՂԾՈՒԹՅԱՆ կարմիր թելը: Ու ի՞նչ սրտատույ է տեսնել որ այդ համրիչին ալ ծայրը կախված լինի խաչը՝ ստեղծողական սիրո:

Սիրով կթելադրենք բոլոր հայերուն անխըտիր, այս գիրքին ընթերցումը:

Կգնահատենք բարձրորեն նաև Ա. Հատիսյանը ու բոլոր նվիրյալ աշխատավորները այս գեղեցիկ և պատկերազարդ հրատարակության համար ու կապառենք երրորդ հատորին:

(«Հայաստանեայց եկեղեցի», 1969 թ., մայիս, էջ 149—151):





ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ*

Համար 27

* *

Բերա, 28 հունիս 1918.

Երվանդ սիրելի.

Ստացա հունիս 1-ի վերջին՝ մամակդ. ուրախ եմ առողջությանդ և հաջողությանդ լուրերում համար: Աշխատութենե ետքը այժմ հանգիստ ունիս, չեմ գիտեր թե ո՞ր և ի՞նչպես պիտի անցընես:

Ազգապատումին 9 և 10 պրակները հղած եմ արդեն ժամանակին. և ցարդ ստացած կըլլա գրաքննական արգելարանեն ազատված:

Անոր մասին վերջին դատաստանդ ինձի համար գոհացուցիչ է. ժողովրդական հրատարակությանց սիրահարություն ունիմ, գիտական ոճի հավակնությունը չունիմ:

Էջմիածնե լուրեր կառնեմ Սուրբաս արքեպիսկոպոսե, Կարապետ եպիսկոպոսե և Հուսիկ վարդապետե. այս անգամ Բենիկ վրդ. ալ գրեր էր Տփղիսե. բայց ոչ մի մխիթարական երևույթ: Կոմիտաս վրդ. ալ Կովկաս եկավ, գուցե տեսնաս:

Ես եղելությանց հպատակելու սկզբունքով կգոհանամ հնարավորն ընելով. և կկարծեմ թե իմ գրականը օգտակարագույն ալ է: Միայն թե վեց շաբաթ է անգործ եմ տպարանին հրկիզվելուն պատճառով, որ դեռ մորեն չկարգադրվեցալ: Այդ կոտորածությունը և ամառվան տաքը չեն ներեր ինձ լրջորեն աշխատիլ. կուզեի երկրորդ տասնյակ պրակները հրատարակել, և աշնան խմբագրության դառնալ:

Կրոնական ծրագիրը պետք չէ՞ր արդոք, որ բոլոր վարժարաններու համար համաձայն և համաչափ

լլար: Մի՞թե Ալեքսանդրապոլի համար հատուկ է ծրագիրդ*:

Ես հանգիստ եմ, անցածն ալ գրեցի: Քիչ-քիչ ազգային շրջանակին մեջ կմտնեմ: Ամեն շաբաթ Բերայի ու Հարությունը և Ղալաթիո ու Լուսավորիչը կը քարոզեմ. երբեմն ուրիշ եկեղեցիներ ալ կհրավիրվիմ, դպրոցներու քննությանց կերթամ, քահանայից լսարանին կդասախոսեմ, Ազգային ժողովի կանգամակցիմ, կրոնական ժողովե ալ կուզեմ անցընել:

Այսչափ այս անգամ: Օրհնաձայն ողջույններ Քեզ և Քոյոցդ.

Մաղ. արք. Օրմ.:

* *

Համար 28

Բերա, 28 նոյեմբեր 1918.

Սիրելի Երվանդ.

Կոմիտաս վրդ. այստեղ եղած ատեն հունիս 28-ին համառոտ գիր մը գրած էիր, որում դեռ չեմ պատասխանած:

* Խոսքը Ալեքսանդրապոլի պետական ոռոսական 8 դասարանյան Առևտրական դպրոցի համար ծրագիր կազմելու մասին է: Այդ ծրագրով մախատելով էր V և VI դասարաններում ընդարձակել հայոց եկեղեցու պատմությունը՝ մրա մեջ զուգահեռաբար մտցնելով մաև ամբողջ հայոց պատմությունը: Այն ժամանակները առանձին հայոց պատմություն անցնել ոռոսական պետական միջնակարգ դպրոցներում ոչ մի կերպով և պայմանով հնարավոր չէր: Ծրագիրը երկայացված էր Ամենայն Հայոց կաթողիկոսին և ստացել էր մրա հավանությունն ու հաստատությունը և պիտի դասավանդվեր իհարկե միայն հայազգի և հայոց եկեղեցուն պատկանող պատանիներին:

* Ծարուհակված «Էջմիածին» ամսագրի 1969 թվականի №№ 9, Ե-Ձ-ից:

Դու՛ն կցավակցեիր որ հրդեհը արգելած է Ազգապատումին շարունակությունը. քիչ մնաց որ բոլորովին պիտի մեռներ, զի ես անդիի աշխարհք երթալոց եղա, մի՛նչ և թժիշկներն ալ հույսերնին կտրելու չափ. բայց Աստուծո ողորմությամբ դեռ կենդանի եմ և իբր երեք ամիս դադարե ետքը կամաց-կամաց գործելու կակսիմ:

Դեռ բոլորովին կազդուրվելու պետք ունիմ, և թժիշկներ ու բարեկամներ կպահանջեն չաշխատիլ և չհոգմիլ. Congertion cébrale էր հիվանդությունը:

Ազգապատումին մի՛նչ և 18-րդ պրակը հղած եմ. գործը հանդարտորեն կշարունակե: Վերջին ատեններու պատմությունները ավելի մոտություններ երեւան կհանեն:

Ողջույն սիրո Քեզ և Քոյոցդ:

Այսչափով գոհացիր այս անգամ

Մաղ. արք. Օրմ.:

*
* *

Համար 29

Բերա, 20 փետրվար 1914.

Սիրեցյալ Երվանդ.

Բավական երկարատև լուրջենե ետքը կստանամ հունվար 28-ի նամակդ, և ուրախ եմ լավ լուրերդ լսելով:

Ես բավական կազդուրված կզգամ զիս, բայց միշտ զգուշությամբ ծանր տաղտապանքներե, և պարտավորիչ և հուզիչ պաշտոններե: Բոլոր գործունեությունն կենտրոնացնելով Ազգապատումին շուրջը, որուն երկրորդ մասին հրատարակությունը լրացնելու մոտ եմ, մի՛նչ և ցմահ Դանիելի 1808-ին, և հետո պիտի սկսիմ 19-րդ դարը գրել: Եթե այդ մասին օգտա-

կար տեղեկություններ կամ աղբյուրներ կամ հիշատակարաններ կարենաս ցույց տալ, շնորհակալությամբ պիտի ընդունիմ:

Ազգապատումին 16-րդն ալ դրկած եմ, և այս անգամ ալ 17-րդը կհղեմ. նույնպես 14-րդն ալ կրկին անգամ, որ անշուշտ կորած է:

Մայրավանեցիին մասին Կարապետ եպիսկոպոսի գրածը ստացա, բայց կարդալու պարտալ չունեցա: Երբ որ վիճաբանության մտնես, նայե որ պատշաճից առիթներուն մեջ մնաս, և ակամքներ խաղող բան չգրես:

Ողջույն սիրո Քեզ և Քուկիներուդ: Աստված ուրախ և երջանիկ պահե:

Մաղ. արք. Օրմ.:

*
* *

Համար 30

25 ապրիլ 1914. (պոստքարտի վրա).


Սիրելի. Ծնորհավորությանցդ կապտասխանեմ համատու քաղթով՝ բազմապիսի գրադումներով շրջապատված: Իսկ կնիքի* մասին ապրիլ 3-ին գրածներուդ կվերապահեմ գրել, երբ որ մտադրությամբ քննելու պատեմ գտնեմ:

Օրհնաձայն ողջույն Քեզ և Քոյոց

Մաղ. արք. Օրմ.:

* Խոսքը Կարապետ եպիսկոպոսի հրատարակած «Կնիք հավատո» դավանաբանական հատվածների ծողովածուի մասին է:





Տ. ՍՏԵՓԱՆՆՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

(Մահվան 35-րդ տարեկիցի առթիվ)

Այս տարի լուսավ բուրդարահայ թեմի անդրանիկ առաջնորդ տ. Ստեփաննոս արք. Հովակիմյանի մահվան 35-րդ տարեկիցը: Նրա անթառամ հիշատակը ոգեկոչելու նպատակով, ի ներկայության Սոփիայի բազմաթիվ հայ հավատացյալների, եկեղեցական վարչության նախաձեռնությամբ Սոփիայի ա. Աստվածածին եկեղեցում կատարվեց հոգեհանգստյան արարողություն, և հանին կենաց քարոզությամբ ոգեկոչվեց նրա բարի հիշատակը:

Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանը պատկանում էր մեր ավանդապահ հոգևորական սերնդին: Նա յուրահատուկ նկարագրով տիպար հայ եկեղեցականներից մեկն է եղել, որի կենսագրական գծերն ու երկարամյա կյանքի գեղեցիկ դրվագներն ու վաստակավոր գործունեությունը մասնահատուկ տեղ են գրավում մեր եկեղեցական ժամանակակից պատմության մեջ:

Ստեփաննոս արքեպիսկոպոսը ծնվել է 1846 թ. հունիսի 12-ին Նիկոմիդիայի Տաղ գյուղում: Հայ եկեղեցուն և հավատացյալ հայ ժողովրդին ծառայելու բարի տենչանքն ունենալով, իր ամբողջ կյանքը նվիրում է եկե-

ղեցուն: 1873 թ. Անառակի կիրակիի օրը Նիկոմիդիայի ա. Աստվածածին եկեղեցում ձեռնադրվում է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ներսես արքեպիսկոպոս Վարժապետյանի:

Հոգեւոյս Ստեփաննոս արքեպիսկոպոսը, ինչպես ինքն է նկարագրում իր ինքնակենսագրության մեջ, «գրաբար» կյանք չէ ունեցել: Նա մի քանի տարի սովորել է Կ. Պոլսի Խազյուղի Ծախնազարյան գիշերօթիկ դպրոցում: Հոգևոր կոչումն ստացած երիտասարդ եկեղեցականի առջև բացվում է ծառայության լայն առաքելագ: Այն ժամանակվա Նիկոմիդիայի նորընտիր առաջնորդ՝ Ներսես եպիսկոպոս Վարժապետյանը, Կ. Պոլսի հայոց պատրիարքական թափուր Աթոռի համար նկատվում էր լավագույն թեկնածուն: Սակայն, պատրիարքական Աթոռին բարձրացողը պետք էր անպայման եպիսկոպոսական օծում ստացած լիներ ա. Էջմիածնում, բայց քանի որ Ներսես արքեպիսկոպոսացած էր Սսի Աթոռում, հետևաբար ուխտի է գնում Մայր Աթոռ՝ Իջման ա. սեղանի առջև իր ուխտը վերանորոգելու և հավատարիմ մնալու ա. Էջմիած-

մին և Ամենայն Հայոց Հայրապետության ու վերադառնում է Կ. Պոլիս:

Ներսես Վարժապետյանը պատրիարք ընտրվելով, Նիկոմիդիայի թեմի առաջնորդությունը ստանձնում է երիտասարդ Ստեփաննոս վարդապետը՝ փոխանորդությամբ, ապա ստանձնում է առաջնորդության ծանր պաշտոնը, երեսփոխանական ժողովի ընտրությամբ: Ստեփաննոս սրբազանը իր եպիսկոպոսական օծումը ստացել է ս. Էջմիածնում, երջանկահիշատակ Տ. Տ. Մակար կաթողիկոսից, իսկ արքության տիտղոսը՝ Խրիմյան Հայրիկից:

Ծուրջ 70 հազար հայության հոգևոր առաջնորդությունը ստանձնելով, Ստեփաննոս եպիսկոպոս Հովակիմյանը ցուցաբերում է մեծ ձեռններեցություն ու փայլուն գործունեություն: Նրա առաջնորդության շրջանում Նիկոմիդիայի հայ եկեղեցիներն ու դպրոցները ապրում են զարթոնքի շրջան, հոգևոր կրթական իմաստով:

Ստեփաննոս սրբազանը իր եկեղեցաշեն ու ազգօգուտ գործունեությամբ, իր համակցանքի ընթացքում արժանանում է իր ժողովրդի մեծ համակրանքին ու գուրգուրանքին: Նա կառուցել է տվել բազմաթիվ եկեղեցիներ, դպրոցներ, կամուրջներ, ճամպարաններ, ջրաղացներ, հաստաբեր շենքեր: Նա եղել է ազնիվ սրտի և մեծ հոգու տեր եկեղեցական: Բնավորությամբ շատ բարի, հեզ ու համեստ այս անձնավորությունը հանդիսացել է հավատքի, ազնվության, աշխատասիրության լավագույն օրինակը իր ժողովրդի համար:

1915 թ. հուլիսին, հայ ժողովրդի Մեծ եղեռնի օրերին, Նիկոմիդիայի թեմի ամբողջ հայությունը ևս իր սրբակյաց առաջնորդով ենթարկվեց աքսորի, բարձրացավ հայ Գողգոթան և ցմրուր քամեց աքսորի ամենալեղի բաժակը: Սակայն, Ստեփաննոս սրբազանը իբրև ճշմարիտ հավատացյալ երբեք չընկճվեց, նույնիսկ աքսորի ընթացքում հետևելով իր պատվական ժողովրդին, ինք ևս ապրեց նրա մեծ տառապանքը և ամոքեց նրա ցավերն ու վշտերը:

Գոնիալում, ուր առաջին հանգրվանն էր ընդհանուր աքսորի, նա մերժում է կառավարչի հրամանը, այն է՝ թողնել աքսորված ժողովուրդը ու գնալ միայնակ ապաստանել Երուսաղեմի հայոց վանքում: Այս հրամանը Ստեփաննոս սրբազանը մերժում է ասելով. «Ժողովուրդն ուր, ես ալ՝ հո՛ն»:

Զինադադարից հետո Հովակիմյան սրբազանը վերադառնում է իր թեմը և իր կոտորակված հոտի մնացորդին գլուխն անցնելով, կրկին շարունակում է իր հոգևոր հովվությունը, այդ խեղճ, անկյալ ու կոտորյալ

խլայների հազար ու մեկ վշտերն ու ցավերը ամոքելով:

1922 թ. Նիկոմիդիայի երբեմնի բարգավաճ թեմում այլևս փակվել էին եկեղեցի և դպրոց ու ժողովուրդը գաղթականի ցուպն առնում էր իր ձեռքը: Ստեփաննոս արքեպիսկոպոսը նույնպես գալիս է Բուլղարիա, ուր վայելում է իր հարազատ ժողովրդի մեկ մասի ջերմ հյուրասիրությունը, որ դժխեմ բախտի մեկ հարվածով եկել ու հաստատվել էր Բուլղարիայի ասպնջական այս ամիսներում:

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը բուլղարահայ թեմը չի ունեցել ո՛չ թեմական կազմակերպություն և ո՛չ էլ առաջնորդ: Բուլղարահայ համայնքները եղել են Թուրքիայի հայոց պատրիարքության հոգևոր իշխանության տակ: Պարբերաբար այստեղ են այցելել Պոլսո պատրիարքության կողմից վարդապետներ ու եպիսկոպոսներ՝ Բանին կենաց քարոզությամբ մղխիթարելու հավատացյալներին: Երբեմն այցելու հոգևորականները փորձել են եկեղեցիները կազմակերպել ու առաջնորդական Աթոռ հաստատել, ինչպես օրինակ՝ Վահան ծ. վրդ. Հակոբյանը, Մալաքիա վրդ. Տերունյանը, որոնք, սակայն, չեն հաջողել:

1924 թ. ստեղծվում է բուլղարահայ թեմական կազմակերպություն՝ Մայր Աթոռի հոգևոր վերին իշխանության ներքո, ու անդրանիկ առաջնորդ է ընտրվում միաձայնությամբ Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանը՝ հակառակ իր առաջացած տարիքին: Նա իր վարչական, եկեղեցական ու ազգօգուտ լայն գործունեությամբ ամուր հիմքերի վրա է դնում նորակազմ բուլղարահայ թեմը: Ստեփաննոս սրբազանը ձեռներեցությամբ և ոգևորությամբ շարունակում է իր գործունեությունը բուլղարահայ ավանդապահ ժողովրդի ծոցում, մինչև -որ կնքում է իր մահկանացուն:

1930 թ. Սոֆիայում մի խումբ ազգայիններ որոշում են տոնել Ստեփաննոս սրբազանի քահանայական գործունեության 60-ամյակը: Այս մտահղացումը հայտնում են առաջնորդ սրբազանին, որը համաձայնվում է մեկ պայմանով՝ գոյանալիք հասությո՞ր հատկացնել Սոֆիայում կառուցվելիք ազգային վարժարանին: Ամբողջ մեկ տարի հայտարարվում է հոբելյանական տարի: Աշխարհի մի շարք հայկական գաղթօջախներում, Պոլսում, Կահիրեում, Ալեքսանդրիայում, Մարսելում, Լիոնում և այլուր, ինչպես նաև Բուլղարիայի բոլոր հայ համայնքներում, շուքով ու հանդիսություններով է տոնվում բազմերախտ առաջնորդի քահանայական ձեռնարկության հոբելյանը:


Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանի կյանքի թելը կտրվում է 1934 թ., 88 տարեկան հասակում: Այդ համեստ հոգեվորականի անունը մինչև այսօր էլ մեծ երախտագիտությամբ է հիշվում բուլղարահայ գաղթօջախում՝ բազմաթիվ հայորդիների սրտերում:

Նրա անունները ամփոփված են Սոփիայի հայոց գերեզմանատան մատրան մեջ:
Հարգանք նրա պայծառ հիշատակին:

Տ. ՄԵՍՐՈՊ ՔԶՆ. ԲԵՆԼԻՅԱՆ
(Հոգևոր հովիվ Սոփիայի հայոց)

Սոփիա





Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻՆ ՈՐՊԵՍ ՀԱՄԵՐԱԾԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՒՈՍ

Վարդան Այգեկցին ԺԲ/ԺԳ դդ. մեր արդյունավոր մատենագիրներից մեկն է, որի վաստակը տակավին ամբողջությամբ հայտնի չէ հայ գրականության պատմությանը: Նա հայտնի է եղել որպես առակագիր ու մի շարք կրոնա-քարոշական գրվածքների հեղինակ¹: Բայց նորահայտ նյութերի հիման վրա պարզվում է, որ նա ունեցել է նաև հանրային լայն գործունեություն, մասնակցել է իր ժամանակի գաղափարական այն շարժումներին, որոնք հուզում էին Կիլիկյան Հայաստանի հասարակայնությանը:

Վարդան Այգեկցին ծնվել է Մարաթայում, որը գտնվում էր Ասորիքի Դուք (Կիլիկյան ուղղափրությանը՝ Տյուք) գավառում: Այս շրջանում կային Մարաթա անունով մեկից ավելի բնակավայրեր². Վարդանը էր «ի Մարաթոյ Վերնոյ»³:

Ինչպես Այգեկցին ինքն է ասում իր հիշատակարաններից մեկում՝ հիշյալ Մարա-

թան նրա «բնիկ ժառանգություն»-ն էր⁴: **Բնիկ ժառանգություն** ասելով պետք է հասկանալ ոչ թե այն սեփականությունը, որ հայ հոգևորականը ժառանգում էր նույնպես հոգեվոր կոչում ունեցող իր նախնիներից, ինչպես հակված էր կարծելու Ն. Մառը⁵, այլ, սովորական իմաստով, **հայրենի տուն՝ հայրենական կայված**, ինչպես էր, օրինակի համար, նույն Դուք գավառում գտնվող Ծովք դոշակը՝ Գրիգոր Պահլավունի և Ներսես Ծնորհալի եղբայրների համար⁶: Բայց չի բացաքսվում, որ Այգեկցին նաև հոգևոր հովիվ եղած լինի իր **բնիկ ժառանգության** (հայրենի տան) շրջաններում, որոնց բնակիչներին նա անվանում է «հոգևոր որդեակք իմ», ինչպես կոչանքներ քիչ հետո:

Վարդան Այգեկցու կյանքի առաջին շրջանի վերաբերյալ մինչև այժմ ոչինչ հայտնի չի. եղել, բացի այն պատահական մանր տեղեկությունից, թե ուսանել է Արքակաղնիում⁷: Դրանից դուրս՝ միայն գիտենք, որ մեզ անհայտ պատճառներով նա հալածական լինելով իր բնիկ ժառանգությունից՝ 1210 թ. գնում հաստատվում է Այգեկի առաքատում⁸, որը գտնվում էր Սև կամ Սուրբ

¹ Տես՝ Н. Марр, «Сборник притч Вардана материалы для истории средневековой армянской литературы», ч. I—III, С.-Петербург, 1894—1899.

² Հ. Հ. Տաշյան, «Ժողովածուք առակաց Վարդանայ. Նիսիքի պատմության Հայոց միջնադարեան մատենագրության ըստ հայագետ Ն. Մառի», Վիեննա, 1900:

³ Հստ Յակոտի՝ այս շրջանում գոյություն ունեին Մարաթա անունը կրող բազմաթիվ վայրեր, հմմտ. Н. Марр, I, 292, ծան. 4:

⁴ Երևանի Պետ. Մատենադարանի ձեռ. № 8356, էջ 151բ:

⁴ Տես՝ Н. Марр, I, 306.

⁵ Անդ, 294, ծան. 8:

⁶ Հմմտ. Հ. Ղ. Ալիշան, «Ծնորհալի և պարագայ իր», Վենետիկ, 1878, էջ 95—97: Բարգևն ծ. վ. Կյուլեներյան, «Ծովք, Ծովք-Տյուք և Հոռոմ-կալ», Վիեննա, 1904, էջ 18—18 և 41—44:

⁷ Տես՝ Н. Марр, I, 294.

⁸ Անդ, 306:

անվանվող լեռների (Ամանուսյան լեռների) մասերում:

Վարդան Այգեկցու ամուսնով ծանոթ գործերից մի մասը հայտնի կերպով նրա կյանքի այգեկյան շրջանից է, բայց մեծ մասի ժամանակն անհայտ է և կարելի էր ենթադրել, թե նրանց մեջ սակավ չեն այնպիսիներ, որոնք նախապես շրջանից են:

Այժմ, սակայն, նոր հայտնաբերված նյութեր հնարավորություն են տալիս հաստատելու, որ Վարդան Այգեկցին իր կյանքի նախապես շրջանում ունեցել է մատենագրական և հանրային շատ ավելի լայն ու արդյունավետ գործունեություն, քան կարելի էր ենթադրել: Նրա գրական աշխատանքների մեջ, որպես ժամանակաշրջանի պատմա-հասարակական իրադրության արտահայտիչ, մի իսկական գլուխ-գործոց է «Արմատ հաւատոյ» կամ «Համառատ հաւաքումն սրբոց վարդապետաց» անունը կրող անտիպ գիրքը, որի ավարտման տարին 1205 թվականն է և որի մեզ հայտնի օրինակների մեջ ամենալավը Երևանի Պետ. Մատենադարանի № 3295 ձեռագիրն է⁹:

«Արմատ հաւատոյ»-ն նկիրված է հայ եկեղեցու միաբնակ դավանության և նրա կարգերի պաշտպանությանը՝ «ընդդէմ երկաբնակաց և ամենայն հերձուածողաց»: Դա իր կառուցվածքով մի այնպիսի ժողովածու է, ինչպիսին էին անցյալից հայտնի՝ Տիմոթեոս Կուդի «Հակաճատութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի» գիրքը և Կոմիտաս Աղեցի կաթողիկոսի օրով կազմված «Կնիք հաւատոյ»-ն, միայն ըստ բնույթի այն տարբերությամբ, որ մինչ դրանք գուտ և միմիայն դավանաբանական հարցեր են շոշափում, «Արմատ հաւատոյ»-ն միաժամանակ և՛ դավանաբանական, և՛ ծիսական խնդիրներ է ընդգրկում:

Մենք «Արմատ հաւատոյ»-ի մասին շուտով հանդես կգանք առանձին ուսումնասիրությամբ՝ նպատակ ունենալով նաև հրատարակության պատրաստել նրա քննական բնագիրը: Այսօր ուշադրություն ենք հրավիրում Վարդան Այգեկցու մի ուրիշ գրվածքի վրա՝ «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն», որը նույնպես պատկանում է նրա նոր հայտնաբերվող գրվածքների շարքին և գտնվում է Երևանի Պետ. Մատենադարանի № 8356 ձեռագրում:

№ 8356 ձեռագիրը շատ արժեքավոր նյութեր է պարունակում Վարդան Այգեկցու երկերից: Ընդօրինակված է 1322 թ. Կիլիկիայի Կամրիկ անապատում՝ ի ձեռն Ստեփանոս կամ Փանիկ դպրի (որդի Հովհաննես քահանայի և Զապյունի): Այդ մասին վերջինս գրում է իր կրկնակ հիշատակարաններում. «Որ արժանի արար զանարժան ծառայս իւր կատարել զգիր քարոզութեանն սուրբ վարդապետին Վարդանայ որ ի Մարաթոյ»¹⁰, «Որ արժանի արար զողորմելի մեղաւորս զՍտեփանոս տյանել ի կատարումն զաստուածելէն գիրս սուրբ վարդապետին Վարդանայ որ ի Մարաթոյ»¹¹: Իսկ Վարդանի գործերի վերջում հիշատակագրում է, որ ընդօրինակությունը կատարվել է հեղինակի ինքնագրից. «Յիշատակ լիցի սա Ստեփանոսի և ծնողաց իւրոց: Զայս ի Վարդանայ վդ. ձեռացն ի գրածնէն եմ գրել, և Քրիստոսի փառք յաիտն[ան]»¹²:

Նշանակում է՝ այս ձեռագրով մեզ հասած նյութերը վավերական աղբյուրից են: Ընդօրինակության մեջ հավատարմորեն պահպանված են նաև բնագրերից շատերի վերջում գտնվող հեղինակային հիշատակագրությունները, որոնց կանոնադրականը ուրիշ աղբյուրով:

Այս ձեռագրում գտնվող նյութերի մի մասը Վարդան Այգեկցու արդեն հայտնի գործերից են, թեև նորանոր խմբագրությունների ենթարկված: Այդպիսիներ են՝ «Վասն տասն վաճառականաց» առակը, 8 առակավոր քարոզները, «Բանք վասն տասն համարոյ», «Բանք ի խորհուրդ կատարման տասն թուին» և «Պատմութիւն վասն անքուն որդանցն»¹³:

Վարդան Այգեկցու մյուս գործերը նոր են հայտնվում այս ձեռագրով:

Դրանցից մի քանիսն «Արմատ հաւատոյ» ժողովածուն կազմելու նպատակով հավաքված նախնական նյութեր են, որոնք հետո, նոր լրացումներով, կազմել են նրա Ժ—ԺԶ գլուխները: Դրանք են՝ «Յատուածաշունչ գրոց վկայութիւնք վասն ծննդեանն և մկրտութեանն Քրիստոսի, զի պարտ է ի միում ատուր տանել ի վեցն յունուարի», «Յիւրիդ Աղեքսանդրոս հայրապետին» ի Թեոդոսի ի թղթէն, զի պարտ է ուտել նրազալուցին ի իրկունն», «Վկայութիւնք ի սուրբ գրոց ընդդէմ նոցա որք ասեն թէ Քրիստոս ոչ եկեր զգառնն ի հինգշաբաթոյ երեկոյին», «Վկա-

⁹ «Արմատ հաւատոյ»-ի և նրա ձեռագիր օրինակների մասին տես նաև մեր հետևյալ հոդվածը՝ «Զել ուրբաթագեղ», Լրաբեր Հասարակական Գիտությունների, 1969, № 3(310), էջ 78—81:

¹⁰ Ձեռ. № 8356, էջ 130բ:

¹¹ Անդ, էջ 143բ:

¹² Անդ, էջ 157ա:

¹³ Անդ, էջ 1ա—130բ և 144ա—149ա:

յութիւնը յաստուածաշունչ գրոց, զի պարտ է գտորք պատարագն առնել անխմոր և ան-
շորք», «Յաստուածաշունչ գրոց վկայու-
թիւնը, զի պարտ է ասել զԽաչեցարն
[յ]ամենայն ատր ի դէմ որդոյ», «Վկայու-
թիւնը յաստուածաշունչ գրոց՝ վասն ուրբա-
թագելի զի սուտ [է] յամենայնի» և «Վասն
գատկի մատաղի, զի բարի է»¹⁴:

Վարդան Այգեկցուն պատկանող վերջին
երկու բնագրերն առանձին նյութեր են:

Դրանցից մեկը, որին մենք տալիս ենք
«Վասն անիրաւ բամբաստողաց եկեղեցոյս
Հայաստանեայց» խորագիրը, — որովհետեւ
ձեռագրում խորագիր չունի¹⁵, — իր բովան-
դակութեամբ պատկանում է «Արմատ հա-
ւատոյ»-ի շրջանակին, բայց նրա մաս չի
կազմում, օգնում է լուսաբանելու այն խըն-
դիրները, որոնք առիթ են տվել «Արմատ
հաւատոյ» ժողովածուի առաջացմանը: Դա
մի գրություն է՝ ուղղված քաղկեդոնամիտ
հայերին, այն «դիւաբերան և շատահաջ»
մարդկանց, որոնք բամբաստում էին, թէ
«Հայք տգէտ և վերջին ազգ են»:

Մյուս բնագիրն է՝ «Վասն շատահաջ քն-
նողացն յանդիմանութիւն»¹⁶, որն արժանի է
հատուկ ուշադրության, որովհետեւ իր բնույ-
թով ու բովանդակությամբ բոլորովին տար-
բերվում է նախորդ բնագրերից:

Վարդան Այգեկցու «Վասն շատահաջ
քննողացն յանդիմանութիւն» գրվածքը մի
ընդարձակ նամակ է, որի սկզբնավորու-
թյունն է՝ «Առ գերապատիւ Աստուծոյ մերոյ, և առ
քրիստոսաւեր և բարեպաշտ ժողովուրդքդ
որք բնակիք պանդխտութեամբ ի [Տե?]պա
և ի Մարաթա, ի Նափա և ի Պուշարիքն,
և յայլ շուրջ ի կայ գեղանդ, առ Ասորի և առ
Հոռոմ և առ Հայք և գրված է «ի Սուրբ լեռ-
նէս ի Տաւսիս ձորոյս»¹⁷: Ուրեմն՝ նամակն
ուղղված էր հեղինակի ծննդավայր Մարա-
թայի և հարակից շրջանների բնակիչներին,
շրջաններ, որոնց մտքողությունը կազմում
էր Դուրք գալաթը: Իսկ Դուսի (կիլիկյան
ուղղագրությամբ՝ Տաւսիս) ձորը, որտեղից
գրված է նամակը, անունն էր այն վայրի,
ուր գտնվում էր Այգեկի վանքը: Այս հաշ-

վով՝ նամակը գրված է ավելի ուշ, քան
1210 թվականը, երբ Վարդանը հաստատ-
վեց Այգեկում, և այն էլ՝ բավականին ուշ,
քանի որ ասում է, թէ «ի վաղ ժամանակաց
կայր ի սիրտ իմ գալ և տեսանել զձեզ»¹⁸:
Վարդան Այգեկցին սույն նամակով իր հո-
գեվոր որդիներին՝ Դուրք գալաթի հայ, ա-
սորի և հոռոմ (հույն) բնակիչներին հորդո-
րում է վերջ տալ կրոնական փոխադարձ
վեճերին, այլ խոսքով՝ ազգամիջյան խոռ-
վություններին:

Ի՞նչն էր առիթ տվել Վարդան Այգեկցուն՝
այս նամակը գրելու: Այդ մասին տեղեկա-
նում ենք նամակի հետևյալ տողերից.

«Ապա շատ զարմացումն կայա զիս, զի
լսեցի երեք տարոյ յառաջ, թէ սաստանայ
գոչեաց ի մէջ քրիստոնէիցց, և հայհոյել
կուտայ ձեզ զճշմարիտ որդին Աստուծոյ
զՅիսուս Քրիստոս զգառնն անմեղ, և զո-
րմն չարութեան իւրոյ սերմանեաց ի վերայ
քրիստոնէիցդ, և ցնծայ ի մէջ ձեր, որպէս և
ի մէջ Հրեիցն որք խաչեցին զորդին Աստու-
ծոյ»¹⁹:

Վեճերի բնույթը պարզվում է հաջորդ տո-
ղերից.

«Քանզի Հայն ասէ թէ ե՛ս եմ լաւ և ընտիր
քրիստոնէայ, և հայհոյէ անմտութեամբ զՀո-
ռոմն և զԱսորին: Եւ Հոռոմն ասէ հպարտու-
թեամբ թէ ե՛ս եմ ազգ առաջին, սուրբ և
գիտնական և ուղեղ հաւատ, և Հայն և Ասո-
րին ոչ են ի կարգս քրիստոնէութեան և ոչ
ունին առ Աստուած բաժին, և այսպէս նա-
խատէ և հայհոյէ: Իսկ Ասորին ասէ ծածուկ
նենգութեամբ և կեղծաորութեամբ, թէ ե՛ս
եմ ընտիր քրիստոնէայ և ունիմ անարատ
հաւատ և սուրբ կարգ, և Հոռոմն և Հայն
լցեալ են չար հերձուածաւք, ատարս են
յԱստուծոյ և զՅիսուս Քրիստոս ոչ ճանաչեն
և դժոխաց են ժառանգ»²⁰:

Պարզ է, որ Ասորիքի ազգային-կրոնա-
կան երեք գլխավոր համայնքների միջև սուր
խարվածությունն ու ծանր խոռվությունն էր
ծայր առել և այդ երևույթի վրա մտահոգու-
թեամբ էր նայում Վարդան Այգեկցին: Նա-
մակում սկզբից իսկ տեսնում ենք, որ հեղի-
նակն ակններն կերպով խաղաղասեր ու հաշ-
տարար ոգի է ցուցաբերում վիճող կողմերի
հանդեպ, կարողանում է վերևից նայել կող-
մերի վրա՝ բացարձակ անխտրականու-
թեամբ: Նա թէ՛ հայրաքար հանդիմանում է
և թէ՛ անեծքի լեզվով սպառնում հավասա-
րապէս բոլորին.

«Ո՛վ յիմար և անմիտ Հայ, թէ միայն դո՛ւ
ես քրիստոնէայ և ժառանգ արքայութեանն,

¹⁴ Անդ, էջ 132բ—143ա:

¹⁵ Անդ, էջ 149ա—151ա:

¹⁶ Անդ, էջ 151ա—157ա:

¹⁷ Անդ, էջ 151ա—151բ: Հիշատակվող աշխարհա-
գլխական անուններից առաջինը ձեռագրում եղծված
է, միայն վերջին երկու տառերն են մնացել՝ «...պա»:
Մենք այդ անունը լրացնում ենք որպէս **Տեպա** (կի-
լիկյան ուղղագրությամբ), այսինքն՝ **Դեբա**, ըստ
Պաղտմետի՝ **Ճիթա**, որ է այժմյան Այնթապ: Իսկ
Պուշարիք անունը գուցե **Քլպաշար**-ն է:

¹⁸ Անդ, էջ 151բ:

¹⁹ Անդ, էջ 152ա:

²⁰ Անդ, էջ 152ա—152բ:

և այլ ազգ չեն, ապա Աստուած թող զմի որ ի ձեռն չտանի յարքայութիւնն: Ո՛վ աղաւաշ և սրբակոյր Ասորի, թէ դո՛ւ միայն ես քրիստոնէայ և բաժին Աստուծոյ, և այլ ազգ չկայ, ապա Աստուած թող զմի որ ի ձեռն չտանի յիր հանգիստն: Ո՛վ խոյ և խաւարեալ Հոռոմ, թէ դո՛ւ միայն ես քրիստոնէայ և ընտիր աստուածապաշտ, և արժանատր վեփինն Երուսաղէմի որ է մայրն Պետրոսի և Պօղոսի, և այլ ազգ չկայ, ապա Աստուած թող զմի որ ի ձեռն չաճէ յիր առագաստն և ի տաճարն»²¹:

Ահա և հովվական խրատը.

«Ապա աղաչեմ զձեզ, որդեա՛կք, ամէն ազգ կալէք զիր եկեղեցուն սահմանն և սովորութիւնն և զկարգն՝ զպատարագելն, զտաճելն, զպահքն, զմկրտելն, և առ իրար սիրով կեցիք և խաղաղութեամբ, որ Քրիստոս հանգչի առ ձեզ: Զի զհաւատքն ուղիղ պահիցէք, զամենատրբ երրորդութիւնն հաւասար և համագոյ և անբաժանելի դասանցէք, և զԲանին Աստուծոյ մարդկոյութիւնն ճշմարիտ դասանցէք, և վասն կարգաց եկեղեցոյ մի՛ քննէք և բանավէճ լինիք և անհանգստիք. զայս մեծն Դիոնիսիոս Աթենաքին գրեաց առ Թէոփորոս աշակերտն իւր որ էր հայր վանաց»²²:

Վարդան Այգեկցոյ «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն» գրվածքում ի հայտ եկող ազգային ու կրոնական համերաշխության այս անկողմնակալ ոգին ըստ էության ներդաշնակ է նրա մյուս գրվածքների ոգու հետ: Եթե համեմատության առնենք սույն գրվածքը «Արմատ հաւատոյ» գրքի հետ, կտեսնենք, որ երկուսի միջև եղած տարբերությունը լոկ արդյունք է երկու գրվածքների միջև եղած նպատակների տարբերության: «Արմատ հաւատոյ»-ն կյանքի է կոչվել հայ եկեղեցին պաշտպանելու համար Բյուզանդիայից և լատինական Արեւմտոքից ներմուծվող քաղկեդոնական քարոզչության դեմ, ուստի և նրա նպատակն էր պարզապէս ինքնապաշտպանության պայքար կազմակերպել Կիլիկիայում դրոսից թելադրվող գաղափարական հարձակումների դեմ, քայքայողական անհանդուրժելի քննադատությանը պատասխանել պաշտպանողական աններող քննադատությամբ: Այս գաղափարն ինքնին իսկ գերծ լինելով հարձակողական բնույթից, «Արմատ հաւատոյ»-ն ներքին կյանքի անդորրությանն էր ձգտում Կիլիկիան Հայաստանում, ուր ընդունված կարգուսարքն արդեն ապահովում էր այլադավան այլազգիների հաշտ ու խաղաղ համակեցությունը հայերի հետ՝ ինչպէս

Այգեկցին ինքն է ասում, թէ «ի տուն իշխանութեանս Հայոց են Ասորի իշխանք և Հոռոմք, և ասորի վաներ և հոռոմ և վրացի, և ունին պատիւ և ապրանք ի տանէս Հայոց, և կան խաղաղութեամբ և սիրով ամէն ազգ յիր եկեղեցոյն կարգքն և ի սահմանն, և զԱստուած փառատրեն»²³: Ուստի՝ «Արմատ հաւատոյ»-ն ըստ էության ազգային-կրոնական համերաշխության գաղափարը պաշտպանող գիրք էր:

Իսկ «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն» նամակը բոլորովին այլ պայմանների ծնունդ էր: Այստեղ խնդիրը կայանում էր ոչ թե հայրենիքում կազմակերպված մի գաղափարական հարձակման դեմ ինքնապաշտպանության դիմելու մեջ, այլ նրա սահմաններից դուրս գտնվող մի շրջանում կրոնական վեճերի ձևի տակ տեղի ունեցող ազգամիջյան խռովություններ մարելու, թույլ չտալու, որ նրանք զարգանան: Տեղական բնույթ կրող այդ վեճերի հետագա հավանական զարգացման մեջ Վարդան Այգեկցին Կիլիկիան Հայաստանի շահերի տեսակետից արդյոք տեսնո՞ւմ էր որևէ վտանգ, ասենք՝ «Արմատ հաւատոյ»-ով կազմակերպված պայքարը դժվարացնելու առումով: Դժվար է հաստատ բան ասել: Բայց, անկախ բոլոր տեսակի հավանականություններից, «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն» գրվածքը կա և մնում է որպէս նրա հեղինակի լայնամիտ, հաշտարար ու խաղաղասեր տրամադրությունների պերճախոս վկա:

Եթե Վարդան Այգեկցին «Արմատ հաւատոյ»-ով հայ եկեղեցու ինքնուրույնության ու ազգայնության գաղափարն էր պաշտպանում, ապա «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն» նամակով նա նույն առումով իր պաշտպանության տակ էր առնում հաւասարապէս նաև մյուս այլադավան եկեղեցիները, համաքրիստոնէական նշանաբանով առաջ քաշելով եկեղեցիների միասնության գաղափարը, որ ընթերցողներին գրելով, թե «դուք ի մի Քրիստոս կոչեցայք և ի մի առաքան մկրտեցայք, ի մի հայր և ի մի սուրբ հոգի լուսատրեցայք»²⁴:

Վարդան Այգեկցին հայ միջնադարյան մատենագրության մեջ հանդես է գալիս որպէս եկեղեցու ազգայնության և ազգային եկեղեցիների համերաշխության գաղափարախոս:

Հրատարակության ենք տալիս նրա «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն» նամակի բնագիրը:

²¹ Անդ, էջ 153բ:

²² Անդ, էջ 155ա:

²³ Անդ, էջ 156ա:

²⁴ Անդ, էջ 153բ:

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ

151ա

ՎԱՍՆ ԾԱՏԱՀԱԶ ՔՆՆՈՂԱՑՆ ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ

(Ձեռ. № 8356)

151բ Առ գերապատուեալ և սուրբ քահանայքդ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և առ քրիստոսաւեր և բարեպաշտ ժողովորդքդ ॥ որք բնակիք պանդրխտութեամբ ի [Տե?]պա և ի Մարաթա, ի Նաւթա և ի Պուշարքն (sic), և յայլ շուրջ ի կայ գեղանդ, առ Ասորի և առ Հոռոմ և առ Հայ, գրեմ ի Սուրբ լեռնէս ի Տաւսիս ձորոյս, մեղաւոր հողս Վարդան որ ի Մարաթոյ Վերնոյ: ՅԱստուծոյ հարե շնորհք ընդ ձեզ, և խաղաղութիւնն Յիսուսի Քրիստոսի՝ ծոցածին Բանին Աստուծոյ եկեացէ և հանգիցէ ի վերայ ձեր հայրական հոգւոյն զարութեամբ, և արիննացէ զձեզ հոգւով և մարմնով և [զ]գաւակս ձեր և զամաւսունս ձեր, զէնն և զանդատանս ձեր, և բառնայ զգաւսմն բարկութեան իւրոյ ի ձէնց և յանասնոց և ի սահմանաց ձերոց, և ջնջեցէ զմոլոս մնջեցելոց ձերոց Քրիստոսի սուրբ և անապական արիւնն որ հեղաւ ի վերայ խաչին վասն Ադամայ և ծննդոց մորա: Եւ գիտացնեմ ձեզ, հոգևոր որդեակք իմ, որ ի վաղ ժամանակաց կայր ի սիրտ իմ գալ և տեսանել զձեզ և խաւսել առ ձեզ զհրամանս արինացն Աստուծոյ, և մեղք իմ խախալնեաց գիս և տկարութիւն ծերութեանս, վասն որոյ և ոչ կարացի գալ. այլ խորհեցայ գրով խաւսել ընդ ձեզ զհրամանս արինացն Աստուծոյ: Ապա շատ զարմացումն կալաւ զիս, զի լսեցի երեք տարոյ յառաջ, թէ սատանայ գոչեաց ի մէջ քրիստոնէիցդ, և հայհոյել կուտայ ձեզ զճշմարիտ որդին Աստուծոյ զՅիսուս Քրիստոս զգառնն անմեղ, և զորովն չարութեան իւրոյ սերմանեաց ի վերայ քրիստոնէիցդ, և ցնծայ ի մէջ ձեր, որպէս և ի մէջ Հրէիցն որք խաչեցին զորդին Աստուծոյ: Քանզի Հայն ասէ թէ եւս եմ լաւ և ընտիր քրիստոնէայ, և հայհոյէ անմտութեամբ զՀոռոմն և զԱսորին: Եւ Հոռոմն ասէ հպարտութեամբ թէ եւս եմ ազգ առաջին, սուրբ և գիտնական և ուղեղ հաւատ, և Հայն և Ասորին ոչ են ի կարգս քրիստոնէութեան և ոչ ունին առ Աստուած բաժին, և այսպէս նախատէ և հայհոյէ: Իսկ Ասորին ասէ ծածուկ նենգութեամբ և կեղծաւորութեամբ, թէ եւս եմ ընտիր քրիստոնէայ և ունիմ անարատ հաւատ ॥ և սուրբ կարգ, և Հոռոմն և Հայն լցեալ են չար հերձուածաւք, ատար եմ յԱստուծոյ և զՅիսուս Քրիստոս ոչ ճանաչեմ և դժոխոց են ծառանգ: Եւ այսպէս սատանայ խաղաղ և ցնծայ ի մէջ ձեր, և զանմեղն և զանարատն Յիսուս Քրիստոս տայ ձեզ հայհոյել և ի խաչ հանել որպէս արարին Հրէայքն յԵրուսաղէմ, և դժոխոցն [արժանի] առնէ զձեզ, ո՛վ ողորմելիք, և դուք կուրացեալ էք և

ոչ իմանայք: Ապա թէ դուք ձեր լեզուաք և ձեր վկայութեամբ կամիք լինել սուրբ և անարատ հաւատով, առանց գրոց վկայութեան և քննութեան, ահա զայ խալիֆայն ի Բաքելոնէ, և խաւսին ի Հայպաց, և նախատեն զձեզ առանց սուրբ գրոց վկայութեան, և ասեն թէ դուք ամենայն քրիստոնէայք ատար էք յԱստուծոյ և ոչ ճանաչէք զնա, զի երեք ատուած ասէք և արատաւոր ծնունդ ասէք Աստուծոյ՝ որպէս մարդոյ, և պաշտէք զհիպստ և զքար որպէս էին առաջին կուսպաշտքն: Յիմար և անմիտ Հոռոմ, խալ և խաւարեալ Ասորի, աղաւաշ և կոյր Հայ. զայս չէ՞ք լսել ի գրոց, որ ամենայն ॥ մարդ պիտի որ զիր կարգ և զհաւատն գովէ: Չգիտէ՞ք որ սատանայ առաց ի չար միտս իւր, թէ ես իրաւ եմ քան զԱստուած: Եւ Ադամ առաց, թէ՛ Աստուած, դու կործանեցիր զիս որ զկինս ետուր ինն: Եւ կալէն զինքն իրաւ տեսաւ և զանմեղն Արեւ կապան: Եւ Մարիամ զՄովսէս խաչատաւիկաց որ ատուած կոչեցաւ: Եւ Վորիս և Գադան հայհոյեցին զՄովսէս, և երկիր կլաւ զնոսա: Եւ ստու մարգարէքն որ դիւարն խաւսին, զճշմարիտ մարգարէքն Աստուծոյ նախատէին և կախարդ կոչէին: Ո՛վ խուրք և կոյրք, չէ՞ք ի լսել ի սուրբ Աւետարանն, որ անարեւն Հրէայքն զանարատ գառն Աստուծոյ զՅիսուս Քրիստոս, որ է ծնունդն սրտին աստուծոյ, և է խորհուրդ և քան և զարութիւն և իմաստութիւն և որդի Աստուծոյ հար, զնա Սամարացի և կախարդ և դիւահար և Բէղզիբոլ (sic) կոչէին, և ասէին առ Քրիստոս, թէ դու մարդ ես և զանձն քո Աստուած առնես: Չգիտէ՞ք որ հերձուածաւք հայրապետքն զճշմարիտ և զուղղափառ սուրբ հայրապետքն հայհոյէին և անարգէին, ստու ॥ համարէին: Ո՛վ յիմար և անմիտ Հայ, թէ միայն դո՛ւ ես քրիստոնէայ և ծառանգ արքայութեանն, և այլ ազգք չեն, ապա Աստուած թող զմի որ ի ձէնց չտանի յարքայութիւնն: Ո՛վ աղաւաշ և սրբակոյր Ասորի, թէ դո՛ւ միայն ես քրիստոնէայ և բաժին Աստուծոյ, և այլ ազգ չկա, ապա Աստուած թող զմի որ ի ձէնց չտանի յիւր հանգիստն: Ո՛վ խուրք և խաւարեալ Հոռոմ, թէ դո՛ւ միայն ես քրիստոնէայ և ընտիր աստուածապաշտ, և արժանաւոր վերինն Երուսաղէմի՝ որ է մայրն Պետրոսի և Պաւլոսի, և այլ ազգ չկա, ապա Աստուած թող զմի որ ի ձէնց չաճէ յիւր առաջատուն և ի տաճարն: Ընդէ՞ք ոչ հայիք ի տունն Մալիմնաց, թէ քանի ազգ են բաժանեալ լեզուաք, և կան խաղաղութեամբ և սիրով առ իրար, ի մի սահման և ի կարգ, զոր առաջ-

153ա

153բ

նորոյն իրեանց Մահմէտ կարգադրեալ և սահմանեալ զնոսա: Եւ դուք ի մի Քրիստոս կոչեցայք և ի մի աւագան մկրտեցայք, ի մի հայր և ի մի սուրբ հոգի լուսաւորեցայք, և ի մի հայր զարձեալ նախատեք զիրար և հայհոյեք ॥^{154a} 154a

աւացին, թէ երբ պիտէր նա Բանն Աստուած հետանայր ի մարմնոյն և փախէր, և երբ պիտէր նա ի մարմնին: Եւ չարն Ետիքէս աւագ թէ առ աշաւք շրջեցաւ Քրիստոս յաշխարհի, և այլ անթիւք այսպիսի բանք: Ո՛վ յիմարք և անմիտք, չգիտէ՞ք որ այս չէ ժամ զհաւատքս քննել կամ հաստատել, զի լցաւ երկիր գիտութեամբ Աստուծոյ. այժմ որ ունի՞ ա՛յն է զինչ որ ունի: Այս գործոց ժամ է և ապաշխարութեան, զի կարճեցաւ ժամանակս և եկաք հաւասք ի դուռն դատաստանին, զի սակաւ մի ժամանակ է մնացեալ և յետ առնելոյն զերուսաղէմ յալլ ազգացն, յայտնի ննոնն և մերձի արն դատաստանի: Հոռոմն ասէ թէ ե՛ս ծանեալ առաջ զՔրիստոս, և Աստի՛ն ասէ՛ թէ ե՛ս, և Հայն ասէ՛ թէ ե՛ս: Ահա ձեր անմտութիւնդ յայտնեցաւ. ապա սատանայ քան զամէնոյ էր յառաջ առ Աստուած, ապա նա լա՛ւ է քան զձեզ, թէ առաջինն մեծ է քան զյետինն: Ո՛վ ողորմիկիք, առ Աստուած չկայ առաջին և վերջին, զի որ զբարին գործէ, ա՛յն է առաջին առ Աստուած: ॥ Որպէս և իմ ճշմարիտ Յիսուս Քրիստոսն որդին և Բանն Աստուծոյ հրամայէ, թէ եղիցին առաջինք՝ յետինք, և յետինք՝ առաջինք. զի որ զտասն և զմի ժամն յարն գործեաց և որ զմի ժամն, նա զվարձն միասկէս ետ ողորմանն Աստուած, զի նա չէ իբրև զձեզ չար և լցեալ նախանձով: Զի թէ աչսար գայ յարեմտից աստանապաշտ մի, և մկրտի յանուն հայր և որդւոյ և սուրբ հոգւոյն ի չարշարանքն Քրիստոսի և ի մահն և ի յարութիւնն, և լինի բարեգործ անկի քան զքեզ, լաւ և մեծ է նա առ Աստուած քան զքեզ որ ի հազար պապէ ի վեր քրիստոնեայ եւ, թէ ե՛ս յազգէն Պետրոսի և Պաղոսի ես: Զգիտէ՞ք որ ել Յուդա որ առաջին էր, և եմուտ Մատթիա ի դասս առաքելոցն, որ վերջին էր: Զգիտէ՞ք որ քահանայական շնորհքն Աստուծոյ է և ոչ մարդոյ. քանզի գտաք ի գիրս, որ կախարդ և սատանապաշտ պապ և պատրիարք նստան ի Կոստանդինուպոլիս և ի Հոռոմ, բայց Աստուած զիր շնորհքն չարգիլեաց (sic) ի քրիստոնէիցն ॥ ի ձեռնադրելն: Նոյնպէս և այսար Աստուած ըստ գործոց իրեանց դատելոց է զառաջնորդքն և զքահանայքն, և զիր շնորհքն չխափանէ ի քրիստոնէիցն ի մկրտելն, ի պսակելն, ի խոստովանելն և ի ձեռնադրելն:

Ապա աղաչեմ զձեզ, որդեա՛կք, ամէն ազգ կալէք զիր եկեղեցւոյն սահմանն և սովորութիւնն և զկարգն՝ զպատարագելն, զտանելն, զպահքն, զմկրտելն, և առ իրար սիրով կեցիք

և խաղաղութեամբ, որ Քրիստոս հանգչի առ ձեզ: Զի զհաւատքն ուղիղ պահեցէք, զամենասուրբ երրորդութիւնն հաւասար և համագոյ և անբաժանելի դասանցէք, և զԲանին Աստուծոյ մարդեղութիւնն ճշմարիտ դասանցէք, և վասն կարգաց եկեղեցւոյ մի՛ քննէք և քանավէ՛ն լինիք և անհանգստիք. զայս մեծն Դիոնիսիոս Աթենացին գրեաց առ Թէոդորոս աշակերտն իւր որ էր հայր վանաց: Եւ ահա, որդեա՛կք, ցուցանեմ ձեզ գործ մի զարմանալի գորարար սուրբ անտարանիչն Յովնան[ն] էս: 155p

॥ Զի Պետրոս ը[զ]գատիկն ի կիրակէ սահմանեաց ի Հոռոմ որպէս և էր, և Յովնաննէս յԵփեսոս հետ Հռիփցն սահմանեաց ըզգատիկն ի յաւոր հինգշաբաթոց. և ուր հայրապետ փոխեցան յետ նորա մինչև ի Պաղիկրատէս և հետ Ջոսմոյն առնէին ը[զ]գատիկն, և կոխ չկայր զի հաւատքն մի էր: Եւ մնաց այսպէս մինչև ի Գրիգոր Աստուածաբան և ապա նա աղաթիւք ուղղեաց և միաւորեաց ը[զ]գատիկն: Ո՛վ որդեակք, հաւատով անարատ լիք, և բարի գործաւք և խաղաղութեամբ և սիրով բնակեցէք, և յամենայն ար անտեաց տանեցէք, և ծննդեան, և յայտնութեան, և խաչելութեան, և յարութեան, և համբարձման, և հոգւոյ զալստեան, և առաքելոց, և մարգարէից, և Աստուածածնի, և խաչի, և հայրապետաց, և մարտիրոսաց, և սուրբ հրեշտակաց. և թէ այդ մեղք է, նա ես տամ Աստուծոյ պատասխանի: Եւ մարդ որ աղաթէ առ Աստուած, թէ զմարմնաւոր մարդ առաքէ ի դժոխս, եղիցի ժա՛ննանց դժոխոց անձն նորա: Ո՛վ որդեակք, ի տուն իշխանութեանս Հայոց եւն Ասորի իշխանք և Հոռոմք, և ասորի վանք և հոռոմ և վրացի, և ունին պատիւ և ապրանք ի տանէս Հայոց, և կան խաղաղութեամբ և սիրով ամէն ազգ յիւր եկեղեցւոյն կարգն և ի սահմանն, և զԱստուած փառաւորեն:

Յառաջագոյն գրեցին Հոռոմոց և Ասորոց և Հայոց առաջնորդքն և հայրապետքն, և պնդով նշովս եղին ի վերայ և աւացին, թէ ամենայն ազգ քրիստոնեայ թող յիւր ազգն առնեն խընամութիւն, որ չխառնակի մի ազգն ի միւսն, և յիւր ազգն մկրտի և հաղորդի. և այս բարի էր զորս սահմանեցին, զի, ո՛ր գիտէ, թէ լինէր հերձուած ինչ ի մի ազգն, նա չխառնէր ի միւս ազգն: Բայց ժողովորդք ազգացն ոչ պահեցին զհրամանս առաջնորդաց իրեանց: Եւ ահա ի Կեսարիա և ի Մելիտի, ՚նուհա և յԱնտիոք, և ի մեր աշխարհս Կիլիկիեցոց անխտիր կոխանամեան և կոստանուն հարսն զդատերս միմեանց, Ասորիւն և ॥ Հայն և Հոռոմն, և ոչ կարացին խափանել զնոսա ոչ հին առաջնորդքն և ոչ նորա: Լի՛ք և դուք աչսպէս, և պաշտեցէք ամենայն ազգ զիր կարգն և զսահմանն յիւր եկեղեցին: Եւ զայս քաջ գիտացիք, զի որ ի ձե՛նք խիստ պարծենալ թէ ես անարատ եմ հաւատով և կարգով, սուտ է բերան

¹ Զեռագրից մեկ թերթ ընկած է:

157ա

նորա. քանզի սատանայ բնաւ ոչ եթող եկեղեցի և ազգ և մարդ անարատ և անվնաս, այլ դեղնալ ապականեաց զամենայն ազգ և զեկեղ[եց]ի, և իրք մի վնաս և չար սերմանեաց ի նոսա որ է արոմն (sic). քանզի շրջեցայ ես շատ ժամանակ ընդ աշխարհս, և տեսայ աչաւք իմաւք զամենայն ազգ քրիստոնէայ: Ապա թէ լինի ի միջի ձերում խոտվարար մարդ՝ ստոյգ սատանայ խաւսի քերանով՝ նորա. դուք նշանակեսցիք զնա և գրեցէք առ մեզ, ես ողորմութեամբն Աստուծոյ յիւր գլխաւոր առաջնորդէն առնում իւր անէծք և հալածեմ զնա, թէ Հայ է, և թէ Հոռոմ, և թէ Ասորի: Բայց աղալչանաւք սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոց ջնջեսցէ Աստուած և բառնայ զչարն և զշատահաջ մարդն ի միջոյ ձերմէ որ տեսանէք աչաւք ձերովք: Եւ սուրբ հոգին հայրական արհմեացէ

զամենայն ազգս քրիստոնէից, և պարգևեացէ նոցա անարատ և ուղիղ հաւատս: Եւ թէ կայ իրք մի չար լեկեղեցիս քրիստոնէից, զայն չբահամարի նոցա ի մեղս, զի մարդիկ են տկարամիտք, և սատանայ խաւսալ է և նենգաւոր: Եւ զամենայն որդիս Աղամայ որ այս տկար և ողորմելի մարմնովս են, փրկեացէ Աստուած ի մեղաց և ի դժոխոցն, և տայ ձեզ ամենայն քրիստոնէիցոյ հոգի զղջման և ապաշխարութեան, և սուրբ և ուղիղ հաւատս որ ի հայր և յորդի և ի սուրբ հոգին: Եւ վասն Աստուծոյ աղաչեմ զձեզ ի բաց թողէք ի ձեց զտըրտունց և զքամբասանք, և հոգացէք զմեղս ձեր և զահագին ար դատաստանին որ խորհրդոց և բանից համարս պահանջելոց է ի մեց ահաւոր դատաւորն Բրիստաւ:

Հրատարակեց՝ Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ





ՅՈՒ. Ա. ԹԱՄԱՆՅԱՆ

(Ծարտարապետ)

ՂՐԻՄԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՆՔԸ

Ղրիմը հայկական գաղթօջախներից մեկն է, որտեղ պատմական հարուստ նյութ կա, որը և խոսում է ժամանակի բարձր մշակույթի մասին:

Կաֆայից (այժմյան Թեոդոսիա) մեր նախնիները տարածվել են ամբողջ թերակղզիով, կառուցելով բազմաթիվ եկեղեցիներ, բնակավայրեր, մենաստաններ, աղբյուրներ, դպրոցներ և այլ կառուցվածքներ, որոնց միայն չնչին մասն է հասել մեզ: Դարերի ընթացքում, արշավանքների և զանազան ասպատակությունների հետևանքով շատ ուժեղ ավերվել են մեր հուշարձանները: Նրանց շուտափույթ վերանորոգումը դարձել էր հրամայական պահանջ և ահա 1968 թվականից սուրբ Խաչ վանքում, ինչպես նաև Թեոդոսիայի ս. Սարգիս և Հրեշտակապետաց եկեղեցիներում սկսվել են վերանորոգման աշխատանքները:

Այդ կապակցությամբ Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերությունը ստեղծել է հատուկ հանձնաժողով, որն զբաղվում է այդ հուշարձանների վերանորոգման աշխատանքների ընթացքում մասնագիտական օգնություն ցույց տալու հարցով:

*
*
*

Հայերը, ստեղծելով իրենց բազմաթիվ գաղթօջախները հայրենիքից հեռու, երկար ժամանակ պահպանել են իրենց ազգային

հատկանիշները՝ մայրենի լեզուն, գրականությունը, արվեստն ու սովորությունները: Այս հանգամանքը նպաստում է թողած մշակութային ժառանգության ուսումնասիրմանը և միևնույն ժամանակ հնարավորություն է ընձեռում ըմբռնելու այն ներքին ձրգտումը, որով իր գոյությունը պահպանել է մեր ժողովուրդը:

Համաձայն պատմական աղբյուրների, դեռ 10—11-րդ դարերում հայերը առևտրական կապեր են ունեցել Ռուսաստանի հարավի, հատկապես Կիևյան Ռուսաստանի հետ: Ղրիմ թերակղզին, գտնվելով առևտրական ճանապարհների հատման կենտրոնում, վաղուց ի վեր գրավել էր հայ առևտրականների ուշադրությունը, ուր կլիմայական պայմանները և աշխարհագրական դիրքը շատ նպաստավոր էին թե՛ նավագնացության և թե՛ արհեստների ու առևտրի զարգացման համար: Այս էր պատճառներից մեկը, երբ այնտեղ հետագայում հիմնադրվեցին հայկական գաղթօջախներ:

Տեղավորվելով Ղրիմի Կաֆա և նրա մերձակա քաղաքներում՝ Սուտաղում (Սուդակ), Սուրխաթում (Հին Ղրիմ), Բելոգորսկում (Կարասու բազար) և այլ տեղերում, հայերը ստեղծում են իրենց օջախները, իրենց «փոքրիկ Հայաստանը»՝ սեփական մշակույթով, միատ ու կացով, սովորություններով, շինարարական արվեստով և ճարտարապետությամբ: «Ղրիմի ճարտարապետությունը» գրքում հետևյալ գնահատականն է տրված

հայերի գործունեությանը. «Դրիմի ճարտարապետության հետագա զարգացման մեջ մեծ դեր խաղացին հայ ճարտարապետները: Հրաշալի շինարարներ, հարուստ ավանդույթներով, որոնք Դրիմի շինարարության մեջ ներդրեցին նոր ձևեր, իսկ ճարտարապետության մեջ՝ նոր շենքերի տիպեր»¹:

Ինչպես երևում է մեջքերումից, այս գնահատականը միանգամայն ճիշտ է բնորոշում հայերի շինարարական գործունեությունը Դրիմում:

Դրիմում կառուցված ճարտարապետական հուշարձանները՝ իրենց յուրահատուկ ճարտարապետական ձևերով, միևնույն ժամանակ ունեն ընդհանուր, անխզելի կապեր բուն Հայաստանի ճարտարապետության հետ: Այդ կապը շատ ավելի ուժեղ է զգացվում հատկապես վաղ շրջանի կառուցվածքներում:

Տարակույս չկա, որ Դրիմի ճարտարապետական դպրոցը կապված է բուն Հայաստանի ճարտարապետության հետ: Կառու-



Սուրբ Խաչ վանքի ընդհանուր տեսքը XIX դարի վերջում

Նրանց ստեղծած ճարտարապետությունն այժմ կարելի է դիտել որպես Դրիմի հայկական ճարտարապետության դպրոց, միավորելով այն Լեհաստանի, Ուկրաինայի, Բուկովինայի և Մոլդավիայի հայ ճարտարապետական դպրոցներին, որպես առանձին հյուղը: Անշուշտ, այդ ճարտարապետական դպրոցներն ունեն իրենց յուրահատուկ կողմերը, սակայն ունեն նաև ընդհանուր շփման կետեր, որոնք և տալիս են մեզ հայկական գաղթօջախների ճարտարապետությունը համեմատության մեջ դնելու իրավունքը:

ցողական մանրամասները, քիվերը, կամարները, պատուհանները և նրանց քանդակազարդ երեսակալները, ինչպես նաև պատերի շարվածքի ձևը, քարի մշակումը, ծածկառանքի և թաղերի կառուցողական ձևերը սերտորեն կապված են բուն Հայաստանի կոնստրուկտիվ ձևերի հետ: Միայն կլիներ ասել, որ միայն վերը նշված հատկանիշներով են կապված ճարտարապետական այդ դպրոցները: Կառուցվածքների հատակագր-ծային և տարածական լուծումները, նրանց տարատեսակները ավելի են համոզում մեզ, որ նրանք անխզելիորեն կապված են իրար հետ:

Լայն տարածում են գտել Դրիմում խաչ-

¹ Ю. С. Асеев, Г. А. Лебедев. «Архитектура Крыма», Киев, 1961 г. ст. 20 (թարգմ. Յու. Թ.):

քարերը, որոնք, մեծ մասամբ շարված լինելով պատերի մեջ, իրենց քնույթով արտահայտել են նույն գաղափարները և նույն նշանակությունն են ունեցել, ինչ որ՝ Հայաստանի խաչքարերը: Նույնը վերաբերվում է նաև քանդակագարդ փայտյա դռներին, որոնց ստանձին օրինակները դեռ հնում գաղթի ժամանակ իրենց հետ բերել են Անիից: Նույնի մասին է վկայում նաև վերջերս Թեոդոսիայի ս. Սարգիս եկեղեցում գտնված քանդակագարդ, փայտյա խոյակը, որը հետավոր կերպով հիշեցնում է Սևանի համարահայտ խոյակները:

Վերը նշվածները, ձևերի ընդհանրությունը, համոզեցուցիչ ապացույց են հանդիսանում այն սերտ կապի մասին, որը գոյություն է ունեցել բուն Հայաստանի և Ղրիմի հայկական ճարտարապետության միջև: Դժբախտաբար մենք զրկված ենք բնակելի տների կամ կենցաղային իրերի որոշակի համեմատություն կատարելու հնարավորությունից, այնուամենայնիվ կարող ենք պնդել, որ նշված կապերը բավական են հաստատելու մեր տեսակետը:

Չնայած այն անժխտելի կապի, որը գոյություն ունի Հայաստանի և Ղրիմի ճարտարապետությունների միջև, վերջինս ունի ինքնուրույն հատկանշական կողմեր, որոնք դրսևորվում են արդեն տեղական ազդեցությունների հետևանքով:

Չի կարելի անտեսել նաև հայկական մշակույթի ազդեցությունը տեղական ժողովուրդների՝ հույների, թաթարների և այլոց մշակույթի վրա:

*
* *


Մեզ հասած հուշարձաններից Հին Ղրիմ քաղաքի սուրբ Խաչ վանքն է, որը համեմատաբար լավ է պահպանվել, որին և նշվիրվում է այս հոդվածը:

Սուրբ Խաչ վանքը գտնվում է Ղրիմ թերակղզու արևելյան մասում, Հին Ղրիմ քաղաքից մոտ 3,5 կմ արևմուտք, անտառապատ բարձրադիր հարթակի վրա: Ծրջակա ոչ բարձր սարերը ծածկված են խիտ անտառներով, այնպես որ մինչև ընդհուպ հուշարձանին մոտենալը, վերջինս բոլորովին չի երևում: Տեղն ընտրելիս այդ պայմանն, անշուշտ, երկրորդական դեր չի խաղացել:

Հին Ղրիմ քաղաքը, որը անցյալում կոչվել է նաև Սուրխաթ, կառուցված է Թեոդոսիա—Սիմֆերոպոլ խճուղային ճանապարհի վրա, մի գեղեցիկ դաշտավայրում: Սուրբ Խաչ վանքի ճանապարհը սկսվում է քաղաքի արեւմտյան արվարձանից և, անցնելով մի փոքրիկ գետակի վրայով, մտնում է անտառ:

Անտառի բուսականությունը զարմանալի կերպով հիշեցնում է Հայաստանի բուսականությունը, կազմված հոնի, ալոնի և այլ ծառերի տեսակներից: Որոշ ժամանակ անցնելուց հետո, ճամփորդի առաջ հառնում է միջնադարյան ճարտարապետական կոթողը:

Սուրբ Խաչ վանքը, սկսած իր հիմնադրումից, հանդիսացել է Ղրիմի հայության նշանավոր հոգևոր կենտրոններից մեկը: Այստեղ վեց դար անընդմեջ հարատևել է վանական կյանքը և մինչև վերջին ժամանակներս էլ շարունակվել են կրոնական մեծ տոնակատարությունները, ուխտավորների հավաքը և այլ կրոնական ծիսակատարությունները:



Ս. Նշան եկեղեցու տեսքը արևմուտքից

Նշանակալից դեր է կատարել սուրբ Խաչ վանքը նաև միջնադարյան մշակութային կյանքի զարգացման գործում: Հայտնի է վանքի դպրոցը, ուր ուսուցչություն են արել բազմաթիվ հայտնի գործիչներ, հատկապես կարող ենք նշել Ստեփանոս Թոխատեցուն, Մարտիրոս Ղրիմեցուն և այլ նշանավոր մարդկանց:

Հուշարձանախումբը ներկայացնում է բավական խոշոր վանական համակառույց, ուր բոլոր կառուցվածքները խմբավորված են երկու փակ բակերի շուրջը:

Հիմնական եկեղեցին՝ ս. Նշանը² (որոշ հեղինակների մոտ նշված է ս. Գևորգ³), կառուցված է 14-րդ դարում: Եկեղեցու ճարտարապետական հորինվածքը որոշ չափով առնչվում է հայկական ճարտարապետության մեջ հանրահայտ գմբեթավոր բազիլիկաներին, (Գայանե, Մրեն), կամ ավելի

² Հ. Միմաս Բժշկեան. «Մանապարհորդություն ի Լեհաստան», Վենետիկ, 1830, էջ 324:

³ Հ. Ն. Ղալփախյան. Հայ-ռուսական կուլտուրա-կան հարաբերությունները և նրանց արտացոլումը ճարտարապետության մեջ, Երևան, 1957:

ճիշտ կլիներ ասել, առանձին գմբեթակիր մույթերով կառուցված տաճարների (Տաթև) տիպերին: Հատկապես մեծ մասնություն կա ս. Նաչի և Տաթևի տաճարի հատակագծային լուծման մեջ, որ գմբեթակիր կամարները հենվում են առանձին կանգնած մույթերի և արևմտյան մասում ավանդատների համապատասխան պատերի վրա: Այս դեպքում տաճարի կառուցողը, մեծությունը չկապելով գմբեթի տրամագծի մեծության հետ, հնարավորություն է ստանում կառուցելու բավական ընդարձակ եկեղեցի:

Եթե Հայաստանի ճարտարապետության մեջ 13-րդ դարում հիմնավորվել էր եկեղեցիներում արևմտյան ավանդատների կառուցման սկզբունքը և բացառություն էին կազմում մի քանի հուշարձաններ, ինչպես օրինակ՝ Գոշավանքի Աստվածածին և սբ. Գրիգոր եկեղեցիները, ապա այստեղ տեսնում ենք, որ արևմտյան ավանդատները վերացվում են, և նրանց տարածությունները միացվում են եկեղեցու ընդհանուր տարածությանը՝ պահպանելով միայն արևելյան մասում փոքրիկ արսիդներ: Նույնը կարելի է ասել նաև արևելյան ավանդատների վերաբերյալ, որոնք համարյա չեն անջատվում ընդհանուր ներսի տարածությունից, ստեղծելով եռաբսիդ կառուցվածքի տիպավորություն: Այդ տիպը մշակվել է դեռ 6-րդ դարում (Արթիկի փոքր եկեղեցի) և հետագայում էլ կիրառվել է այլ հուշարձաններում:

Դրիմում բաց արևելյան ավանդատներով հուշարձանների տիպը լայն կիրառում է գրտել, որը ապացուցվում է մի շարք պահպանված հուշարձանների օրինակներով:

Հատակագծում առանձին կազմած մույթերը փաստորեն անջատվում են արևելյան ավագ խորանից՝ երկու ավանդատները միացնող բացվածքներով, իսկ արսիդայի վերևի մասում կազմում են համատեղ աշխատող միաձույլ զանգված: Այս հանգամանքը որոշ չափով հեռացնում է մասնության համար մեջ բերված կառուցվածքների օրինակից, սակայն վկայում է, որ կառուցողը ոչ թե կոտորեն է ընդօրինակել Հայաստանից բերված ձևը, այլ մշակել է ինքնուրույն, ելնելով տեղական պայմաններից: Ս. Նշան եկեղեցին ներսից ունի 13,2 մ երկարություն, 7,70 մ լայնություն և կառուցված է տեղական ճեղքված, անմշակ, բաց մոխրագույն բազալտ քարից: Ծակատները լուծվում են վերին աստիճանի գուսպ. միակ հարդարանքը լուսամուտների տաշված եզրաքարերն են:

Եկեղեցու համակառուցի ամբողջ շեշտը դրված է թմբուկի հարդարման վրա, որը կառուցված է սրբատաշ քարից, որն էլ ու ձգված լուսամուտները, կիսակլոր

խորշերը, կամարաշարքը և վերջապես թմբուկի բազմանիստ ձևը ստեղծում են շատ տպավորիչ լույսի և ստվերի խաղ: Թմբուկի 12 նիստերից չորսը ունեն նեղ և երկար լուսամուտներ, դասավորված երկրի կողմերին համապատասխանաբար, իսկ մնացած նիստերին արված են կիսակլոր խորշեր:



Ս. Նշան եկեղեցու թմբուկը արևելքից

Նիստերի անկյուններում կան բարակ 3—4 սյուներ, որոնց վրայով անցնում է կամարաշարքը: Կամարաշարքից վեր տեղադրված է գոտեմման արձանագրություն-նոտանավորը, որը փորագրված է 12 նիստերին յուրաքանչյուր նիստում միակտոր քարի վրա:

Փառաց տաճարս Աստուածային,
Յերկրի դրախտ կենաց փայտին.
Որ է պատկեր երկնից վերին,
Եւ եռանձնեալն կայանին.
Ի ծննդնէ մարմնով Փրկչին,
Յերեք հարիւր և հազարին
Յուր և Յիսուսին սկսեալ ամին,
Կանգնեալ լանուն սբ. Նշանին.
Սատարութեամբ իւր ծառային,
Յովհաննիսի կրաւնատրին.
Եւ հարազատ եղբարց նորին,
Եւ ըստ ոգոյ որդոց բնաւին⁴:

Այս արձանագրություն-նոտանավորից պարզվում է հուշարձանի ճիշտ անունը՝ ս. Նշան, կառուցողը «սատարությամբ Հովհաննես կրոնավորի և նրա ընկերների»⁵ և կառուցման տարեթիվը՝ 1358, որը ճշտեց Ա. Մանգականյանը (Հ. Մ. Բժշկյանի մոտ հիշատակվում է 1338 թիվը)⁶:

⁴ Վ. Ա. Միքայելյան. «Դրիմի հայկական գաղութի պատմությունը», Երևան, 1964, էջ 321:

⁵ Նույն տեղում, էջ 321:

⁶ Հ. Մ. Բժշկյան, Հիշված աշխատության էջ 325:

Թմբուկը պսակվում է ցածր և պարզ եզրագիծ ունեցող քիվով: Հատակագծում եկեղեցին և գավիթը գտնվում են մի երկայնական առանցքի վրա՝ ընդգծելով այն և համակառույցին հաղորդելով մի տեսակ նպատակալացություն: Այդ բոլորին վարպետը հասել է շատ զուսպ ու պարզ ձևերով: Միանգամայն նորություն են արևելյան բաց ավանդատները և հատկապես նրանց և բեմը միացնող մուտքերը: Այս ձևը, ինչպես կարելի է տեսնել Լվովի հայկական հուշարձաններում ևս, կիրառվել է և կազմում է Ղրիմի ու Լվովի հայկական գաղութների ճարտարապետական դպրոցների յուրահատուկ և միևնույն ժամանակ կապող հանգամանքներից մեկը:

Արևելյան գմբեթաբլուրը ծածկված է որմնակարներով, սակայն երևացողը, ըստ մեզ, հին որմնակարների վերանորոգությունն է: Բեմի պատերի որոշ տեղերում ծեփի տակից երևում են հին որմնակարների հետքերը:

Գմբեթը ներսից կառուցված է մանր, կոպիտ տաշված քարերից և եղել է սկաղված: Գմբեթի փականքի խոշոր քարի վրա պահպանվել է «Աստույ գառ» բարձրաքանդակը, որի մմանը քանդակված է ման եկեղեցու արևմտյան շքամուտքի վերին մասում:

Գավիթը կառուցված է եկեղեցու արեւմտյան կողմում մույն քարից և մման կառուցողական արվեստով: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ գավիթը կառուցված է եկեղեցու կառուցումից անմիջապես հետո և մույնպես 14-րդ դարի գործ է:

Գավիթը եռանավ կառուցվածք է՝ մի փոքր ձգված արևմուտքից արևելք ուղղությամբ: Ներսի չափերն են. 10,09 մետր՝ 8,86 մետրի վրա:

Գլխավոր առանցքի ուղղությամբ գցված են երկու զույգ կամարներ, որոնք կենտրոնում հենվում են երկու պուրների վրա: Նավերը ծածկված են գլանաձև կամ, ինչպես հնում էին ասում, օրորոցաձև՝ թաղերով, որոնց գոտկող կամարները հենվում են պահուսկների վրա:

Այսպիսով, ստացվում է նոր տիպի, երկպուստանի գավիթ, առանց երդիկի: Այս տիպը լայն տարածվել է Ղրիմի հայ ճարտարապետության մեջ: Այդպես է օրինակ Թեոդոսիայի Հովհաննես Մկրտիչ եկեղեցու գավիթը:

Գավիթի հարավ-արևմտյան անկյունում տեղադրված քարաշեն աստիճաններով կանելի է բարձրանալ զանգակատունը, որը նաև հարմարեցված է եղել դիտակետի և ու-

նեցել է պաշտպանողական նշանակություն: Առհասարակ այդ կառուցվածքը թողնում է ամրոցի տպավորություն:



Գավթի հարավային ճակատը

Գավթի տանիքը երկթեք է, ծածկված է խոշոր քարե սալերով: Սալերի արանքներում հագուցված են ելունները փոխարինող, իրենց բարձրությամբ կրկնակի քարե սալերը, որոնց շնորհիվ ստեղծվում է ծածկի անջրաթափանցությունը: Տանիքների այս տիպը մույնպես սերտորեն կապված է բուն Հայաստանի հետ (Սելիմի քարավանատուն):

Գավթի արևմտյան մուտքի առաջ տարածված է ընդարձակ բակը, որի հանդիպակաց արևմտյան կողմում կառուցված է եղել սեղանատունը:

Սեղանատունը թաղակապ կառուցվածք է, ուղղանկյուն հատակագծով: Մեջտեղում ունի առանձին կանգնած պուր, որի վրա հենվում են երեք կամարները: Սեղանակի մի մասի առաստաղը գլանաձև թաղով է ծածկված, իսկ մյուս մասինը՝ խաչաձև է: Դա հավանաբար առաջացել է վերակառուցումների հետևանքով:

Սեղանատան ներսում սկիզբ են առնում ներքնահարկը տանող աստիճանները: Այդ

⁷ Հ. Մ. Բժշկեան, Հիշյալ աշխատության էջ 825:

աստիճանների հետ տեղացիները այժմ կապում են ավանդություններից հյուսված ստորերկրյա անցքի գոյությունը, որն իբր թե միացնում էր վանքը մոտակա ձորում գտնվող աղբյուրի հետ:

Սեղանատունը արևմուտքից լուսավորվում է երեք խոշոր լուսամուտներով: Ներսը պահպանվել են որմնամույթերի մնացորդներ: Հավանաբար սկզբնական ծածկը ունեցել է կառուցողական ուրիշ սխեմա, իսկ մեզ հասածն արդեն արդյունք է վերակառուցումների:

Մի փոքր դռնակ, բացված հյուսիսային պատի մեջ, տանում է հարևան սենյակը, որն ունի ուղղանկյուն հատակագիծ, մեջտեղում երկու սյուն, որոնց վրա հանգչում են թաղակիր կամարները:

Այդ սենյակի, ինչպես և սեղանատան մուտքը արևելքից է, առաջին բակից: Հյուսիսային պատի մեջ արված է բուխարին և մի կամարով եզրված անցք, որի հետևը դասավորված է ուղղանկյուն փոքրիկ փուռը:

Այդ երկու սենյակների հատակները մի մակարդակի են և 60—70 սմ ցած են բակի մակարդակից, իսկ նրանց լուսամուտները, արևմտյան կողմում շնորհիվ տեղանքի ուժեղ ցածրանալուն, հավասար են 2-րդ հարկին և քավականին դժվարամատչելի են:

Գավթի մուտքի դիմաց կա քարե աստիճաններ, որոնք տանում են միաբանության բնակարանները, որոնք ըստ Բժշկյանի վկայության 1830 թվին արդեն քանդված էին:

Այժմ նրանք նույնպես քանդված են, բայց պահպանվել են վերանորոգությունների հետքեր: Ենթադրում են, որ միաբանությունը 20-րդ դարի սկզբում ցանկանում էր վերականգնել այդ շենքը, բայց կառուցումը մնացել է անավարտ: Այժմ կանգուն մնացել

են անավարտ պատերը և քարձակ պատը՝ զամբը մետաղական հեծանների վրա:

Գավթի հարավային կողմում տեղադրված է երկրորդ փակ բակը, որի արևմտյան և հարավային պատի երկայնքով տեղադրված են միաբանության բնակելի շենքերը: Արևմտյան պատի տակ տեղադրված առաջին սենյակը ունի հետաքրքիր խաչվող, գոտկող կամարներով (ներվյուրներով) առաստաղ, իսկ հաջորդը թաղակապ է:

Վանքից ոչ հեռու, մուտքից հարավ-արևմուտք, կա մի փոքր կառուցվածք: Դա վանքի աղբյուրն է: Սառը և համեղ ջուրը նույնպես հեռավոր հիշեցնում է բուն Հայաստանի սառը ջրերը, և երևի աշխարհայած հայերը գոնե այդ ջրով են հագեցրել իրենց կարոտը հայրենիքի նկատմամբ:

Աղբյուրի շենքը կառուցված է սպիտակավուն կրաքարից: Ծակառի վրա աչքի է ընկնում պլացիկ կամարը, որի կենտրոնից ծորում է ջուրը:


Մի աղբյուր էլ եղել է վանքի ներսը, քարաշեն աստիճանների տակ, որը չի պահպանվել:


Այդ նույն տեղում պահպանվել է մի արձանագրություն՝ նվիրված վանքի վերանորոգմանը: Ըստ արձանագրության, վանքը վերանորոգվել է 1751 թ. Ադամ արքեպիսկոպոսի օրոք⁸:

Այսպիսով ս. Խաչ հուշարձանը իրենից ներկայացնում է մի ինքնատիպ համակառույց, որը, անշուշտ, կարոտ է բազմակողմանի ուսումնասիրության:

Հարուստ վիմագրական նյութը և որմնակարները կարող են շատ հետաքրքիր և գրավիչ նյութ տալ ուսումնասիրողների համար:

⁸ Հ. Մ. Բժշկեան, Հիշյալ աշխատության էջ 825:





Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

ԹԱՂԱՎԱՐԴԵՑԻ ԳՐԻԳՈՐ ՔԷ. ԴԱԴՅԱՆՑԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Առաքել Բաբախանյանը (Լեո) «Արձագանք» շաբաթաթերթի 1885 թվականի № 9-ում հրապարակած իր «Մի քանի հեռություններ» հոդվածում խոսելով ժողովրդի ծոցից դուրս եկած այն հասարակ մարդկանց մասին, որոնք սրբությամբ են պահպանում անցյալից ժառանգած հոգևոր մշակույթի մասունքները, գրում է. «դոցանից մեկն է եղել և թաղավարդեցի Գրիգոր քահանա Դադյանը, որ վախճանյալ է մի քանի ամիս սրանից առաջ Ծուշիում, թողնելով յուր Սմբատ և Վահան որդիներին հին ձեռագրերի մի հարուստ ժողովածու (մինչև 33 հատ)»:

Իր հոդվածում Լեոն հատկապես կանգ է առել այդ 33 ձեռագրերից առավել արժեքավոր 13-ի վրա և 1—13 թվահամարների ներքո տվել դրանց համառոտ նկարագրությունը, իսկ մյուսների մասին բավարարվել է արձանագրելով. «նաև 20 հատ ուրիշ գրքեր, որոնք հիշատակարան չունին, բոլորը հին, մագաղաթի վերա գրած. դոցա մեջ տեսա մի քանի հատ քերականություն»:

Արդ, ի՞նչ եղան այդ ձեռագրերը:

Քանի որ Լեոն այդ ձեռագրերը բաժանել է երկու որոշակի խմբերի, մի խումբը նկարագրել, իսկ մյուսը՝ ոչ, ուստի անդադառնա՞նք այդ խմբերից յուրաքանչյուրին առանձին-առանձին:

Ա. **Նկարագրված ձեռագրեր.**—Ինչպես ասվեց, Լեոն այդ 33 ձեռագրերից ավելի հանգամանալի նկարագրել է միայն 13-ը: Ստուգումները ցույց են տալիս, որ այդ 13

ձեռագրերից 12-ը (№№ 1, 3—13) մտել են Խաչիկ վրդ. Դադյանի հայտնի հավաքածուի մեջ և արձանագրված են Հակոբ Թոփճյանի կազմած ցուցակում, իսկ մեկը (№ 2 «Մաշտոց, գրած հայոց ՌՄԺԵ (1666) թուին Օղձաբերդ գիղի մեջ», որի ուր գտնվելը, ի միջի այլոց, մեզ հայտնի չէ, այդ ցուցակում չի արտացոլված: Այդ 12 ձեռագրերը 1903 թվականին Խաչիկ վրդ. Դադյանի հարուստ հավաքածուի կազմում մուտք են գործել Էջմիածին, իսկ այժմ գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (տե՛ս հին և նոր թվահամարների կից տախտակը):

Բ. **Չնկարագրված ձեռագրեր.**—Ըստ Լեոյի, քացի նկարագրված վերոհիշյալ 13 ձեռագրերից, եղել են նաև 20 այլ ձեռագրեր: Անտարակուսելի է, որ ինչպես նախորդները, այնպես և վերջիններս պետք է ժառանգած լինի Խաչիկ վրդ. Դադյանը՝ Գր. քհ. Դադյանցի Վահան որդին, մանավանդ, որ դրա մասին կա Լեոյի պարզորոշ վկայությունը: Հետևապես, չնկարագրված վերոհիշյալ 20 ձեռագրերը պետք է փնտրել ոչ այլ ուր, քան Թոփճյանի նկարագրած ձեռագրերի շարքում:

Փորձենք փնտրել:

ա) Ըստ Լեոյի, չնկարագրված 20 ձեռագրերի մեջ կային «մի քանի հատ քերականություն»: Ուշադրություն դարձնենք, որ քերականական ձեռագրերի քանակը եղել է ոչ թե մեկ կամ երկու, այլ՝ «մի քանի հատ», այսինքն առնվազն երեք, կամ նույնիսկ ավելի: Թոփճյանի ցուցակում այդպիսիների

թիվը հասնում է 4-ի (№№ 91, 92, 92ա, 93): Պետք է կարծել, որ այդ 4 ձեռագրերը Լեոյի հիշատակված ձեռագրերն են:

բ) Ըստ Լեոյի, չնկարագրված ձեռագրերը գրված են՝ «մագաղաթի վերա»: Եթե Լեոյի ասածը բառացի չհասկանանք, այլ՝ որ այդ ձեռագրերի մեջ մեծ թիվ են կազմել մագաղաթյա ձեռագրերը, ապա կարող ենք ասել, որ խաչիկ Դադյանի հավաքածուի մեջ եղած 12 մագաղաթյա ձեռագրերից առնչված 10-ը (№№ 3, 4, 6, 8, 11, 15, 18, 19, 25, 53) Լեոյի հիշատակված «մագաղաթի վերա գրած» ձեռագրերն են: Մագաղաթյա մյուս երկու (№№ 12, 37) ձեռագրերը բացառվում են, որովհետև առաջինը (№ 12) մտնում է նկարագրված 13 ձեռագրերի թվաքանակի մեջ (№ 7), իսկ երկրորդը (№ 37) Ծաղաթի ձեռագրերից է, որտեղից խաչիկ Դադյանն է վերցրել անձամբ: Որպես հավելյալ փաստարկ նշենք, որ մագաղաթյա այդ 10 ձեռագրերից երկուսը (№№ 6, 8) Տեր Գրիգորի այրին՝ տիրուհի Հյուրիգադ Դադյանցը 1897 թվականին, որպես աջահամբույր, նվիրել է Խրիմյան Հայրիկին: Հավատացյալ տիրուհին ում ձեռագրերը պիտի նվիրեր, եթե ոչ իր հանգուցյալ ամուսնու:

գ) խաչիկ Դադյանի հավաքածուի ձեռագրերից երկուսի վրա (№№ 26, 78) եղած հիշատակագրություններն ու կնքադրոշմները հուշում են, որ այդ ձեռագրերը սկսած 1793 թվականից մինչև 1885 թվականը, այսինքն մինչև Գր. քհ. Դադյանցի մահը, եղել են Ծուշիում: Բացառված չէ, որ ծրնունդների վերաբերյալ եղած գրառումներն էլ կատարված լինեն Տեր Գրիգորի ձեռքով: Հետևապես կարելի է ենթադրել, որ այդ երկու ձեռագրերը նույնպես Լեոյի հիշատակված 20 ձեռագրերից լինեն:

դ) 1897 թվականին խաչիկ վրդ. Դադյանը 4 ձեռագիր է նվիրաբերել, մեկը (№ 7) անձամբ Խրիմյան Հայրիկին, իսկ 3-ը՝ (№№ 60, 80, 81)՝ Մայր Աթոռի Մատենադարանին: Թեև առանձին փաստարկներ չկան, բայց կարծում ենք, որ դրանք ևս Լեոյի հիշատակված ձեռագրերից պետք է լինեն: Այստեղ ուշադրության է արժանի այն

պարագան, որ ինչպես տիրուհի Հյուրիգադի, այնպես և խաչիկ Դադյանի նվիրատվությունները կատարված են միաժամանակ:

Ամփոփենք:

Ելնելով շարադրվածից, որոշ վերապահությամբ, կարող ենք ասել, որ Լեոյի հիշատակված բայց չնկարագրված 20 ձեռագրերը (որոնք հետ այսու կնշվեն աստղանիշ ունեցող 14—33 թվահամարներով՝ որպես նախորդ 1—13 թվահամարների շարունակություն) ամբողջությամբ մտել են խաչիկ Դադյանի հավաքածուի մեջ և Հակոբ Թոփճյանի ցուցակում արձանագրված են 3, 4, 6, 7, 8, 11, 15, 18, 19, 25, 26, 53, 60, 78, 80, 81, 91, 92, 92ա, 93 թվահամարների տակ:

Նշված ձեռագրերից. 6-ը (№№ 6, 7, 8, 60, 80, 81) Մատենադարան են մուտք գործել 1897 թվականին և մտել «Գևորգյան» կոչվող հավաքածուի մեջ, իսկ մնացած 14-ը (№№ 3, 4, 11, 15, 18, 19, 25, 26, 53, 78, 91, 92, 92ա, 93)՝ 1903 և այժմ պահվում են հետևյալ թվահամարների ներքո (տե՛ս հին ու նոր թվահամարների կից տախտակը):


Համեմատական տախտակ

Թաղավարդեցի Գրիգոր քհ. Դադյանցի ձեռագրերի հին և նոր թվահամարների

Հին	Թոփճյան	Գևորգյան	Մատենադարան	Հին	Թոփճյան	Գևորգյան	Մատենադարան
1	27	—	3668	18	—	967	3259
2	—	—	—	19	11	—	3662
3	32	—	3872	20	15	—	3663
4	31	—	3671	21	18	—	3664
5	23	—	3871	22	19	—	4304
6	54	—	3876	23	25	—	3666
7	12	—	3943	24	26	—	3667
8	70	—	3678	25	53	—	3952
9	77	—	3681	26	60	1029	3159
10	52	—	4119	27	78	—	3965
11	62	—	4120	28	80	615	2559
12	63ա	—	3957	29	81	633	2561
13	47	—	3874	30	91	—	3883
14	3	—	4321	31	92	—	3451
15	4	—	3660	32	92ա	—	3967
16	6	362	3784	33	93	—	3685
17	7	897	2582				

* Հակոբ Թոփճյան, Ցուցակ ձեռագրաց Դադեան խաչիկ վարդապետի, մասն Ա, Վաղարշապատ, 1898:





Գ. Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻՆ ՃԱՌԱԳԻՐ

11-րդ դարի ականավոր մատենագիր Արիստակես Լաստիվերցին իր Աշտոտոցի Պատմությունից և «Մեկնություն ընթերցումաց»-ից զատ հորինել է նաև գեղեցիկ ճառեր: Սակայն այդ գործերի մի մասը ցրված լինելով զանազան ժառանգություններում, ժամանակի ընթացքում կորել է, իսկ մի մասն էլ վերագրվել է 18—19-րդ դարերի ինչ-որ Արիստակես վարդապետի, իսկ երբեմն էլ Աշտոցի դարաշրջանը հիշատակելու: Այդպես է պատահել նաև «Ինոր կիրակեն» ճառի հետ: Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ այն գրել է Արիստակես Լաստիվերցին: Բանասիրական այդ ապացույցը մենք տպագրել ենք Երևանի Խ. Աբովյանի անվ. հայկական մանկավարժական ինստիտուտի «Գիտական աշխատություններ» (Հայ գրականության բաժին) ժողովածուում (Երևան, 1968 թ., № 1, էջ 377—387):

«Ինոր կիրակեն» ճառը Լաստիվերցին գրել է Պատմությունից առաջ, «Գիրք սաղմոսաց»-ի և հատկապես Գր. Աստվածաբանի (Նազիազանցի, 328—389) համանուն ճառի խորը ազդեցությամբ: Լաստիվերցու

այս ստեղծագործությունը պահվում է Մաշտոցի անվ. մատենադարանի հինգ ժառանգություններում (18—19-րդ դարեր), Երուսաղեմի և Հակոբյանց վանքի № 413 Տոնապատճառում (14-րդ դար) և Վենետիկի Մխիթարյանների 13—14-րդ դարերի մի ժառանգություն (№ 236):

Համեմատական բնագիրը կազմելու համար մենք օգտվել ենք Մաշտոցի անվան մատենադարանի հինգ ձեռագրերից և Երուսաղեմի և Հակոբյանց վանքի Աշտոցի Տոնապատճառից: Վերջինս մի շարք այլ ձեռագրերի մանրաթափանցների հետ Երուսաղեմից ստացվել է ՀՍՍՀ Միևհատրների խորհրդին կից Հայ եկեղեցու գործերի կոմիտեի միջոցով և այժմ պահվում է Մաշտոցի անվ. մատենադարանում:

Բնագիրը, որն ունի ճանաչողական կարեւոր արժանիքներ, տպագրվում է առաջին անգամ:

Օգտագործված ձեռագրեր

Ա.	413	Դ.	2551
Բ.	2715	Ե.	6681
Գ.	8032	Զ.	8914

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ Ի ՆՈՐ ԿԻՐԱԿԷՆ

Նոր է տօնս և չքնաղ՝ որք ի սմս եմ
խորհուրդք: Նոր՝ վասն զի նորոյ արա-
րածոց է սկիզբ և զանցեալն հնացու-
ցանէ և ինքն հանդերձեալ իրաց լինի
պատճառ: Նոր կոչի և գարուն, վասն զի
զձմեռնային ժամանակն հատանէ և նո-
րոգութեան արարածոց լինի ասպնջա-
կան, յորում և ծառք ի մեռեալ կերպա-
րանաց վերստին արծարծին նորոգու-
թեամբ ուղեշիցն և դալարութեամբ տե-
րեվոցն: Նոր կոչի, վասն զի զձմեռնային
անգարդութեան քօղն մերկանայ և զգե-
նու գիսառս և զմեծ վայելչութիւն՝ բու-
սուցանելով լինքեմէ գրոյս դալարոյ
զգանազանս: Նոր եմ և ծաղիկք բազ-
մագունակք կերպարանաց տեպեամբ՝
որք այն ինչ ի յերկրի բուսեալք և վաղ-
վաղակի ի ծայրս իրեանց ցուցանեն
զգանազան գոյնն ներկուածոց վառ ի
վառ և բոցատեսիլ հրաշիւք շքեղացեալ
և զարդարեալ ազգի ազգի հոտովք և
համօք և ճաշակօք, որովք ծիծաղի եր-
կիր և մեծաւ ուրախութեամբ ցուցանէ
զո՛ւմս իւր իբրև գնոր հարսն ելեալ յա-
ռագատէ: Նոր եմ և պտուղք ծառոց,
որք ի գագաթունս ոստոց և տերևոց նախ
ծաղկեալ փթթին, ապա հանգոյցս կա-

պեալ վասն մատաղութեան ընդ տերե-
վովն հովանան, զի մեղմախառն օդովն
սնանիցին անվնաս տապոյ արեգական
և յորժամ գայցեն ի կատարումն, ար-
տաքս ելանեն ի հովանոյն և ջերմու-
թեամբն արեգական եփեալ հասանեն և
պատրաստին ամենիշխան Առաջնորդին
իրեանց խորտիկք յօգնագունակք և
ճաշակք համեղագոյնք բաժանեալք յայ-
լագունակ համս և ի հոտս: Նոր է և
երկրագործաց մշակութեան արուեստ
սերմանեաց ցանումն և եզանց ընդ լծով
մտանելն, որք բազմախմուտ արուեստիւք
նախ զնոսա վարժեալ սովորեցուցանեն,
զի մի՛ ամեհաբար նահանջեալ անկանի-
ցին և խալիսն առնիցեն մշակութիւնն,
և ապա մեծաւ վստահութեամբ արօր
կառուցանեն և ընդ լծով ածեալ զնոսա,
պատառեն զքաղցր ակօսն լցեալ սեր-
մամբ, առ որս և աղօթիւք մշակելովն
զպտղատուն յօգնականութիւն կոչեն:
Նոր եմ և առ նմին բոյսք սերմանց ցո-
րեւոյն, սքանչելապէս ի միոջէ ցորե-
նահատէ երկնաջրովք ելանեն ծնկակապ
հանգուցիւք և ստեղծանձն աճմամբ, որք
ի կատար ընթացիցն ցուցանեն զհաւ-
կիցն դիրս երկպատում սենեկօք շրջա-

Ա Արքատագէտ Զ Արիստակէսի
Դ Քարոզ Նոր կիրակէի: Ասացեալ յԱրիս-
տակէս վարդապետէ
ԱԲ կիրակին
Ա որ փխ. որք
Ա արարածո
ԱԳԻ սկիզբն
Բ զձմեռնային
Ա ասպնջական
Զ ծառքն,
ԲԳԻԵԶ չիք վերստին
Գ ուղեշիցն
Ա տերևոյն
Բ զձմեռնային Ե ձմեռնային
ԳԻ վայելչութիւնս
Ա գրոյս ԳԻ գրոյսն Բ դալարոյ
ԳԻԵ զգանազան
Ա որքան (ինչ)
Ա զանազան ԲԳԻԶ զգանազանագոյնս,
ԲԳԻԵԶ գոյնս Ա երկուածոց փխ. ներկուա-
ծոց
Ա հոտիւք ԳԻԵԶ հոտօք Ա չիք և (համաք)
Զ յերկիր
Գ իբր
ԱԲԵԶ տերևոցն
Ա ծաղկել Զ փթին փխ. փթին Ա հանկոյցս
ԳԻ հանգոյն

Զ մատաղութեանն
Բ սնանիցեն Ա արեգականն
Ա ի հովանոյն Զ ի հուանոյն
ԲԳԻԵԶ ջերմութեամբ
Ա արեգականն
ԲԳԻԵԶ հասանին
ԱԲԳԻԶ ամենիշխան
Ե յօգնագունակ փխ. յօգնագունակք
Ա յայլագունակք
Զ չիք համս
Ա չիք և (ի հոտս) Զ ի հոտս
ԲԳԻԵԶ մշակութիւնք Ա արուեստք
ԲԳԻԵԶ սերմանց
Ա մտանել
ԲԳԻԶ վարժել Ա սովորեցուցանէ
Ե ամեհաբար Ա նահանջել
ԱԲԵ մշակութեան ԳԻԶ մշակութիւն Զ մշա-
կութեանն
ԱԳԻԵ օրօր (Զ առ օր) փխ. արօր
Ե պատունն փխ. պատառն Զ պատառին
ԱԲԳԻԵԶ (նոր) է
ԲԵԶ ցորեւոյն
Զ զսքանչելապէս
Բ ցորենահատ Զ ցորենահատ
ԲԳԻԵԶ երկնաջրօք ԳԻ ծնկաց
Ա հանկուցիւք Զ զոնդանձն աջմամբ, որ
Ա բազում ԳԻ երկպազում Ե երկպաղում

պատեալ, յորս հանդարտապէս ծնանցին ծնունդը սերմանեաց ըստ իրաքանչիւր ազգաց ամրացեալ սրեալ միգակօք, որովք պահպանին ի թոշնական որսորդականաց աներկիւղ հասանելով ի կատարումն իրեանց: Նոր են և ծնունդը խաշանց և անդէից, որք ի մատաղ հասակի ի ձմեռնային որջիցն իբրև յարգելանէ ազատեալք, խաղան ընդ միմեանս և խնդան՝ շրջելով համարձակ ի հովիտս և ի դալարաբեր վայրս: Եւ նոր է ծնողաց նոցա մարմնաբար արարութիւն և վերստին նորոգութիւն իբրև ի մեռելութենէ ի կենդանութիւն, որոց հովիւք և անդէտորք առեալ ի լերինս ելանեն և ի դալաբեր տեղիս արածեն և առ քաղցրահամ աղբերակամբ մակաղին, գիշերապահ արթնութեամբ առանց դժբանաց պահեն զնոսա, որպէս զի առատապէս մշակեացեն ի նոցանէ զբոխտումն կաթին պատրաստելով կերակուր գողտրիկ տերանց իրեանց: Նոր է թոշնոցն վաստակ և աշխատութիւն, որք ի ծայր ծառոց և ի քարանձաւս վիմաց ամրացեալք, բոյն կառուցանեն, յորս սնուցանեն զորդիս իրեանց բազում տառապանք և իբրև քնար ինչ բազմահնչօղ

ձայնիւ եղանակեն զերգս իրեանց, որովք հեշտանան անցաւորք ճանապարհաց: Նոր են մեղուացն գործք և հրաշք, քանզի այժմ իբրև յարգելանոցէ արձակեալք, ի վեր թոշին և զթևս օդոյն տան և երթեալք ի հովիտս ծաղկանոցաց զառ ի նոցանէ զօգուտն իբրև զհարկս պահանջեն և կապեալ զբեռինս ի կրկնուած ոտիցն՝ դառնան ի խորշս իրեանց և անհետազօտելի իմաստիւք մշակեն ըզգործս իրեանց՝ պտուղ քաղոր և անուշ, յորմէ ախորժելով կերակրին թագաւորք և ռամիկք: Նոր է և ծովու ճանապարհորդութեան ընթացք, քանզի ի ձմեռնային մրրկայոյզ վրդովմանց խաղաղացեալ հանդարտանայ և զնաւորդսն խնդամտութեամբ յուղարկէ, որոց երաշխատոր լինի դլփին՝ շուրջ խաղալով և փքալով, որք և ի նոսա հայելով համարձակապէս զկայմն ի վեր կանգնելով և զթևս առագաստին պարզելով քաղցրաշունչ օդոյն տան, յորմէ լցեալ, արագամէտ ընթացիւք իբրև զթոշնոն հերձանելով զմկանունս ջուրցն, հասանէ ի յառաջադրեալ տեղին: Նոր է և երկրի մաքրագոյն երևոյթ ի ձիւնաբեր ամպոց յատակեալ, և արեգակն՝ ի բարձրանիստ կամարն հասեալ, և լուսինն՝ ի բովանդակութիւն և աստեղաց պարք և ժամոց բարեկարգութիւնք: Եւ եթէ այսոքիկ ա-

ԲԵԶ սերմանեացն

Ա ամրացեալք ԳՂ ամրաց է Ա միգակօք

Զ թոշնական

Ա որսորդականացն

Ա աներկիւղ

Ա ի ձմեռնային ԲԶ չիք որջիցն Ե որջից

Ե արգելանէ

Ա ազատել Ա (շրջելով) ընդ միմեանս

Ե (շրջելով) ի Ե չիք ի (հովիտս)

Ե չիք ի (դալարաբեր) Զ դալարապեր

Ա մարմնապարարութիւն փխ. մարմնաբեր արարութիւն Զ արարութեան

Ա վերջստին

Ա յորոց

Բ անդէտորք Ե անդէ որք Զ անդէտորք ԳՂ չիք ի (լերինս)

Ե արածին ԲԳՂԶ չիք և

Ա աղբիւրակամբ

Ե գերահրաշ փխ. գիշերապահ

Ա դրժանաց

ԵԶ մշակեսցին

Ա կաթին

ԲԳՂԵԶ չիք կերակուր

Ա գողարիկ ԲԳՂԵ գողութիւք

Ե տերանց Ե թոշնոց

Ա աշխատամիտութիւն

Ա ամրացեալ

Զ բուն, յօրս

Ա լեղանակեն

Զ ճանապարհացն

ԱԲԳՂԵԶ Է փխ. են Զ գործ

Ա արձակեալ

Ե չիք և (զթևս) Դ օդոցն

Ա երթեալք Զ ի հովիտս Ե ծաղկանոցաց

Ա հարկ

Ա բեռինս Ա կրկնուածս Զ կրկնված

Ե մշակին զգործ

Ա անաւրար (ԲԵ անաւոր Զ անար օրր) փխ. անուշ Դ անուշ

Ա աղքատք փխ. թագաւորք

ԱԳՂԵ խաղացեալ փխ. խաղաղացեալ

Ե հանաւարտանայ

Ա յղարկէ

ԲԵԶ դլփին

Ա կանկնելով

Զ հերձանելով

Ա նոր իմն է փխ. նոր է

ԱԲԳԵԶ երևոյթ

Ա յատակել

Ա հառանել

Ա ի բաւանդակութիւն Զ ի բովանդակութիւն

Ա բարեկարգութիւն

Բ այսոքիկ Դ այսոքիք

մենքեան նորք ապին վասն գարնանաբեր ժամանակին, որոյ մերձաւոր տօնս է, ո՞րչափ ևս առաւել նոր է եկեղեցւոյ խորհուրդ և վայելչացեալ հոգևոր պաշտօնութեամբ, քանզի առաւ, որոց փոքր ի շատէ յիշումն արարաբ, ամենայն ամի չորիք եղանակօք գիտփոխումն առնուն, քանզի առ գարնայնովն ծննդագործին և յամարայնի աճեն և ի կատարելութիւն գան և յաշմանի ծերանան և ի ձմեռնային ժամանակուն մեռանին և ի գարունն վերստին նորոգին, որով և յարութեան մերոյ նկարի խորհուրդ, որպէս գրէ երիցս երանեալ Հայրապետն մեր սուրբն Գրիգոր: Իսկ եկեղեցի առանց հնամալոյ ունի զնորոգութիւն, քանզի չի՞ք ի սմա յեղեղմունք ժամուց և փոփոխմունք ժամանակաց, չի՞ք առ սմա հնամալ կամ ծերանալ, այլ ի ծերութենէ ի նորոգութիւն գալ, չի՞ք առ քարձրութիւնք և խոնարհութիւնք, քանզի Քրիստոսի կատարեցան և դադարեցան և այլ ո՛չ ևս յաւելուն, որպէս և ինքն իսկ ասաց, թէ «Կատարեալ են ժամանակք և հասեալ է արքայութիւնն Աստուծոյ»: Քանզի ի նախաստեղծէն յերկրորդ հայր աշխարհաց սահմանեցաւ՝ ժամանակն առաջին, և երկրորդն ի մարգարէիցն պետն յօրէնադիրն Մովսէս, իսկ ի Քրիստոս կատարեցաւ: Այսպէս և ընդ աշակերտսն ասէր, թէ «Ահա ասիկ ելանեմք

յերուսաղէմ և կատարեցին ամենայն գրեալքն մարգարէիք վասն իմ»*: Արդ, ել և կատարեաց զկանխասացիկ քանն ծառայից իւրոց, որ վասն խաչի և չարչարանաց նորա, մահու և յարութեան սահմանեալ էին: Եւ այսօր նորոյ արարածոցս սկիզբն առնէ, որոյ ո՛չ գոյ փոփոխումն, վասն այնորիկ Նոր կիրակէ կոչի: Զոր օրինակ առաջին օրինաւորաց քահանայութիւնն փոփոխելով ի միմեանց մարդ ի մարդոյ առնոյր «վասն մահուան արգել լինելոյն»*, — որպէս գրէ Առաւել: Իսկ յորժամ եկն Քրիստոս և սահմանեցան ի մմա օրինականքն, կայ և պաշտէ առանց հնամալոյ միշտ և հանապազ՝ անցեալ ընդ երկինս և նստեալ ընդ աջմէ հօր: Քանզի ո՛չ մեռանի և մահ մմա ո՛չ ևս տիրէ, վասն այնորիկ երկրորդի ո՛չ կարօտամայ: Նոյնպէս և օրս այս նորոյ ժամանակի է, քանզի ո՛չ գոյ այլ ժամանակ, որ զսա հնացուցանէ, վասն այնորիկ կոչի նոր, յաղագս որոյ և առաջին կիրակէ, և ուրեքեակ գոյ, որ ցուցանէ եօթն ատուրք: Ի սմանէ սկսանելով զնոր արարչութիւնս նոյն թուովք յանգեալ, յորում ծնան և կենցաղավար կենացս ընթացք նովիմք թուովք չարեալ, իսկ սովա հանդերձեալ առեանն ցուցանի մեզ առաջին մի և անքակտելի գոյ: Եւ զի այսոքիկ այսպէս լո՛ւր Սոդոմոնի, որ ասէ. «Բաժին տալ ո՛չ մի-

Ա որո Զ որով
Ա եկեղեցոյ
Ե չիք խորհուրդ
Ա գորս փխ. որոց
Ա յեղանակաւք Ա փոփոխումն
ԲԳԴԵ գարնայնովքն Զ գարնայնովքն ԲԶ
ծննդագործեն
Բ ի ձմեռային Զ ի ձմեռային
ԲԳԴԵԶ ժամանակս
Ա վերջստին ԲԳԴԶ որովք
Ա մերո ԲԳԴԵԶ նկատի փխ. նկարի
ԱԳԴԵ երանելի փխ. երիցս երանեալ
Ա չիք մեր սուրբն ԳԴԵ չիք սուրբն
ԱԲԵԶ չի՞ք ի սմա փխ. չի՞ք առ սմա
ԲԶ յեղաշրջմունք փխ. յեղեղմունք
Ա դադարեցին Ե և այլևս ոչ
Դ յաւելեան Ե յաւելումն
ԲԳԴ արքայութիւն Ե յարքայութիւնն
Ա (երկրորդն ի) նմանէ ի հայրն արդարոց և
երրորդն (ի մարգարէից պետն) և արինա-
դիրն
Զ պետն
Ա (այսպէս) որպէս
ԲԳԴԵԶ չիք թէ
* Մարկ. Ա. 15

Ա եղև փխ. ել և ԲԳԴԶ և ԲԳԴԵԶ զկանխա-
սիկ ԱԲԵԶ քանս
ԲԶ նոր
Ա արարածո
ԱԲ կիրակէ ԳԴ կիրակի
Բ քահանայութիւն
Ա մահուն
Ա գրեալ է առաքեալ
Բ օրինակնքն ԳԴ օրինակն փխ. օրինա-
կանքն Զ գալ փխ. կայ
Ա և անցանելո (միշտ)
Ե երկրորդ փխ. երկրորդի
Ա (այս) նոր Ա ար (քանզի)
ԱԵ կիրակէ Ա ուրեքեակ (գոյ) ԲԵ ուրեքեակ
ԳԴ ուրեքեակ Զ չիք գոյ Ա (ի) նմանէ
ԱԳԴ սկսեցելովք ԲԵԶ սկսեցելօք ԳԴԵ արար-
չութիւն ԲԳԴԵ թուօք Ա յանկեալ
ԲԶ կենցաղակաւացս ԳԴԵ կենցաղաւոր կե-
նացս (Դ կենանցս)
ԲԵԶ նովիմք թուօք
Ե առաջի ԲԵԶ անքանակելի փխ. անքակտե-
լի ԳԴ անքակելի
Ա Սոդոմոնի (լուսանցքում) ԲԵԶ Սոդոմոնի
ԳԴ ժողովող 11.2 (լուսանցքում)
* Ղուկ. ԺԸ. 31
** Երբ. Է. 23

այն եօթանց, այլ և ութից»*: Արդ, զոր օրինակ առաւօտն զգիշերն հատանէ և ինքն արեգական կարապետ լինի և գիշերին ճրագ պիտոյ է: Իսկ յառաւօտուն հաւախօսի լինելով զգաստութեան միջնորդ, յորմէ իբրև խթանաւ ընդոստոցեալ զարթնուն մարդիկ և յիրաքանչիւր գործս յառնեն: Եւ առաւօտն թէպէտ յառաջ քան զծագումն արևուն է, սակայն յաւոր համարի հաշուին մարդիկ: Այսպէս իմա՛ ինձ և զառաջին ժամանակն կոապաշտութեան խաւարն աղջամղջեալ, յորում և մարգարէքն իսկ գիշեր անուանէին, որպէս Յոբ ասէր. «Գիշերք ցաւագինք տուան ինձ»**: Եւ Դաւիթ ասէ. «Ի մէջ գիշերի յառնէի»*** և դարձեալ. «Ասացի խաւար ուրեմն արդեօք ծածկեաց զիս»**** և «Գիշերի սատակեացի մովաքացին»*****: Եւ այլ ևս բազում ինչ գտանի ասացեալ ի մարգարէիցն: Արդ, ի յայնմ ժամանակի զօրեմն իբրև զճրագ ետ Աստուած, որպէս ասէր Դաւիթ «Ծրագ եմ բանք քո ոտից իմոց»***** և «Յայտնութիւն բանից քոց լուսաւոր և իմաստուն առնէ զողայս»*****: Իսկ ի գալ յախտեանից արդարութեանն, Յովհաննէս իբրև առաւօտու հաւախօսուն եղեալ ի

զգաստութիւն յարուցանէր զմարդիկ ասելովն. «Ես՝ ձայն բարբառոյ յանապատի. պատրաստ արարէք զճանապարհ»*: Արդ՝ սա զկոապաշտութեան գիշերն եհատ և առաւօտ խաղաղութեան ծագեաց, զկնի որոյ լոյսն թագաւորեաց, որ սպառսպտո զխաւարն հալածեաց և արար միջօրեայ փրկութիւն արարածոց մեծամեծ նշանօք և արուեստիւք, յոր հայեցեալ յօրհնութիւն ցփրրկեալսն հրաւիրէ ասելով. «Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր»**, զի սքանչելիս արար, զի եցոյց զփրկութիւն իւր ի ձեռն չարչարանաց խաչին և յայտնեաց զարդարութիւն իւր, զի եհան ի լոյս զստուերս մահու և դատապարտեաց զմեղս մարմնով իւրով և արդարացոյց զմեզ արեամբն իւրով: Արդ՝ վասն այսմ ամենայնի կոչի օրս այս նոր. զի ըստ Դուկայ ազգաբանութեանն յԱղամայ մինչև ի Քրիստոս թուեալ ազգահամար, յորս յաւոր մերոյ փրկութեան նկարեցաւ խորհուրդ, զնոյն թիւ գտանեմք և աստ յառաջաւորաց պահոց մտին մինչև յօրս այս կատարեալ, վասն այնորիկ նորոյ արարածոցս սկիզբն ասի գոյ և կիրակէ, բանզի տեառն նոյրեալ է՝ բարութք է և

ԱԲԳԴԶ ութիցն

Ա (ինքն) լուսոյ արեգականն Զ կարապետ

ԲԵԶ յառաւօտին ԳԻ յառաւօտին

Ա հաւախօսի Զ հաւախօսին

Ա զգաստութեան միջնորդ (վերջինս՝ լուսանցքում)

Զ (իբրև) և Ե խթանալ Ա ընդոստել

Բ մարդիկք

Դ առաւօտն Ե յառաւօտն

ԲԳԴԵԶ հաշուն

Ա ինձ իմա՛

Ա Յովք ԳԻ յօսաբեր փխ. Յոբ ասէր Ե յօր

ԲԶ գիշեր

Ե ցաւագին

Ա (յառնէի) առաւօտ առնել առ քեզ աստ-

ուած Ե առնէի փխ. յառնէի

Ա չիք ծածկեաց

ԲԶ սատակեցի

ԳԻ մովաքացի Զ մովաքացին

ԳԴԵ ի մարգարէից ԳԻ ի յայն փխ. ի յայնմ

Ա Դաւիթ ասէր

ԱԲԳԴ Յովհաննէս Ե Յօհաննէս

Ա առաւօտոյ ԳԻ առաւօտու Ե յառաւօտու

* Ժող. ԺԱ 2

** Յոբ Է 8

*** Սաղմ. ԾԺԸ 62

**** Սաղմ. ԾԼԸ 11

***** Եսայ. ԺԵ 1

***** Սաղմ. ԾԺԸ 105

***** Սաղմ. ԾԺԸ 130

Ա ի սգաստութիւն

Ա բարբառո Ե բարբառոյ

Ա զկոապաշտութեանն

Ե Եհատ ԳԻ առաւօտ

Ե սպառ սպառու փխ. սպառսպտո

ԲԳԴԵԶ չիք արար

ԲԵԶ արար (արարածոց) Ե արածոց փխ. ա-

րարածոց

ԲԵԶ նշանիւք

Ա յօրհնութիւնն

Ե յօհնութիւն ԱԲԳԴԶ ի (նոր)

Զ զսքանչելիս

Ա (իւր) յախտեանից

Ե Եհան

Ա զստուերս փխ. զստուերս Ե զստուերս

ԳԻ ի մարմնի փխ. մարմնով

ԳԴ չիք և արդարացոյց զմեզ արեամբն իւրով

Ա չիք այսմ

Ա Դուկա ԲԳԴԵ ազգաբանութեան Ա յԱղամա

Ա յորոց Ա փրկութեանն

Ա գտանեմ

Ա մտն

Զ վասն այսորիկ

Ա սա (նորոյ) արարածոյ Ե արարածս

ԱԲԵԶ կիրակէ

Ե բարութք

* Յովն. Ա 28

** Յուդիթ ԺԶ 15

այս: Զոր օրինակ յաշխարհականութենէն խոնարհ ամենայն իշխանութեանցն յօրինին կարգք նորին հրամանաւ. այսպէս և օրս նորոյ արարածոցս սկիզբն ասի գոյ և կիրակէ, որ է տէրունի օր իբրև յաշխարհէ ի սմանէ շառաջ կարգաւորին ամենայն տարևորական ժամանակացն ընթացք, և սա անծերանալի գոյով, միշտ նոյնութեամբ պատուեալ տէրունի, որ է պատկեր և կերպարան հանդերձելոյ ատենին վասն նոյնութեան, վասն որոյ և նաակատիս հրամայէ առնել, որ է ուրախանալ հոգևոր խնորութեամբ, որպէս սաղմոսերգուն թելադիր լինի ասելով. «Արարէ՛ք տօնս ուրախութեան կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ»*, քանզի հաւատացելոց տեղի ուրախութեան ոչ այլ գոյ, բայց եթէ յեկեղեցոց, որ տէրունական արձանն հաւտաւեալ կայ, որ զմահ կենարարին քարոզէ, քանզի թագաւորական ասպարիզին ամենայն զօրքն նորա անդր ժողովին, զի ուրախակից նմա լինիցին: Նոյնպէս և աստ ի տէրունական ասպարիզին ժողովիմք յեկեղեցիս, յորում աթոռ փառաց քազմեալ կայ, և ուրախ է միշտ յարարածս իւր, զոր արար ի մէջ երկրի: Ուրախացուք և մեք, քանզի թէ նա ի փրկութեան մեր՝ զոր փրկեաց ուրախ է,

Ա իա ակն Հոյսենէն ԲԳ իա ական Հուէն
Ե ի Զական չիք Հուէն (Վիս. յաշխարհակա-
նութենէն) ԲԶ յօրինեն Ե յօրինի

Ա. արարածոյս

Բ գալ

ԱԲԵԶ կիրակէ

ԲԶ չիք իբրև ԱԲ (իբրև) իաէ ԳԴ իա Ե ի
տարեկանէ (Վիս. յաշխարհէ)

Ա ժամանակաց ընթացքն

ԲԳԴԶ նոյնութեան

ԳԴ չիք է

Ա յատենին

ԱԲԶ չիք և

Ա. ուրախանան

Ա. տան

Ա չիք գոյ Ա. թէ Վիս. եթէ

Ա. յեկեղեցոյ

Բ տէրունական Զ արձան

Ա. (քանզի) որպէս

Ա. ասպարիզին Վիս. ասպարիզին

Ե զօրք

Ա. ասպարիզին

ԳԴ յեկեղեցին Ա. ա (աթոռ) ԲԳԴԶ չիք ա

Ա. կա

ԳԴԶ չիք արար

ԳԴԵ ի փրկութիւն

* Սաղմ. ԺԺԷ. 27

քանի՞ ևս պա՛րտ է մեզ ուրախ լինել վասն մեր: Զի թէ երկնաւոր զօրութիւնքն ի գիտ միոյ մեղաւորի ուրախ լինին, ո՞ր այսքան քազմութիւն փրկելոցս է, քանի՞ ևս պա՛րտ է մեզ վասն մեր ուրախ լինել: Եթէ յԵգիպտոսէ և ի Բաբելոնէ փրկեալքն զմիմեանս յորդորէին և օրհնութիւն նոր երգէին Աստուծոյ ի Փարաւոնէ և ի դժոխաց գերծեալքն ո՞րչափ ևս մեք: Արդ՝ ասացուք և մեք «Օրհնեցէ՛ք զտէր յօրհնութիւն ի նոր»: Բայց նոր օրհնութիւն յորժամ յետ, զնոր կենացս իմա՛, որ յարդարութենէ և ի կատարեալ վարուց ընծայի, զի եթէ մեղք հնացուցանեն և ապականեն, յա՛յտ է, թէ արդարութիւն անարատս առնէ և նորս: Արդ՝ ի հաճոյական վարուց պա՛րտ է օրհնել զԱստուծո՞, քանզի չկայէ՞լ ի բերանոյ մեղաւորի գովութիւն Աստուծոյ, որպէս գիրք ասեն, քանզի ի խոժադոժմն չառին յանձն գերեալքն ի Բաբելոն գերգան Սիովնի երգել, ո՞րչափ ևս առաւել ի բարբարոսական յոգոյց չէ օրէն: Արդ՝ ասելովն նոր՝ զնոր կենացն նշանակեաց, քանզի ամենայն ինչ նորոգեցաւ Քրիստոսի վերստին, զի հինն էանց և եղև ամենայն ինչ նոր: Նոր է և եկեղեցոյ խորհուրդ և զայս յԱռաքելոյն ուսանիմք. «Յայտնեցի արդ իշխանութեանց և պետութեանց, որք յերկինս են, քազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ՝ ի ձեռն եկեղեցոյ»* և դարձեալ՝ «Խորհուրդն ամրածածուկ, որ ան-

Ե զօրութիւնք

Ե փրկելոյ

Զ քանզի Վիս. քանի ԲԳԴԵԶ չիք ևս

ԳԴ լինիլ

Զ ի Բաբելոնէ

ԳԴ ի փարաւոնէ Զ ի փառաւոնէ

ԲԳԴԵԶ (ի փարաւոնէ) գերծեալքն (Զ ծեր-
ծեալքն Բ գերծեալք) և՛ ի դժոխաց

Ա. իմայ Ա. ընծայի

ԲԳԴԵԶ թէ Վիս. եթէ

Ա. հաճական

ԳԴ ասեն գիրք

Ա. (քանզի) թէ առ չիք ի

ԳԴ ի խոժադոժմն Ե Բաբելոն Զ Բաբելոն

ԲԳԴԵԶ Սիովնի

նշանակեացն

Ա. վերջստին

Զ եկեղեցոյ

Ա. յառաքելոյ ԲԶ յառաքելոյն Դ յառաքելոյ

Զ յայտնեցին

Ա. որ Զ երկիւն (են) ԳԴ քազմապատիկս

Բ իմաստութիւն

Ա. եկեղեցւոյ

* Եղիս. Գ. 10

յայտ էր յախտեանցն և ազգաց, այժմ յայտնեցաւ արքոց իրոց»*: Նոր է և եկեղեցւոյ պատիւ և զայս դարձեալ Առաքնայն ուսուցանէ. «Ընում, ասէ, զպակասութիւն չարչարանացն Քրիստոսի և մարմնի իմում վասն մարմնոյ նորա, որ է եկեղեցի»*: Նոր է և եկեղեցւոյ պաշտօնն և զայս Քրիստոս յայտ արար ասելովն. «Շշմարիտ երկրպագութ, ասէ, յորժամ գան և երկիր պագանիցեն Հօր՝ հոգւով և ճշմարտութեամբ***», քանզի Հայրն այնպիսի երկրպագութ իւր խրնդութիւն: Նոր է և եկեղեցւոյ հոգևոր ծնունդ և վերստին, և զայս յառաջագոյն տեսեալ Մարգարէն՝ զարմանայր ասելով. «Ո՛վ ետես և կամ ո՛վ լուսաւ այնպիսի ինչ. եթէ երկնեաց երկիր, և ծնաւ ի միում ատուր և ի միում ժամու ազգ մի ողջոյն բազում»****: Նոր է և յեկեղեցւոյ արքոյ սեղանոյն խորհուրդ և փառք, զի ոչ ևս ի ծայրս եղջերացն զարիւն նոխազացն ունի, այլ բովանդակ ամենայնի ներկեալ է կենարար արեամբ օծելոյ որդւոյն Աստուծոյ: Նոր է և յեկեղեցւոյ պետութեանն կարգ և զայս ի Քրիստոսէ ուսանիմք, զոր առ հրէայսն առաջնորդս ասէր, թէ. «Բարձցի ի ձեռն արքայութիւն Աստուծոյ և տացի ազգի, որ տացէ ի ժամու զպտուղ նորա»****: Նոր է յեկեղեցւոյ և քրիստոնէութեան անուն, և

զայս Մարգարէին յառաջ խոստացաւ Աստուած. «Եւ ծառայից իմոց կոչեցի անուն նոր, որ օրհնեցի ի վերա երկրի»*: Նոր է և յեկեղեցւոյ հաւատացելոց և ծառանգատրաց լոյս, և զայս դարձեալ Առաքեալն ցուցանէ. «Այսուհետև չենք ծառայք, այլ որդիք, ծառանգք Աստուծոյ և ծառանգակիցք Քրիստոսի»*: Նոր է և յեկեղեցւոյ աւետիք արքայութեանն և զայս նոյն ինքն Առաքեալն ուսուցանէ. «Ընդ մեա, ասէ, յարեաք և ընդ մեա նստաք յերկնատրսն ի Քրիստոս»***: Համաձայն սմին և Տէրն ասէ. «Ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի»****: Նոր է և յեկեղեցւոյ խորհուրդ յարութեանն մեռելոց և յայսմ հաւատարիմ միջնորդ, թէ որ ասէ. «Խորհուրդ մի ասեմ ձեզ, ամենեքեան ննջեցուք, այլ ո՛չ ամենեքեան նորոգեցուք, յանկարծակի յական թօթափել, քանզի փող հարկանի և մեռեալք յառնեն առանց ապականութեան և մեք նորոգեցուք»****: Տեսանե՛ս զՔրիստոսի պարգեացն առատութիւն, թէ ո՞րքան բարիս շնորհեաց մեզ, յայս ամենայն հայեցեալ Առաքեալն, ասէ, թէ ամենայն ինչ նովաւ նոր եղև: Արդ՝ այս բարեացս ամենայնի պատճառ և աղբիւր է օրս այս, վասն այնորիկ կոչի նոր: Բայց և սա

ԲԳԴԵԶ յախտեանց Ա յազգաց
ԳԴԵԶ (նոր է և) եկեղեցի (Բ կրկ. և եկեղեցի) փխ. եկեղեցւոյ պատիւ

Ա առաքեալ

Զ եկեղեցւոյ

Ա պաշտաւն

Բ երկրպագանիցեն Ե (երկիր) պագիսնիցեն

Ա հոգով

Ա հայր

Ա վերջստին

Ա թէ փխ. եթէ

ԱԳԴԵ չիք. ի միում ատուր և

Ա բաւանդակ

Զ օծելով

Ա որդւոյն

Ա առաջնորդ (լուսանցքում) կարգք

ԳԴ (ի) Քրիստոսի

Ա հրէայս առաջնորդսն Ե՝ առաջնորդս.

Ա բարձի

ԱԳԴԵ արքայութիւնն

Ա յեկեղեցւոյ

ԱԳԴ քրիստոնէութեանն

* Հմմտ. Կողոս. Ա. 26

** Կողոս. Ա. 24

*** Յովն. Դ. 23

**** Հմմտ. Եւայ. ԿԶ. 3

***** Հմմտ. Մատթ. ԻԱ. 41, 43

Ա չիք որ

Ա յեկեղեցւոյ Զ յեկեղեցւոյն

Ա չիք և (ծառանգատրաց)

Ա առաքեալ

ԲԶ ծառանգակից

Ա յեկեղեցւոյ

Բ արքայութեան ԲԶ չիք ինքն

Զ չիք խորհուրդ

ԲԶ յարութեան

Ա այսմ

Զ չիք միջնորդ

Զ չիք խորհուրդ

ԲԳԴԵԶ նորոգիցուք

ԲԵԶ թօթափելն ԳԴ թօթափիլն

Բ փոել փխ. փող. Զ մեռեալքն

ԳԴ նորոգիցուք

Ե յայսմ Ա առաքեալ

ԳԴ չիք նովաւ

Ե չիք նոր Զ բարեացն

ԲԳԴԵԶ չիք ամենայնի

Ե (վասն) այսորիկ ԲԳԴԵԶ չիք և

* Եւայ. ԿԵ. 15

** Հմմտ. Գաղատ. Դ. 7, Հովմ. Ը. 15

*** Եփես. Բ. 6

**** Հովն. ԺԲ. 26

***** Ա. Կորնթ. ԺԵ. 51

կերպարան է հանդերձեալ աշխարհին: Սա օրինակ է և նա ճշմարտութիւն: Սա անցնելով անցանի և նա յախտեան կայ: Աստ ի մասնէ գիտեմք և ի մասնէ մարգարեանմք և անդ ի կատարումն հասանեմք բարոյն գիտութեամբ: Աստ ի պտղոյ վայելեմք Հոգւոյն, իսկ անդ նոյն ինքն Հոգին սուրբ բնակէ ի մեզ: Աստ գտունկ առաքինութեան տնկեալ սնուցանեմք և անդ զպտուղն կրեալ վայելեմք: Աստ ի հանդիսի կացեալ նահատակիմք և անդ փառօք պսակիմք: Աստ քաղցնումք և անդ յագիմք ի սեղանոյ լիութեան Տեառն: Աստ աղքատանմք հոգւով և անդ ի ծոց արքայութեան ընդունի գմեզ: Աստ հեզութեամք և խոնարհութեամք գնամք, որպէս ուսաքն ի նմանէ, և անդ զարքայութիւն երկնից ժառանգեմք: Աստ ողորմութիւն առնեմք կարօտելոց, որք ի ձեռս մեր հային և անդ չերկինս բարձրութեամք հանդիպիմք ողորմածին Քրիստոսի: Աստ սրբութեամք դաստիարակեմք զսիրտս մեր և անդ յուրջ երեսօք տեսանեմք զԱստուած: Աստ խաղաղարարք առ ամենեւին ցուցանեմք զմեզ և անդ որդիք Աստուծոյ լեալք և ժառանգակիցք Քրիստոսի գտանիմք: Աստ փոքր ի շատէ հալածիմք յաղագս արդարութեան և անդ յարքայութեանն երկնից հանգչիմք հանապազ: Աստ սուգ առնումք և լամք

վասն մեղաց, և անդ խնդամք և ուրախանամք միշտ: Աստ ի պատերազմի արիանամք իբրև զքաջս և անդ պսակիմք իբրև զյաղթողս: Տեսանե՛ս՝ ո՛ր տարաւ եհան զմեզ քանս, տեսանե՛ս՝ ցո՞րքան հրահանգս առաքինութեան եմոյժ ի մեզ տօնիս խորհուրդ: Արդ՝ այստիեան յիշեացուք զԱռաքելոյն զխրատըն, որ հրամայէ. «Ո՛չ կերպարանօք աշխարհիս կերպարանիլ, այլ նորոգիլ միշտ ի նորոգութիւն մտաց և կերպարանիլ ի կերպարանս պատկերի Արարչին մերոյ»* և այս է օրինակ կերպարանին, զակն ողջախոհացուցանել, այսինքն՝ ի ցանկական տեսութենէ խոյս տալ: Ասա՛ ի վերայ ամենայն զգայարանացն և անդամոցն, և ապա ասա՛՝ այսպէս նորոգի մարդ, այսպէս պատուի նաակատեսցս օր, այսպէս մերկանամք զհին մարդն, այսպէս զգեմումք զնորն՝ որ ըստ Աստուծոյն: Զայս օրէնքն դաստիարակեցին, զայս ի մէջ Քրիստոսի և օրինակացն մարգարէքն, զայս հոգևոր օրինացն կատարիչ և կատարած Քրիստոս: Այսորիկ աղագաւ ի ներքս եմոտ փոխանակ հնոյն նորս: Եւ յաղագս ակտիւն, որ յախտիցն կոչեցաւ վասն այնորիկ փայտ հակառակ փայտի և դառնութիւն ճաշակացն՝ յաղագս ճաշակմանն, զի օճն խաչատաակեցի և հեշտութիւնն յաղթեացի, և զԱդամ վերստին կեցուցի կամ

Ա. ճշմարտութիւնն
Ե չիք սա... ճշմարտութիւն
Ա. կա Ե ի սմանէ փխ.
Ի մասնէ
Գ. հասանիմք (բարոյն)
Դ. բարոյն հասանիմք Ա. բարոյն գիտութիւն
Ա. հոգւոյն վայելեմք
Ա.Բ.Գ.Դ.Ե. չիք ինքն Բ չիք ի
Ե տուցանեմք Բ.Զ. զպտուղ
Բ.Գ.Դ.Ե. չիք վայելեմք փխ. պսակիմք
Գ.Դ. քաղցրանում փխ. քաղցնումք Ա. (քաղցը-
նումք) և ծարաւիմք առաքինաբար
Ա. սեղանո
Ա. հոգով Ա.Զ. արքայութեանն
Բ. ուսաք
Ա. չիք ի նմանէ
Գ.Դ. զողորմութիւն
Ա.Ե. որ փխ. որք
Ա. ամենեսեան
Ա. լեալ Ա.Բ.Գ.Դ. ժառանգակից
Բ.Զ. գտանեմք
Ա. յարքայութիւնն Գ.Դ. յարքայութիւնն Բ. յար-
քայութիւն
Գ.Դ. (առնումք) վասն մեղաց և լամք

Գ.Դ. զյաղթօղս
Ե. Էհան
Ա. խորհուրդս
Ա. զառաքելոյ Գ.Դ. զառաքելոցն
Ա. խրատն
Գ. կերպարանել
Ե. նորոգութիւնք
Բ.Գ.Դ.Ե. չիք պատկերի
Բ.Զ. չիք մերոյ
Ա. առտ փխ. առա
Ա. ի վերա... սգայարանացն Բ.Զ. չիք ի վերայ
ամենայն
Բ. անդամացն
Ա. նորոգիմք փխ. նորոգի մարդ
Ե. պատի
Զ. ըզհին
Գ.Դ. Աստուծոյ Ե. այն փխ. Աստուծոյն
Ա. (զայս) մեզ
Զ. մարգարէն
Բ.Գ.Դ.Ե. չիք նորս
Ա. հեշտութեանն յաղթեցէ
Ա. վերջստին Ա.Գ.Դ. չիք կեցուցի կամ Զ. չիք
կեցուցի
* Հմմտ. Հոովմ. ԺԲ 2

կեցուցել և զանկեալն միսանգամ նորոգեցել: Այսոքիկ այսպէս եղելոց պատկանեցո՛ւք ի շնորհէն, լիցո՛ւք հաւատի պահապանք մերոյ փրկութեան, միշտ ի մտի կայցուք զերախտիսն Փրկողին մերոյ, Յիշեցուք զառ ի Պետրոսէ աւանդեալն. «Ոչ թէ արծաթեղինօք կամ

ոսկեղինօք փրկեցաք»*, և այլն, որում վայելէ փառք և իշխանութիւն այժմ և յապայն յանգրաւ յաիտենի: Ամէն:

Ա այսպիսի բանի աւարտէ և փառք. զի շտապս էի: Յիշեցէք զԿր[ակոս] գրագիր զմեղոցեալս Գրի այսպիսի բանի աւարտէ և փառք յաիտեանս ամէն: Վերջ Ե այսպիսի բանի աւարտէ և փառք


Զ անգրաւ


* Հմմտ. Ա. Պետր. Ա 18

Ա այսոքիկ

Զ արծաթեղինօք

Զ ոսկեղինօք ԱԳԴԵ չիք և այլն





ԷԴՎԱՐԴ Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԽՐԱՏՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Խրատն, ընդհանրապես, իբրև հասարակության, անհատի բարոյական դաստիարակության միջոց, սկիզբ է առնում մարդկության քաղաքակրթության հետ միաժամանակ: Հայտնի են հին և միջնադարյան ամենատարբեր լեզուներով ու խմբագրություններով մեզ հասած բազմաթիվ խրատներ, որոնց մի մասը մեծ տարածում է գտել բազմաթիվ ժողովուրդների մոտ: Այդպիսի նշանավոր խրատական գլուխ-գործոցներից են Խիկարի խրատների ժողովածուն, Նուշիրվանի խրատները և այլ ժողովածուներ: Սրանց մեջ հիմնականում քարոզվում են իմաստության, բարության համամարդկային գաղափարներ, որով և թերևս պիտի բացատրել նրանց տարածումը՝ զարգացման ամենամաշափ մակարդակ և ազգային ու կրոնական ամենատարբեր կազմ ունեցող երկրներում: Այդ խրատների բնորոշ կողմերից մեկն էլ այն է, որ սկիզբ դրին գրական նոր տեսակի, խրատական ժանրի: Սակայն, խրատական բովանդակություն ունեցող երկերը ուղղակիորեն չեն առնչվում այդ ժանրին:

*
* *

Խրատը միջնադարում որոշակի չի առանձնացվել: Հայ մատենագրության մի այնպիսի քաջատեղյակ հեղինակ, ինչպիսին Կիրակոս Գանձակեցին է, թվելով Մխիթար Գոշի թողած գրական հուշարձանները, գրում է. «Եթող նա յարձան և յիշատակ գերեզմանի գիրս իմաստախոս»՝ յօգուտ իմաստասիրաց, համառոտ մարգարեութեանն Երեմիայ՝ գեղեցկագիր կարգօք, և սուղ ինչ կանոնս վասն սպաստաորեզոյ մարմնոյ և արեան Տեառն, թե որպէս պատշաճ իցէ կամ

որպիսի կարգօք, և գիրք մի ողբ ի վերայ բնութեանս՝ ի դիմաց Եւայի՝ առ դատերս նորա, և գիրք մի յայտարարութիւն ուղղափառ հաւատոյ՝ ընդդէմ ամենայն հերձուածոց, ի խնդրոյ մեծ զօրավարին Ջաքարէի և եղբօր իւրոյ, և այլ թուղթս խրատականս»¹: Ուշագրավ է, որ հայագետ Հ. Հ. Տաշյանը հնարավոր է համարում, թե Կիրակոսի վերևում նշված «թուղթս խրատականս» գրությունների մեջ, բացի զուտ խրատական գործերից, կարող են հաակացվել նաև Գոշի մյուս գործերը, որոնց մասին դարձյալ ակնարկում է Կիրակոսը. «ցանկացաւ նա հմուտ լինել գրոց արքոց և առակաց խորնոց, որ կան ի նոսա»՝ որ նախընթաց թուղթս խրատական» բառերուն հետ կրնայ առնուիլ Գոշի առակներու հաւաքում մը յօրինելու իմաստով²:

Այստեղ ոչ միայն խրատները, այլև բազմաթիվ այլ արձակ գործեր ժանրային խառնաման չեն եկն թարկվում: Ավելին, բազմաթիվ տարբեր բնույթի և բովանդակության ստեղծագործություններ համարվում են խրատներ:

Եվ իրոք, եթե միջնադարյան արձակի բնագավառում երբեմն խիստ դժվար է, ժամանակակից հասկացողությամբ, առանձնացնել տարբեր ժանրային պատկանելության գործեր, ապա այդ առավել ևս դժվար է խրատների հարցում:

Ի՞նչ է խրատը: Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր գրավոր կամ բանավոր աղբյուր հետևյալ պատասխանն է տալիս. «Հրահանգ, կրթութիւն դաստիա-

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, Վենետիկ, 1865, էջ 115:

² Հ. Հ. Տաշյան, Ժողովածոյք առակաց Վարդանայ, Վիեննա, 1900, էջ 16:

րակություն»։ («Ամուցանիչքը գնուսա (գորդիս) խրատու և ուսմամբ Տեսուն») նաև խորհուրդ («Այսպես տամ քեզ խրատ»), ինչպես և ուսումն, մակացություն, գիտություն։ (քերականություն, և ճարտասանություն և այլոց հանճարող խրատու տեսանք»³, կամ «Պատուէր, հրահանգ, ... Իմաստալից խօսք՝ առածի ձեռով, ... Ուսուցանելու դաստիարակելու միջոցը հին ժամանակ, պատիժ, ծեծ, խտրություն»⁴։ Միջնադարյան հայ մատենագրության մի այնպիսի կոթող, ինչպիսին Մովսես Խորենացուն վերագրվող Պիտոյից գիրքն է, այսպես է բնութագրում խրատները. «խրատ է բան բացատրությանը գլխատերը, յորդորելով յինչ, և կամ հրաժարեցուցանելով»⁵։

ԺԳ դարի նշանավոր հայ խրատագիր Հովհաննես Երզնկացի («Պլուգ»), մի առիթով խոսելով առակի առանձնահատկության մասին, տալիս է մի ձևակերպում, որը որոշ չափով վերաբերում է նաև խրատական գրություններին։

«Արդ, ամենայն գիրք աստուածային առանձին անուորությունները յարդեանցն և յիրացն կոչեցան, որպես Ե գիրքն, Մովսիսի Պատմությունն Արարածոց, Ծնունդ և Ելք և այլով անուամբն մակագրեցան, նշանապետ և այլ գիրք մարգարէիցն, և պատմությունը թագաւորացն, և ի նորս Աւետարանն փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Արդ, ի սոցանէ ոմանք յանուն պատմողացն կոչին, և են, որք յիրացն և յարդեանցն և ի գործոցն զանուանցն կոչումն բերեն յինքեանս։ Իսկ Մովսիսի գիրքս, ոչ այնպէս, այլ առակք անուանեալ կոչի, զի ո՛չ միոյ իրացն նշանակէ, այլ զամենայն խրատ իմաստութեան և խորհրդոյ ունի յինքեան։ Եւ ո՛չ միայն մարգարէութիւն է և ոչ յատուկ պատմութիւն, զի ոչ հայցեաց առ մարգարէութիւն և ոչ թագաւորութիւն, այլ խնդրեաց զիմաստութիւն, որ զամենայն տեսակս բարութեան զինքեան պարունակեալ ունի»⁶։ Այնուհետև Երզնկացին բացատրում է նաև, որ առակների իմաստը չպետք է ուղղակի հասկանալ, այլ այլաբանորեն⁷։

Այս բնորոշումը մեծ չափով համապատասխանում է նաև խրատական բնույթի գործերին։ Իրոք, խրատը ևս որոշակի հարցի չի նվիրվում, այլ ինչպես առակը՝ «զամենայն խրատ իմաստութեան և խորհրդոյ ունի յինքեան»։ Դրանում համոզվելու համար բավական է դիմել հենց իր՝ Երզնկացու խրատական գործերին, որոնցում շոշափվում են ամենաբազմազան հարցեր, ըստ որում, նայած հանգամանքներին, այդ ամենը երբեմն մատուցվում են իբրև խնդրանք, երբեմն՝ խրատ, երբեմն կարգադրություն և այլն։ Հիմնական տարբերությունը թերևս նրանումն է, որ խրատի ի-


մաստը պետք է ուղղակի հասկանալ և ոչ այլաբանությամբ։

Մյուս կարևոր եզրակացությունը՝ վերը բերված հատվածից այն է, որ միջնադարում գրական, գիտական երկերը տարբեր «ժանրերի» էին բաժանվում ոչ այնքան իրենց կառուցվածքային ձևի, որքան բովանդակության առումով։

Այս հանգամանքները կարևոր ենք համարում՝ միջնադարյան բազմաթիվ ճանրերի ու քարոզների շարքում խրատական բնույթ ունեցողները զատորոշելու համար։

Միջնադարում խրատները տարբեր խմբերի են բաժանվել։ Պիտոյից գրքում նրանք անջատված են հետևելալ կերպ. «Եւ խրատուս ոմն է բացասական, որպէս. Պէտք են ընչից։ Եւ ոմն է հրաժարական, որպէս Ոչ է պարտ զամենայն գիշերն քնել։ Եւ ոմն՝ յորդորական, որպէս պարտ է յաղթատութենէ փախչել։ Եւ ոմն՝ պարզ. Մի հաւ՝ քաջ։ Եւ ոմն շարալըծեալ։ Ոչ ի բարոյք բազմիշխանութիւն, մի իշխան եղիցի։ Եւ ոմն՝ առաւելահարաշ։ Ոչինչ տկարագոյն երկիր սնուցանէ քան զմարդ։ Արդ զանազանութիւն այս է խրատուս»⁸։

Հետաքրքիր է, որ դասական այս բաժանումը պահպանվել է նաև 1817 թ. գրված մի ձեռագրում, աղյուսակի ձևով⁹։



Ուշադիր դիտելու դեպքում դժվար չէ համոզվել, որ ինչպես Պիտոյից գրքում, այնպես էլ աղյուսակում եղած տեսակները կարելի է միավորել երեք հիմնական խմբերի մեջ։ Երզնկացին հենց այդպես էլ անում է՝ ըստ նրա խրատները բաժանվում են հետևյալ խմբերի.

ա) Հորդորական, բ) հրաժարական, և գ) միջակային.

«Եւ գիտելի է, զի ամենայն խրատ կա՛մ յորդորական է, կա՛մ հրաժարական և է, որ միջակաբար ունի։ Եւ պարտ է, որ յորդորէ յիրս, նախ զգեղեցկութիւն նորին գովութեամբ ներքողեալ ցուցանէ և զագնուականութիւն փառաց և պատուոյ նորին նազելի առնի, որպէսզի ի ցանկութիւն զմիտս լսողին շարժիցէ։ Իսկ յորմէ հրաժարեցուցանէ զընդիմական նորս

³ Բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, էջ 992։

⁴ Մո. Մալխասեան, Հայերեն բացատրական բառարան, Բ. Բ. Երևան, 1944, էջ 308։

⁵ Յաղագս Պիտոյից, Վենետիկ, 1865, էջ 356։

⁶ Մտղ. ձեռագիր № 2173, ԺԴ դ., էջ 383բ, «Նորին Յոհաննիս Երզնկացու, ի սուրբ առաքելաւն...»։

⁷ Անդ, էջ 364ա։

⁸ Յաղագս Պիտոյից, Վենետիկ, 1865, էջ 356։

⁹ Մտղ. ձեռ. № 353, էջ 296ա։

և զվնասու հետևողաց նորին երևցուցանէ որոյ կարծեօք բարին թուեցեալ լինէր, իսկ միջակ է, որոյ դեմքն ոչ է յայտնի, այլ հասարակաբար զխրատական բանն առաջի դնէ»¹⁰:

Խրատի ընդարձակ հասկացողությունը եթե մի կողմից հնարավոր է դարձնում խրատական գործերի բազմազանությունը, մյուս կողմից օրինաչափ է դարձնում այն հանգամանքը, որ խրատական գործերի համար իրեն ատաղձ ծառայեն ամենաբազմազան գյուտեր: Եվ իրոք, նրանց համար աղբյուր են հանդիսացել Աստվածաշունչը, և՛ Կանոնագիրքը, և՛ սըրբերի ու ժամանակակից վարդապետների երկերն ու ասույթները, և՛ իրական կյանքից ամհատի ու սեռուղիների ստացած փորձը:

Խրատական գործերը հանդես են գալիս երբեմն կանոնական գրության և երբեմն խրատական թղթի (ուղղված որևէ անհատի կամ մի խումբ մարդկանց), երբեմն շրջաբերական թղթի, իսկ երբեմն էլ քարոզի կամ ճառի ձևով:

Խրատների վերջին երկու տեսակը նորությունն չեն և մեր մատենագրությունից կարելի է բերել բազմաթիվ օրինակներ:

Ինչ վերաբերում է առաջին տեսակին՝ կանոնական բնույթի խրատներին, զարգացում է ապրում հատկապես 18-րդ դարից սկսած և նրա խոշոր ներկայացուցիչներից մեկն է Հովհաննես Երզնկացին, ուստի մի փոքր կանգ առնենք պատմա-քաղաքական այն հանգամանքների վրա, որոնք պատճառ դարձան և խթան հանդիսացան խրատների զարգացման և տարածման գործին:

*
* *

Հայտնի է, որ հայ ժողովրդի պայքարն իր գոյության համար արտահայտվել է ոչ միայն զինված դիմադրությամբ, այլև բազմաթիվ այլ միջոցներով, որոնք իրենց նշանակությամբ և հետևանքներով վճռական դարձան մեր հետագա ողջ պատմության ընթացքում: Դրանց շարքում անվերապահորեն դասվում է քրիստոնեության ընդունումը, հայ գրերի գյուտը և այլն:

Սակայն միշտ չէ, որ պայքարն արտահայտվել է այդպիսի խոշոր երևույթներով: Երբեմն այն դրսևավորվել է որևէ գրական երկի կամ ժանրի առաջացմամբ:

5-րդ դարում, գրերի գյուտից անմիջապես հետո, սկսվում է բուն թափով զարգանալ հայ պատմագրությունը, որի նպատակն էր ժողովրդի մեջ վառ պահել ազգային արժանապատվությունը, ազատության և հայրենասիրության ոգին:

Նույն երևույթը նկատելի է նաև 8-րդ դարում, երբ մի կողմից քյուզանդական եկեղեցին, մյուս կողմից հոծ զանգվածներով Հայաստան թափանցող մահմե-

դականությունը իրենց գաղափարախոսություններով որոշակի ապառնալիք էին ներկայացնում Հայաստանին: Այս շրջանում է երևան գալիս Հովհան Օձնեցու խմբագրած կանոնագիրքը:

Անշուշտ, հասարակական կյանքի և օտար բռնակալության դեմ մղած պայքարի անհրաժեշտությունն էր ստիպել Մխիթար Գոշի Դատաստանագրքի երևան գալը: Բացատրելով Դատաստանագրքի երևան գալու պատճառները, նա նշում է, որ Դատաստանագիրքը գրվում է, որպեսզի նախ քրիստոնյաները ստիպված չլինեն դիմելու օտար դատարաններին, և որպեսզի օտարները չմեղադրեն, չժողորեն քրիստոնյաներին, այն բանի համար, թե նրանք իբր դատաստան չունեն:

Գոշը հերքում է քրիստոնյաների մինչ այդ դատաստան չունենալու մասին եղած մեղադրանքը, բայց միաժամանակ ցույց է տալիս, որ իր օրոք եկեղեցական դատարանը, որ հենվում էր զուտ Աստվածաշնչի բարոյագիտության վրա, այլևս անուծ էր իր դերը կատարելու տիրող բարքերի և մտայնության հետևանքով. «Ջի այժմ վասն ծուլութեան ոչ վարժին յօրենսն եւ ի մարգարէսն եւ յաւետարանն, զի ի նոցա զօրութենէն ընտրել կարիցեն զուղի դատաստան. վասն այնորիկ կամեցաք գրով դատաստանիս զնոսա իբրեւ ի քնոյ զարթուցանել», կամ «Ջի այժմ ոչ ներգործէ Հոգին սուրբ, որպէս ի Սաղմոսն կամ ի Դանիէլ, կամ որպէս ի Կորնթացիսն եւ յայլս ճըշմարիտ առնել դատաստան»¹¹:

Այսպիսով, Մխիթար Գոշի Դատաստանագրքի երևան գալու հիմնական պատճառներից մեկը քրիստոնեության բարոյականության և իրավական սկզբունքների նկատմամբ եղած անփութությունն էր: Եվ դա տեղի էր ունենում այն ժամանակ, երբ վաղուց ի վեր Հայաստանում գոյություն ուներ հայոց եկեղեցու Կանոնագիրքը:

Ամբողջ հարցը նրանում է, որ ինչպես Գոշի Դատաստանագիրքը, այնպես էլ կանոնագիրքը լիովին կիրառելի կարող էր լինել միաժամանակ պետականության պայմաններում, մի բան, որ Հայաստանում վաղուց ի վեր գոյություն չունէր:

Այս պարագաներում է, որ 12—18-րդ դարերում հայ իրականության մեջ սկսում են գրվել կանոնական բովանդակությամբ խրատներ:

*
* *

Հայտնի է, որ քրիստոնեության սկզբնավորման առաջին դարերում քրիստոնեության գաղափարախոսությունը համընդհանուր էր: Բայց ժամանակի ընթացքում, տարբեր երկրներում այն պետական կրոն դառնալուց հետո, հասարակության զարգացման հետեւանքով եկեղեցին ինքն էլ է վերակառուցվում, ազգային վարչական կազմակերպչական իմաստով:

¹⁰ Մտղ. ձեռագիր № 2178, էջ 262ա, «Նորին Յոհաննի Երզնկացեոյ, ի խճ աղմոսն Դաթի, ի մեկնողաց բանից յարմարեալ»:

¹¹ Վ. Բատանյան, «Մխիթար Գոշի Դատաստանագիրքը հայոց», Էջմիածին, 1880, Նախադրութիւնը, էջ 10:

Հետագայում, յուրաքանչյուր ազգային եկեղեցի իր հոգևոր ազգային ծեսերն ու սովորույթներն ամրացնում է և նրան իրավական-կանոնական ուժ տալիս: Սա նշանակում է, որ եկեղեցին հանդես է գալիս իրենից սովյալ ազգի համախմբվածության և պետականության ամրապնդման համար պայքարող կենտրոնաձիգ ուժ:

Հայ իրականության մեջ եկեղեցու այս դերն առավել ևս շեշտվում է՝ կապված այն հանգամանքների հետ, որ հայ ժողովուրդը վաղուց ի վեր կորցրել էր իր պետական անկախությունը, և օտարների մոտ նրան հավաքականորեն ներկայացնող միակ կազմակերպությունը մնացել էր եկեղեցին: Այս պայմաններում, հասկանալի է, նա իր վրա պետք է վերցնեց նաև պետականության որոշ իրավունքներ ու պարտականություններ, այսինքն հոգար ժողովրդի ճակատագրի, նրա ֆիզիկական և բարոյական դիմադրողականության բարձրացման, ընկերային տարբեր շերտերի ծալարահղ հակաառությունների հաշտեցման և այլ խնդիրների մասին:

Այս լուրջ խնդիրների իրագործման համար էր նաև, որ դեռևս 5-րդ դարից սկսած, ընդհանուր եկեղեցական օրենքները և կանոնական որոշումները թարգմանելիս, զուտ ազգային-եկեղեցական ժողովներում, սահմանվում էին նաև ինքնուրույն կանոններ, որոնք ի վերջո հավաքվեցին «Կանոնագիր հայոց» ժողովածուի մեջ:

